

ԳԻՐԳԱՄԵՆ



ԵՐԵՎԱՆ 1963





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГИЛЬГАМЕШ
ЭПОС ДРЕВНЕГО ВОСТОКА

Перевод и предисловие
НШАНА МАРТИРОСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

398.22(3-11)


Գ

Գ Ի Լ Գ Ա Մ Ե Շ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼԻՔԻ ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊ

Թարգմանությունը և ներածականը
ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

A 4832



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ


1963

«Գիլգամեշ» դյուցազներգությունը՝ մարդկության գրական կոթողներից հնագույնը, համաշխարհային մշակութի ամենահույակապ նմուշների թվին է պատկանում: Ժամանակակից իրականության վառ նկարագրությամբ այն ընթերցողին տանում է դեպի պատմության վաղ փուլերը, երբ մարդկությունը իր առաջին քայլերն էր անում քաղաքակրթության բնագավառում: Բայց երկի արժեքը շատ ավելի մեծ է: Իր գրական-գեղարվեստական գերազանց արժանիքների հետ մեկտեղ, որոնք իր ժամանակին դրսևավորվելով հատուկ ձևով, այսօր էլ ընկալելի են մեկ համար և ընդունակ գեղարվեստական հաճույք պատճառելու:

Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ի Տ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Աշխարհահռչակ «Գիլգամեշ» դյուցազնավեպի ներկա թարգմանությունը, որը կատարել է Նշան Մսիսիբուսյանը արևմտահայ լեզվով արձակ փոխադրություն է՝ օտար լեզուներով հրապարակված թարգմանությունների լայն օգտագործմամբ: Լրացնելով հայ թարգմանական գրականության խոշոր բացը՝ «Գիլգամեշ»-ի ներկա հրատարակությունը, սակայն, պետք է դիտվի որպես հաննարեղ դյուցազնավեպը ավելի մեծ հարազատությամբ հայ ընթերցողին հասցնելու նախնական մի փորձ, որը նաևապարհ կհարթի հետագայում ակկադերեն բնագրից կատարվելիք գիտական թարգմանության համար:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՔԱՆԻ ՄՐ ԽՈՍՔ

«ԳԻՒԳԱՄԵՇ» ԳՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ,

Ուրուկի քաջարի և իմաստուն արքային՝ Գիլգամեշի բախտախնդրական կյանքին և քաջագործությանը նվիրված էպոսը գրված է սումերական ծագում ունեցող սեպագրով՝ պնակիտներու վրա, ակկադերենով, որ սեմական ցեղախմբին պատկանող բաբելոնացիներու և ասորեստանցիներու գործածական լեզուն էր:

Պնակիտներու մեծագույն մասը գտնված է Ասորեստանի թագավոր Աշշուրբանիպալի (668—626 թթ. մ.թ.ա.) մայրաքաղաքին՝ Նինվեի արքունի դիվանատան հարուստ բևեռագրական հավաքածոյին մեջ, ասկէ մոտավորապէս 80 տարի առաջ:

Վերոհիշյալ երկու ազգերը, որոնք թեև ցեղային և լեզվական որևէ կապ չունին Միջագետքի սումերացիներու հետ, բայց և այնպէս ժառանգած են անոնց բարգավաճ երկրին՝ Սումերաստանին հետ նաև անոնց բարձր մշակույթը և քաղաքակրթութիւնը: Սումերական այս դիւցազներգութիւնը, որ աշխարհիս ամենահնագույն գեղարվեստական գրականութեան գոհարն է, նախ՝ մ.թ.ա. XX դարուն և հետո Բաբելստանի խելացի արքայի՝ Խամմուրաբիի իշխանութեան ժամանակ (XVIII դար մ.թ.ա.) ակկադերենի վերածված է և բաժանված տասներկու դրվագներու: Ասորեստանի և Փոքր Ասիոյ պանապան կողմերը դեռ երկար ժամանակ պահպանված է ան, ինչպէս կը վկայեն

VI դարուն (մ.թ.ա.) անկե ընդօրինակված երկու ֆրագմենտներ, որոնք հայտնաբերված են հնագիտական պեղումներու ընթացքին Վարկայի ավերակներուն մեջ, հոն ուր կը գտնվեր երբեմնի դյուցազնական Գիլգամեշի պարսպապատ Ուրուլը, Աստվածաշնչի էրեխը:

Խատտուշայի, երբեմնի լայնատարած հեթական հւշոր կայսրության մայրաքաղաքին, ներկա Բողալքետյի, ավերակներուն տակ թաղված արքայական դիվանին մեջ, գերմանացի արևելաբան և հնախուլլ Հ. Վինկլերի և Օ. Պուխշտայնի կողմն գտնված են «Գիլգամեշ» դյուցազնավեպին մեծ ու փոքր բեկորները, որոնք գրված են հեթերեոսով և խուրրերեոսով: Այսպիսով, մինչև այսօր Գիլգամեշի դյուցազներգությունը ծանոթ է չորս հնագույն լեզուներով—սումերեոսով, ակկադերեոսով, հեթերեոսով և խուրրերեոսով: Շատ հավանական է, որ ան կարգ մը ուրիշ փոքրասիրական լեզուներու ալ (խատտերենի, պալայերենի, խայերենի¹, լուվերենի կամ արծալերենի)՝ վերածված ըլլա, բայց ցարդ բեկոր մը իսկ գտնված չէ այս վերջին լեզուներով:

Գիլգամեշի, Էնկիդուի և Խումբաբայի պոույցները, սիրված ու տարածված ըլլալով հնագույն Մերձարևելքի այլացեղ ու այլալեզու ժողովուրդներու մեջ, բերանացի ավանդութամբ դարերով պահված մնացին՝ սերունդէ-սերունդ, ցեղէ-ցեղ և երկրե-երկիր անցնելով:

«Գիլգամեշ» դյուցազնավեպին նյութը մասամբ, հավանաբար, առնված է վաղեմի ժամանակներէ մնացած փոքրասիրական ժողովրդական հերոսապատումներն և պոույցներէ: Սումերացի

¹ Խայերենը կամ խայաերենը Խայաշա (Խայաներու երկիրը, Խայաստան) բնակվող խայա կոչված տեղաբնիկ ժողովրդին լեզուն է, որ, ըստ իս մեր նախնյաց լեզուն է, հայերենը, որուն ենթախաւը փոքրասիրական ծագում ունի: (Տն՝ս Ն. Մարտիրոսյան, Հայերենի հարաբերությունը հեթերենի հետ, «Հանդես Ամսօրյա» 1924, թիվ 9—10, էջ 443, 1926, թիվ 7—8, էջ 369):

հանճարեղ բանաստեղծը, որուն անունը տակավին մեզի անհայտ կը մնա, հալաքած ու գրի առած է վանոնք մեծ վարպետությամբ, տալով անոնց կշռույթ և երաժշտականություն:

Ինչպես կերևի, այս դյուցազնավեպը ժամանակին երգելով կը կարդացվեր և կամ ուղղակի կերգվեր գուսաններու կողմն: Գիլգամեշի, Էնկիդուի և ամեղ խումբաբայի պոռնյցները ու առասպելները սումերացիներու երկրեն, Միջագետքեն մուտք գործած են դեպի Բաբելոն, Ասորեստան, Հեթաստան, խուրրիներու երկիրը, Իսրայել, Հայաստան (Նալաշա)¹, Արաբիա, Հնդկաստան, Հունաստան, Իտալիա և ուրիշ երկրներ, ուր անոնք վանազան ձևերով յուրացված և ազգայնացված են:

Սումերացիներուն լեզվով խմբագրված կտորներեն մինչև այժմ հինգ-վեց պնակիտ գտնված են սումերական քաղաքներ Կիշ-Սուրսագ-Կուլամայի և Նիպպուրի պեղումների ժամանակ: Այս պնակիտներուն շնորհիվ կարելի եղավ «Գիլգամեշ» դյուցազնավեպին տասներկուերորդ դրվագը մասամբ մը լրացնել:

Ըստ ավանդության, Գիլգամեշ կը պատկաներ ուրուկյան առաջին հարստության, որուն հիմնադիրը արև-աստծո որդին՝ Մեսկինգաշերն էր: Անոր հաջորդներն էին իր տոհմին պատկանող Էնմեկարը, Լուգալբանդան, Գիլգամեշը (Կուլաբի նախկին քրմապետը, որ 126 տարի իշխած է), Ուր-Նունգալը (Գիլգամեշի որդին, որ միայն 15 տարի իշխած է): Միևնույն տոհմն սերող իշխաններու այս հաջորդությունը, ըստ Բ. Հրոպնիի, 2310 տարի տևած է:

¹ Երբեք վարմանայի չէ, որ «Գիլգամեշ» դյուցազնավեպին գլխավոր հերոսներուն՝ խումբաբայի և քաջ Էնկիդուի անունները խուրբարուկ, խուլպապուկ, Հեոնիտյու, Հեոնտու (Հեոնդու) ձևերով մինչև այսօր պահված են արևմտահայերու մոտ: Այս մասին տե՛ս «Պատմություն Անթեպի Հայոց» զավառական քառարանը, ուր առաջ բերված են վերոհիշյալ անունները:

Գերմանացի ասորաբան և արևելագետ Պետրը Իենսըն կը գրե. «Գիլգամեշ» դյուցազներգությունը բաբելոնացիներու համար եղած է այն, ինչ որ Աստվածաշունչը մեկ էամար»: Եբրայեցիք «Գիլգամեշ» դյուցազնավեպեն բավմաթիվ նյութեր, օրինակի համար՝ Սումերստանի մեջ ժամանակին տեղի ունեցած ջրհեղեղի ու Ուտնապիշտիմի՝ բաբելոնացիներու Նոյ նահապետին պատմությունը յուրացնելով, իրենց հին կտակարանին կամ Ս. Գիրքին միջոցով փոխանցած են նաև քրիստոնեությունը ընդունող բոլոր ազգերուն»:

Համեմատական ուսումնասիրությամբ Իենսըն կրցավ փաստացի կերպով ապացուցանել, որ Հոմերոսի դյուցազնական վիպերգությունները՝ «Իլիականը» և «Ոդիսականը» «Գիլգամեշ» դյուցազներգության հետ սերտ առնչություն և ներքին ազակցություն ալ ունին, հանգամանք մը, որով երևան ելավ, որ հունիացի Հոմերոսն ալ իր վերոհիշյալ էպոսներուն նյութը և կերպարները երրորդ հապարամյակեն և կամ ուղղակի «Գիլգամեշ» դյուցազնավեպեն առած է. հերոսներուն տալով հունական անուններ և իր բանաստեղծության նոր տարապ¹:

Ուրեմն VIII կամ VII դարուն մեր թվականութենեն առաջ² Հո-

¹ Այստեղ արծարծված տեսակետը իր ժամանակ լայն տարածում գտած պանբաբելոնիզմի արտահայտությունն է. 19-րդ դ. կատարված բավմաթիվ պեղումներից ստացված տվյալները վկայում են, որ տրովական պատերազմը պատմական իրողություն է: Իսկ հոմերոսյան տեղեկությունները առնչված են այդ պատմական իրողության հետ: Խմբ.:

² Հոմերագեռների մեծամասնությունն այն կարծիքին է, որ «Իլիականի» և «Ոդիսականի» հեղինակը՝ բանաստեղծ Հոմերոսը ապրել է X կամ IX դարում մեր թվականությունից առաջ, իսկ տրովական պատերազմը տեղի է ունեցել մոտավորապես XIII—XII դարերում մ.թ.ա.: Խմբ.:

մերին ծանոթ էին Փոքր Ասիո Գիլգամեշյան պոույցները, պահված գրավոր, կամ բերանացի ավանդությամբ:

Փոքր Ասիո հնագույն ալգերն ալ, երբ «Գիլգամեշ» դյուցապետնալեպը կամ ա՛որ մաս կալմող առանձին լեգենդները թարգմանել կամ ասոդ հետևությամբ նոր դյուցապետագություններ ստեղծել են, հաճախ փոխված են հերոսներուն անունները. «Գիլգամեշ» եղած է «Գիշ» կամ «Գիլգամաշ», հայերու մոտ՝ հավանաբար «Տորք»:

Մեր անմահ պատմահոր՝ Մովսես Խորենացիի կողմե հինգերորդ դարուն գրի առնված և կորուստե փրկված Տորքի երկու պոույցները որոնց կորիպը անկասկած անհիշատակ ժամանակներե մնացած է, հավանաբար Գիլգամեշի դյուցապետալեպին հետ սերտ առնչություն ունեցող փշրանքներ են, որոնք բերնե բերան ավանդվելով պահված են Հայաստանի մեջ մինչև Խորենացիի օրերը¹:

Նաև Ղազարոս Աղայանի հավաքած և «Տորք Անգեղ» խորագրով հրատարակած երկը կալմված է Տորքին վերագրված հինգ ժողովրդական պոույցներե, որոնցմե երկուքը նման են Խորենացիի մոտ հիշատակված Տորքյան առասպելներուն և մյուս երեքն ալ պահված են անգիր ավանդությամբ: Այս ժողովրդական առասպելները և պոույցները մոտեն կամ հեռվեն կապ ունին «Գիլգամեշ» դյուցապետալեպին հետ: «Գիլգամեշ» դյուցապետագության 12-րդ դրվագին մեջ կը պատմվի, թե ինչպես քաջարի Գիլգամեշ հաստաբուն ծառը արմատով մեկտեղ հանած և ուսը առնելով գյուղաքաղաք բերած է, պարմանք պատճառելով բնակիչներուն: Վերև հիշված հայ ժողովրդական ավանդության համաձայն, միևնույն բանը ըրած է Անգեղի դժնահայաց Տորքը՝ հայկական, կամ ավելի ճիշտը՝ հնագույն Փոքր Ասիո ժողովրդական

¹ Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Բ, 8:

առասպելներու հերոսը, իր գերմարդկային ուժը հասարակության
ցույց տալու համար¹:

Մեր բերթողահայրը, նկարագրելով Տորքի պատկանելի կեր-
պարանքն ու զգրմադկային ուժը, կը պատմե, որ ան Սագծիկեն
(Ռոստոմեն) և Հերակլեսեն շատ ավելի ուժով եղած է: Խորե-
նացիի պատմածին համաձայն, Տորքը բլուրի մը չափ խոշոր քա-
րեր թշնամի նավերուն վրա նետելով, կընկղմեր պանոնք և աղ-
պիսով կը փրկեր ժողովուրդը չարագործներու ու ծովահեններու
դաժան արարքներեն: Շատ հետաքրքրական և մշակութային
պատմության հաճար հույժ կարևոր է Խորենացիի «Հայոց Պատ-
մության» այն հատվածը, ուր ան մեզի հավատարմորեն կը պատ-
մե ժողովուրդեն լսածը, թե ինչպես Տորքը, խոշոր քարերը ճեղ-
քելով, պանոնք սալերու և կամ քարե տախտակներու կը վերածեր
ու անոնց վրա արծիվի և ուրիշ կենդանիներու և առարկաներու
պատկերները կը փորագրեր: Այսօր բոլորովին պարզ է, որ
«Պատմություն Հայոց»-ի մեջ եղած ականակությունը՝ կենդանի-
ներու և առարկաներու պատկերներե բաղկացած փոքրասիական
մեհենադրոշմներու մասին է, որոնք գործածված են սեպագրի
կողբին Փոքր Ասիո մեջ շարք մը հին ապգերու կողմե երկրորդ

¹ Խորենացիի Տորքը հնագույն Մերձարևելքի մեջ պաշտված
դյուցազն մըն է, որուն անունը հաճախ հիշատակված է հեթա-
կան բնեագրությանց մեջ՝ Տարկու, Տարխու ձևերով, որ հեթ.
տարիս—«կարենալ», բայարմատին և տարխուիլիշ «կարող», «հե-
րոսական», «հսկայական», և տարխուիլատար «կարողություն»,
«հերոսություն», «քաջություն» բառերուն հետ կապ ունի: Իսկ
Անգեղ (Անգղ) փոքրասիական աշխարհագրական անուն մըն է,
որ Իշուվալի (Մոփք) մեջ գտնված հեթ. Ինգալավա տեղանունին
կը համապատասխանե: Այս մասին տե՛ս ռատմասիրությունս՝
„Altarmeniche Überlieferungen über Tork“, Archiv orien-
tální հատ. Բ, 1930 (Պրագա) և «Հայ տեղանուններու շուրջ»,
«Կյանք և գիր» Տարեգիրք, 1948, էջ. 119:

և առաջին հալարամյակներու ընթացքին մեր թվականութենն առաջ:

Սումերացի հագներգուն կը ներկայացնեն մեզի միայն իր հերոսներուն՝ Գիլգամեշի և Էնկիդուի ֆիզիկական ուժը, չարքաշությունը ու մարտնչումները: Մինչդեռ խորենացիի Անգեղ Տորքը միևնույն ատեն քարե տախտակ շինելու և անոր վրա մեհենադրոշմներ փորագրելու նուրբ արվեստին հմուտ դպիր մըն է:

Կողմնակի պետք է հոս նշել, որ նաև «Սասունցի Դավիթ» դյուցապներգությունն ալ «Գիլգամեշ» դյուցապնավեպին ազդեցությունը կրած է, բայց այս մասին ուրիշ առթիվ:

«Գիլգամեշ» էպոսը, որ դիցաբանական բնույթ ունի, կը պատմեն մեզի կիսաստվածային խրոխտ դյուցապնի մը մասին, որ տիտանի մը պես կը ծառանա հին աստվածներու դեմ, փոխանակ հպատակելու, կը մերժեն Իշտար դիցուհիի սիրո առաջարկը: Դեռ ավելին, առաջին մարդն է, որ կը փորձեն կորվել կյանքի և մահվան, աստվածային դրախտի և դժոխքի գաղտնիքները, մտնելով լուսո, արդարության և ճշմարտության տեր, արև-աստված Շամաշի ծառայության մեջ:

Եվ թեպետ Գիլգամեշը անսահման դժվարությանց և վտանգներու դեմ հաղթականորեն պայքարեցավ, թեպետ ինքն ալ երկու երրորդով աստված և մեկ երրորդով մարդ էր, բայց և այնպես չկրցավ ձեռք բերել հավերժական կյանքն և անմահությունը, որուն այնքան կը ցանկար, ու վերջապես ինքն ալ պարսպապատ Ուրուկի հվոր արքան, ստիպվեցավ համակերպել մահկանացուներու ճակատագրին:

Ահա «Գիլգամեշ» դյուցապներգության հակիրճ բովանդակությունը:

Հարավային Բաբելոնի՝ ամենահին քաղաքներեն մեկը՝ Ուրուկ կը ճնշվի Գիլգամեշ արքային կողմն, որ մայրաքաղաքին պատնեշները շինել կու տա իր հպատակներուն:

Աստվածներու հրամանին անսալով, Արուրու դիցուհին հոդեն վայրի կերպարանքով ուժեղ հսկա մը կը ստեղծեն Էնկիդու

անունով, որուն ոչ միայն գլուխը, այլև ամբողջ մարմինը մալով է ծածկված: Ընկիղու, որ քաղաքի մարդոց թշնամի է դաշտավայրերու մեջ ւսպրող անասուններու պաշտպանը կը նկատվի, միշտ անոնց հետ լեռները կարածի ու կը թափաթի:

Որտորդ մը, որուն Ընկիղու միշտ արգելք կըլլա, Ուրուկի Իշտարի տաճարեն գեղեցիկ քրմուհի մը ամենելով, տափաստանները կերթա և ջուրին քով կը սպասե: Երբ Ընկիղու վիթերուն հետ ջուր խմելու կու գա, կը նշմարե մերկ ու զրգթիչ ցնծուհին, որ իր տեսքովն ու գեղովը ծաղիկի մը պես կը հրասպուրե պայն և իրեն քով կը տանի:

Գեռատի քրմուհին վեց օր և յոթը գիշեր զինարբուք սարքելե հետո, կը համուպե և Ուրուկ կը տանի լեռներու հսկան՝ Ընկիղուն: Գիլգամեշի ոստանը՝ Ուրուկ ցնծության մեջ է: Ընկիղուի գալուստը կը տոնե: Իշտար դիցունիին ննջարանին դուռը կը բացվի և Գիլգամեշ կուպե ներս ստանել: Բայց նորեկ Ընկիղուն արգելք կըլլա: Վստր վրա երկու հսկաները կը գտնեմարտին: Ուժի այս փորձը կատարվելե հետո, երկու հերոսները Գիլգամեշը և Ընկիղուն սերտ բարեկամություն կը հաստատեն ու կորոշեն Լիբանանի լեռնեռը, մայրիի անտառներուն մեջ ապրող ճիվաղը՝ Խումբաբան սպանել: Երկար ատեն փնտրելե հետո վերջապես կը գտնեն ու կը սպանեն:

Վավաշտ Իշտար դիցունիին սիրո առաջարկ կընե երկիրը սարսափապղու Խումբաբայի և չար դևերու տանջանքեն փրկող քաջ Գիլգամեշի, որ արհամարհանքով կը մերժե անոր առաջարկը, քաջաբար հիշեցնելով Իշտարի նախկին վեց սիրեկանները, որոնք վերջին դժբախտության մատնված են: Իշտար պարանալով, իր հորը՝ Անուին կը դիմե ու կը գանգատի խորխտ Գիլգամեշեն, պահանջելով, որ դիցահայրը երկնային վայրի ցուլ մը ստեղծե ու երկիր դրկե, որպեսպի Գիլգամեշի դեմ ելնե: Երկնադից Անու թեև նախապես կը հակառակի Իշտարի այս պահանջին, որովհետև ցուլի մը երևումը աշխարհիս վրա յոթը տարի սովի պատճառ կրնա ըլլալ, բայց և այնպես վիթխարի ցուլ մը

ստեղծելով, դուստրին՝ Իշտարի կը հանձնէ, որպեսպի Գիլգամեշը սպանն: Գիլգամեշ, իր սրտակից բարեկամը՝ Էնկիդու այս երկնա-լին ցուլն ալ երկար մարտնչումն մը հետո կը սպաննն: Այս առ-թիվ Ուրուկի մեջ ուրախության տոն մը տեղի կունենա:

Էնկիդուն գիշերը գեշ երապ կը տեսնէ աստվածներու խորհրդակցության մասին, որուն ընթացքին Էնլիլ, աստվածնե-րուն ամենամեծը, արև-աստված Շամաշի կը հայտնէ, որ Էնկիդուն պետք է մեռնի: Ասոր վրա Էնկիդուն իսկապես կը մեռնի, անհուն թախիծ ու վիշտ պատճառելով իր սիրելի ընկերոջ՝ Գիլգամեշին:

Գիլգամեշ իր հավատարիմ և անկեղծ բարեկամին մահեն հետո կը սկսի խորհիլ կյանքի և մահվան հարցի մասին: Խռովված մահվան երկյուղեն, կը դիմէ նախահոր՝ Ուտնապիշտիմին, Բաբելստանի ջրհեղեղի հերոսին, որպեսպի անորմէ կյանքի և մահ-վան գաղտնիքը իմանա: Գիլգամեշ անապատային և լեռնային ճամփաներն անցնելով կը հասնի Մաշու լեռը, որուն ստորոտը ահեղ կարիծ-մարդոց կը հանդիպի, որոնք լեռան մուտքին վրա կը հսկեն: Երկար ու դժվարին ճամփորդությունն և խարխափում-ներն ետք, վերջապես կանցնի Մաշու լեռան խորուղիեն ու կը հասնի մեհենակ:սն անտառ մը, որուն չքնաղագեղ ծառերուն ճյուղերեն կախված են գուլնզգուլն ականիվ քարեր:

Հոն կը նշմարե մատուզակ Սիդուրին, որ աստվածներուն անմահական ըմպելիք կը բաշխէ:

Սիդուրին պայն Ուտնապիշտիմի նախկին նավորդ Ուրշանաբիին կը դրկէ, որ այնքան ալ հեռու չէ: Ուրշանաբիի հրահանգին հա-մաձայն, Գիլգամեշ 60 կանգուննոց 120 ձող կը բերե նավավարին և հետո անոր հետ միասին ծովը ճեղքելով Ուտնապիշտիմի քով կերթան: Նախապես առանց արգելքի իրենց ճամփան կը շարունա-կեն, բայց հետո «մահվան ջուրերուն» մեջ ճամփորդելը վտան-գավոր կը դառնա: Անհամար դժվարություններն հետո Գիլգամեշ վերջապես Ուտնապիշտիմի քով կը հասնի, կենաց և մահու մա-սին տեղեկություն քաղելու համար: Ուտնապիշտիմը՝ բաբելացի-ներու Նոյ նահապետին տված տեղեկությունները կյանքի և մահ-

վան մասին մխիթարական չեն. բոլոր մարդիկ պետք է մեռնին, նաև Գիլգամեշ: Գիլգամեշի հարցումին վրա թե ինքը՝ Ուտնապիշտիմը ինչպես հավիտենական կյանքի արժանացած է, այս վերջինը կը պատմե իրեն ջրհեղեղի պատմությունը և կըսե, որ ինքը և իր կինը ջրհե լճը վերապրելն հետո, աստվածացած են և աստվածներու բնակչւթայրը, երանելիներու կղզին փոխադրված: Ուտնապիշտիմ և իր կինը ցավելով իրենց վարմիկին հոգեկան վիճակին վրա, կուպեն կերպով մը օգտակար ըլլալ իրեն: Խորհուրդ կուտան, որ Գիլգամեշ 6 ցերեկ և 7 գիշեր արթուն մնա կյանքը գտնելու համար, բայց հանկարծ քունը կը տանի: Ուտնապիշտիմի բարի կինը խորհրդանշան յոթը հաց կեփե և Գիլգամեշի բարձին տակը կը դնե, որպեսպի դևերը չխանգարեն:

Ուտնապիշտիմ խորհուրդ կու տա Գիլգամեշի, նորեն երկիր վերդառնալ ու կարեկցելով, կըսե անոր «կենաց ծառին» բուսած տեղը, հրաշագործ բույս մը, որուն պտուղը ուտողը հավիտենապես երիտասարդ կը մնա և նույնիսկ, երբ ծերը ուտե այդ կենարար բույսին պտուղը, կերիտասարդանա:

Գիլգամեշ իր նպատակին կհասնի. կենարար բույսը կը գտնե ծովի խորխորատում, բայց, ավա՛ղ, վերադարձին, երբ Գիլգամեշ լճակի մը մեջ լողանք կընե, օձը՝ մարդու թշնամին, այդ հրաշագործ տունկը կը հափշտակե ու Գիլգամեշի անմահության վեսմ երապը կը ցնդի:

Ահա այդ է պատճառը, որ օձը տարին անգամ մը շապիկը փոխելով կերիտասարդանա:

Գիլգամեշի գլխավոր հերոս Գիլգամեշ իր «հավերժական կյանքի» մեջ հուսախաբ ըլլալով, կը փափագի տեսնել իր հանգուցյալ բարեկամը՝ Էնկիդու: Երկար պաղատանքներն հետո մարդասեր Չան կը հրամայե մահվան աստված Ներգալին, հողին տակեն վեր բերել Էնկիդուի ուրվականը, որպեսպի Գիլգամեշ ուղղակի իր սիրելի բարեկամին բերնեն իմանա մեռելներու վիճակը անդրաշխարհին մեջ: Գիլգամեշ կիմանա, բայց հուսախաբ կըլլա:

* * *

Ավելորդ չեմ համարեր հոս փոքրիկ ծանոթություն մը տալ «Գիլգամեշ» դյուցապներգության նախերգանքի մասին, որուն բնագիր պնակիտը դժբախտաբար դեռ կը պակսի:

Ահա՛ այդ նախերգանքը՝

Կար ու չկար հին ժամանակ, արքա մը կար
Ուրուկ բերդի տերն. անունովը՝ Էնմեկար:

Բախտագուշակ քուրմերն իրեն ավետեցին.

«Քու աղջիկը մանչ պավակ մը պիտի բերե.

Որ քու գահը քեզմե պիտի հափշտակե»:

Վախցավ արքան և մատնված ահ ու դողի
Հրամայեց իր աղջիկը բանտում փակել,

Ու խիստ հսկել, որ անկատար մնա հավետ

Իր քուրմերու գուշակությունը դառնաղետ:

Բայց ո՞վ կրնա փոխել վճիռն աստվածներուն,

Ծնավ շուտորը արու պավակ գաղտնաթաքուն:

Բանտապանները վախցան տիրոջ քենեն:

Եվ նետեցին նորածինը մի խոր անդունդ:

Արծիվ մը, որ սուր հայացքով կդիտեր վերեն,

Բռնեց տղեկն գետին չինկած, բռնցուց ուսին,

Եվ տանելով նրան պարտեպ, արմավենուտ

Զգուշությամբ և փափկությամբ դրավ գետին:

Պարտիվպանը տեսավ մանկիկն այդ գեղուգեշ


Սիրեց, զգվեց և անվանեց վայն Գիլգամեշ:

Մեծցավ տղեկն, եղավ կտրիճ մի տղամարդ,

Խլեց գահը իր մեծ-հորմեն, Էնմեկարեն:

Վճիռն այդպես կկատարվի՝ երկնորեն միշտ:

A 4832



Դոկտոր Ալբերտ Շոտտը¹ այս «նախերգանքը» քաղվածաբար առած ու թարգմանած է Կլավդիոս Էլիանոսի կողմն հունարեն գրված «Պատմություններ անասուններու մասին» գրքեն: Հռովմեկան այս գրողը, որ մ.թ. 2-րդ դարում ապրած է, գրի առած և իր գրքին կցած է Գիլգամեշի ծնունդին և մանկության վերաբերող ժողովրդական այս գողտրիկ պոույցը, որ ավանդությանբ պահպանված ու հավարամյակներու ընթացքին տարածված է ոչ միայն արևելյան երկիրներու, այլ նաև Եվրոպայի և Աֆրիկայի մեջ գաղթողներու միջոցով: Մինչև այսօր ալ Մերձարևելքի մեջ վանական ձևերով ու լեզուներով (հայերեն, թուրքերեն, հունարեն և այլն) կը պատմվին այսպիսի կամ ասոր նման ժողովրդական առասպելներ, որոնք մոտեն կամ հեռվեն կնայ ունին «Գիլգամեշ» դյուցապնավեպին մաս կապմող պոույցներուն հետ: Էլիանոսի կողմն հավաքված ու կորուստե փրկված այս գեղեցիկ ավանդություններեն մին, որ Ալ. Շոտտը թարգմանաբար առաջ բերած է «Գիլգամեշ» էպոսի սկզբում իբրև «Նախերգանք», և ես ալ վայն առ ի չգոյե հայացուցած եմ, անկասկած «Գիլգամեշ» դյուցապներգության փշրանքներեն մին է, որովհետև ըլլա նյութը, ըլլա սումեր-ակկադյան նախատիպարը, հակառակ աղավաղումներու, անոր մեջ դեռ աղոտ կերպով ի հատուկու գան: Օր մըն ալ անշուշտ այս նախերգանքը պարունակող կամ անոր համապատասխանող սեպագիր պնակիտը պեղումներու ընթացքին կամ պատահմամբ, երևան պիտի գա, դյուցապնավեպին մաս կապմող ուրիշ բեկորներու նման:

¹ Albert Schott, Das Gilgamesch Epos (Redams Universal Bibliothek, № 14 7235), էջ 14:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Պ Ն Ա Կ Ի Տ

Ան էր, որ ամեն բան տեսավ աշխարհիս վրա. ամեն ինչ ճանչցավ, ամենամութ գործերուն իսկ թափանցեց, իմաստությունը ունեցավ մարդոց կյանքն ու դործը ըմբռնելու. գաղտնի և թաքուն բաները լույս աշխարհ բերավ: Ան էր, որ նախաշրհեղեղյան ժամանակեն լուր բերավ մեզի, հեռավոր և վտանգավոր ճամփաներ կտրեց, երկար ժամանակ թափառեցավ և հոգնեցավ, իր բոլոր տառապանքները ու քաջագործությունները կարծր քարե սալերուն վրա սեպած և նշաններով փորագրեց:

Ան՝ Գիլգամեշ, Ուրուկ քաղաքին պարիսպները շինել տվավ: Ահա տե՛ս, բուրգի նման բարձրացած է նվիրական էաննան՝ Իշտարի ամրակուռ տաճարը, որուն հիմը ապառաժ քարի նման նստած է: Դիտե անոր պատերուն ներքնամասերը, ուր վաղեմի ժամանակներե ի վեր կը փայլին անոր զարդարանքները:

Մոտեցիր Իշտարի բազինին, որուն նմանը ասկե առաջ ոչ մեկ թագավոր և ոչ մեկ մարդ չէ շինած:

Բարձրացիր նաև Ուրուկի պարիսպներուն վրա և լավ մը քննե անոր շինվածքը. թե իսկապե՞ս թրծված աղյուսներե կերտված է, թե արդյոք յոթը իմաստունները դրած շե՞ն անոր հիմը:

Երկնային դիցահոր բնական հոյակապ և բարձրաքանդակ շենքին տակը կը տարածվի քաղաքին ցորենի ընդարձակ շտեմարանը: Թագավորին ճեմակ և փառավոր պալատը լույսերուն մեջ կը շողա: Պահապանները դիշեր ցերեկ պարիսպներու վրա կը հսկեն:

Գիլգամեշ ստեղծված է ամբողջությամբ դյուցազնի մը կերպարանքով: Աստվածներն են ստեղծել զայն. արև-աստված Շամաշը տված է անոր զեղեցկություն, Ադադը շնորհած է անոր դյուցազնական իմացականություն: Մեծ աստվածները Գիլգամեշին շնորհած են նաև փառահեղ հասակ մը՝ տասնևմեկ կանգուն, կուրծքին լայնքը՝ ինը թիզ:

Գիլգամեշ մեկ երրորդով մարդ և երկու երրորդով աստված է իր էությամբ: Մեծ զարմանքով ու պատկառանքով կը նային մարդիկ անոր կերպարանքին ու կազմին: Կը նմանի վայրի ցուլի մը իր վեհաշուք քալվածքով: Ոսոխներեն որևէ մեկը հավասար չէ անոր: Իր հպատակ ժողովուրդը վրդովված է. — ուժգնորեն կը լսվի Ուրուկի բնակիչների գոռոմ-գոչումը: Գիլգամեշ տղան հորը քով չի ձգեր: Գիշեր ցերեկ կը սպառնա ժողովրդին: Գիլգամեշն է Ուրուկ քաղաքին հզոր հովիվ, վեհ և իմաս-



Գիլգամեշը

տուն: Ան կը ճնշե կույսը իր սիրականին, շի թողուր, որ կինը իր ամուսինին քով երթա:

Անոնց հեծեծանքը մինչև մեծ աստվածներուն, երկնադիցերուն՝ նվիրական Ուրուկի տերերուն հասավ:

— Դուն՝ Արուրու, որ Գիլգամեշն՝ այս վայրի ցուլն ստեղծեցիր. արգ՝ ստեղծե նաև էակ մը, որ անոր պերճ պատկերին նման ըլլա և անոր պես կորովալիր: Թող մրցեն, Ուրուկը հանգիստ առնե:

Եվ Արուրուն, երբ որ լսեց այս խոսքերը, դիցահոր Անուի հրամանով ձեռքերը լվաց, հողը շաղախեց իր աստվածային շողիքովն և ստեղծեց նինուրտայի՝ պատերազմի աստծո ուղմիկը, քաջ էնկիդուն, որ ահա առանձին կեցած է իր մազոտ մարմնով ամայի դաշտագետնին վրա: Նիսաբային նման գլուխը երկար մազեր ունի, որոնք կախված են ցորենի խուրձի պես: Աշխարհես ու մարդոցմե լուր չունի: Արոտավայրերու և վայրի արջառներու աստված Սումուկանի նման կենդանիի մորթ հագած է: Վիթերուն հետ կարածի ու անոնց պես խոտ կուտե: Երեին հետ միասին ջուր խմելու կերթա: Հետո կը լողա գետին խայտող ալիքներուն մեջ:

Որսորդ մը, բռնավոր մարդ մը, ջրաբբուքին մոտերը թակարդը լարած կը սպասե: Էնկիդուն, երբ իր արջառները ջրելու կը բերե, հոգ կը տանի, որ անոնք թակարդը շիջնան: Մեկ օր, երկու օր, երեք

օր—ջրեղերքը կեցած էնկիդուն կը սպառնա որսորդին:

Երբ որսորդը զինքը կը տեսնե, ահ ու դողի կը մատնվի: Եվ էնկիդուն խռով սրտով երեններուն հետ միասին իր որջը կբաշվե և կատաղած անդ պոռալգոռալ կսկսե, թնդացնելով լեռ ու ձոր:

Որսորդը տուն վերադարձաւ, բերանը բացաւ, սկսավ պատմել իր հորը.

— Հայրիկ, լեռնեն մարդ մը եկավ, որ Անուի մեծ ամբոցին կը նմաներ: Ահեղ ուժ ունի, թերևս ամենազոր է երկրիս վրա: Նա շարունակ լեռներու վրա կը թափառի ու միշտ վայրի կենդանիներուն հետ կարածի, խոտ կուտե, ջուր կը խմե միշտ անոնց հետ: Վախես շեմ կրնար անոր մոտենալ: Փոսերը, որ փորեցի, նա քարերով ու հողով լեցուց, թակարդը, որ լարեցի, իսկույն քակեց, կտրատեց, ալլև ցանցը, որ հյուսեցի, քաշեց կտոր կտոր ըրավ, բացաստանի այն վայրի անասունները աչքիցս նա հեռացուց:

Հայրը խորհուրդ տվավ որսորդ իր տղային:

— Չես գիտեր դուն, որ Գիլգամեշ Ուրուկ քաղաք կը բնակի, գնա պատմե անոր վայրի այդ էակին անանցնելի ուժի մասին: Իշտարի՝ սիրո դիցուհիին տաճարին նվիրված ծաղկահասակ ու հրապուրիչ ցնծուհիներեն մեկը թող հետդ դրկե: Առ և հետդ արոտավայրը տար: Երբ էնկիդուն վայրի

անասուններուն հետ ջուր խմելու գա, ցնծուհին թող
իր հագուստները հանե, կուրծքերը ու գոգը բանա:

Որսորդը և ցնծուհին ջորիով երեք օրեն տեղ կը
հասնին: Երկու օր գետափը սպասելի հետո, վեր-
ջապես կը տեսնեն, որ վայրի անասունները ջուր
խմելու կուգան: Կենդանիները հորձանքին մեջ
պտուլտ կուտան: Հոն է նաև դյուցազուն էնկիդուն,
վայրի կենդանիներու անբաժան ընկերը ու պաշտ-
պանը: Վիթերուն, վայրի այծերուն ու եղնիկներուն
հետ խոտ կուտե և ջուր կը խմե: Ուրախ և խնդա-
վառ կը լողա ալիքներուն մեջ:

Նվիրական ցնծուհին ալ կը նշմարե էնկիդուն՝
լեռներու հսկան, գերմարդկային կորովի տեր բնա-
մարդը, որ զննելով ու վարանոտ քայլերով դաշտն
ի վար իրեն կը մոտենա:

— Ահա, ան է, ո՛հ ցնծուհիդ, դու կուրծքերդ ու
գոգդ բաց, որպեսզի գա քովդ պառկի, շվայտանքի
մեջ մխրճվի: Երկար մի սպասիր, մի վախենար և
փափագը կատարե: Եվ երբ որ ան քեզ տեսնե, քեզի
պիտի ան մոտենա: Հագուստդ հանե, սիրաբլուրդ
բաց արա, որպեսզի կրնա իր կուրծքը քու կուրծ-
քիդ սեղմել: Արդ կատարե կանացիական պարտքը
քո: Եվ վայրենի անասունները, որոնց հետ ան տա-
փաստաններու մեջ մեծցած է, շուտով պիտի օտա-
րանան և այլևս իրեն չպիտի մոտենան:

Եվ ցնծուհին կը բանա իր կուրծքը և ուրախու-
թյան բլուրը: Արդ՝ լեռներու հզոր հսկան՝ էնկիդուն

երբ գրգռիչ կինը կը տեսնե, իսկույն դետին կը պառկեցնե և իր մազոտ կուրծքը Իշտարի նվիրական քրմուհիին կուրծքին վրա կը հանգչեցնե:

Վեց օր և յոթ ամբողջ գիշեր էնկիդուն ճանչցավ կինը և գիրկընդխառն ճաշակեց նրա սերը:

Նվիրական քրմուհիին սերն ու գեղը վայելելի հետո, հսկա էնկիդուն իր աչքն ու հայացքը կը դարձնե դեպ բացաստանը՝ դիտելու իր վայրենի անասուններն: Մինչդեռ վիթերը էնկիդուն տեսնելուն պես, կը խրաչին ու կը փախին: Ու դաշտերուն վայրի կենդանիները բոլորն ալ իրմե խրտնած կը հեռանան:

Սարսափը կը պատե էնկիդուն, ան չի կրնար տեղեն շարժիլ. իր ծունկերը կը թուլնան: Կախարդիչ կնոջը դառնալով՝ ոտքերուն քովը կը նստի, աչքերուն կը նայի և անոր ըսածները մտիկ կընե:

— Էնկիդու, գեղեցիկ ես, աստվածորդի մըն ես: Ինչո՞ւ կուզես վայրի կենդանիներուն հետ դաշտերը թափառել: Եկո՞ւր, հետս երթանք Ուրուկ՝ պարսպապատ քաղաքը: Անուփ և Իշտարի սուրբ տաճարը երթանք, Գիլգամեշի ճաճանչագեղ պալատ տանիմ քեզ, հոն տանիմ քեզ, ուր կատարյալ հերոսը՝ Գիլգամեշը կը բնակի, որը վայրի ցուլի մը շափ կորով ունի: Ժողովրդին մեջը երբեք իր նմանը դու չես գտներ:

Կնոջ պատմածները լսելով, էնկիդուն կուրախանա, ապա կըսե իրեն.

— Յնծուհի՛, զիս Անուի և Իշտարի շողշողուն տաճարը տար. տար զիս հոն, ուր Գիլգամեշը՝ իրական հերոսը կիշխե, կատարյալ ցուլ մը, ամենահզորը մարդոց մեջ: Բարձրաձայն կուզեմ զինքը կանչել. մարտի հրավիրել զինքը և Ուրուկի մեջ հրապարակով ծանուցանել. «Ես ինքս ալ ծուռ մըն եմ: Ես կրնամ ճակատագիրը փոխել. ծնած է զիս լեռը, ուժ ունիմ անդամներուս մեջ»: Աչքովդ պիտի տեսնես, թե ինչ պիտի ընեմ. ինչ որ պիտի պատահի, արդեն զիտեմ:

— Երթանք, թող Գիլգամեշ քեզ տեսնե, երթանք պարսպապատ Ուրուկ: Գույնզգույն գորգերով ծածկըված են քաղաքին պողոտաները: Ճերմակ հագուստներով ու զլխակապերով մարդիկ կուզան ու կանցնին: Տավիղները հեռվեն կը հնչին և սրինգներուն մեղմ ձայնը կը լսվի: Գեղակաղմ աղջիկներ իրենց հեղաճկուն պարով կուզան, կանցնին, կենսուրախ ժպիտն երեսներուն: Վշտի և ուրախության մարդը՝ Գիլգամեշը կուզեմ քեզի ցույց տալ: Զինքը պիտի տեսնես և անոր երեսը պիտի նայիս. արևի պես կը փայլին անոր աչքերը: Իբրև այր՝ գեղեցիկ և վիթխարի հասակ ունի: Ուժն ըսես, թերևս քուկինեդ ալ ավելի է: Գիշեր ցերեկ հոգնել չի գիտեր: Ամպրոպի աստված Ադադի նման սարսափ կաղզի: Արև-աստված Շամաշի շնորհքը կը վայելե և ծովերու և ջուրերու խորությանց աստված էան ալ անոր առատ խելք ու իմաստություն տված է: Այս աստ-

վածներուն երրորդութիւնը զինքը թագավոր կարգեց և մտքի պայծառութիւն շնորհեց: Լեւնաստանեն իջնելեդ և տափաստաններուն վրա երևալեդ շատ առաջ—Գիլգամեշ կը զգար, որ դուն աշխարհ պիտի գաս: Ուրուկի մեջ երազ մը տեսավ քու մասին. քունեն վեր թռավ և իր մորը պատմեց երազը.

«Մայր իմ, այս դիշեր տարօրինակ երազ մը տեսա: Աստեղազարդ երկինք մը կար: Անուի երկնակամարը իր աստղերու բանակով հանկարծ վրաս ինկավ շողշողուն մարտիկի մը նման: Ուղեցի բռնել, վերցնել զայն, բայց չափազանց ծանր էր. ուղեցի տեղեն շարժել. բայց նորեն չկրցա: Ուրուկի ժողովուրդը, քովս կեցած, կը դիտեր այս տեսիլքը: Մարդիկ կը համբուրեին այդ էակին ոտքերը: Բոլոր ճիգս թափեցի, վեր առի և քեզի բերի զայն: Դուն զայն իբրև զավակ ընդունեցիր և իբրև եղբայր քովս կեցուցիր»:

Նինսուն, որ իմաստուն է և բոլոր գիտութեանց տեղյակ, ըսավ իր տղուն, Ուրուկի իշխանին.

«Եթե դուն աստեղազարդ երկինքը տեսար, որ Անուի շարաստղերուն նման վրադ ընկավ, դուն զայն վերցնելու փորձ ըրիր, չափազանց ծանր ըլլալով չկրցար վերջնել և հետո կուրծքիդ սեղմելով, բերիր, ոտքերուս տակը դրիր և ես զայն իբրև զավակ ընդունեցի, որպեսզի քեզի եղբայր ըլլա, ուրեմն այս կը նշանակե, թե զորավոր մեկը պիտի գա, որ բանակի մը չափ ուժ ունի: Ահա այս հաղ-

Թանգամ էակը էնկիդուն է, քաջ հսկա մը, սրտակից՝
ընկեր մը, նիզակակից մը, որ նեղության մեջ կօգ-
նէ իր բարեկամին: Աշխարհիս վրա ամենազորա-
վորն ու ամենաքաջն է, Անուի ամրոցին կը նմանե
ան»:

Գիլգամեշ, մորը մոտենալով, ըսավ. «Երանի՛ թե
այդ մեծ բախտին արժանանայի և այդպիսի ընկեր
մը և բարեկամ մը ունենայի»:

Ահավասիկ, ա.ե՛ս, էնկիդո՛ւ, այս է Գիլգամեշի
երազիւն մեկնությունը: Ուրեմն բարձրացիր թրջված
զետնեն և հետս եկուր:

Քրմուհին այսպես պատմեց էնկիդուին, երբ
նստած էին վայրի կենդանիներուն ջուր խմած
տեղը:

Ե Ր Վ Ր Ո Ր Դ Պ Ն Ա Կ Ի Տ

էնկիդուն՝ ցնծուհիին դեմ նստած՝ կը լսեր անոր ըսածները: Կնոջ խորհուրդը անոր սրտին մեջ տեղ գտավ: Կինը հագուստը պատռեց, մի լաթը անոր հագցուց և մյուսն ալ իրեն համար պահեց: Մոր մը պէս, ձեռքեն բռնած, որսորդին դաշտավայրը տարավ: Հովիվները էնկիդուն շրջապատեցին: Սակայն էնկիդունին բնակավայրը լեռներն են: Վիթերուն հետ խոտ կերած, տափաստաններուն վայրի կենդանիներուն հետ շուր խմած է: Ի՞նչ չէ կերած լեռներու և տափաստաններու վրա: Մծած է վայրի անասուններու կաթը:

Երբ առջեր կերակուր դրին. տեսավ և շվարեցավ: Էնկիդուն շէր գիտեր, թե ինչպէս կուտվի հացը և ինչպէս կխամվի հարբեցնող ըմպելիքը: Յնծուհին բերանը քանալով ըսավ.

— Հաց կեր. էնկիդու, ապրելու պետք ունիս: Ըմպելիք խմե, ինչպէս սովորութիւնն է այս երկրին մեջ:

էնկիդուն հաց կերավ ու կշտացավ, յոթ կճուճ ալ հարբեցնող ըմպելիք խմեց: Կուրծքը ուրախու-

թյամբ և պայծառությամբ լեցվեցաւ, սիրտը բաց-
վեցաւ, երեսը ճառագայթեց: Ձեռքով իր մազոտ
մարմնին վրայի աղտոտությունը շոշափեց, յուղով
օծեց, հագուատը հագաւ և այր մարդու մը կեր-
պարանք ստացաւ:

Իր զենքերը առաւ, առյուծներուն դեմ ելաւ՝ հո-
վիվները գիշերը կը քնին: Գայլերուն վրա հարձակ-
վեց՝ պահապանները կը հանգչին: Անոնց պահա-
պանը էնկիդուն է, գերմարդկային ուժի տեր մարդը,
միակ տղամարդը:

Անգամ մը ցնծուհիին հետ առսնձնացած էր, և
ան զվարաճացաւ անոր հետ: Հանկարծ աչքերը
դարձուց և մարդ մը տեսաւ: Ապա ցնծուհիին դառ-
նալով, ըսաւ.

— Ա՛յ կին, ան մարդը թող տեղեն շարժի: Ին-
չո՞ւ եկաւ: Իր ըսելիքը կուզեմ լսել:

Ցնծուհին մարդը կանչեց և ըսաւ.

— Ո՞ւր կերթաս դուն մարդ, ի՞նչ բանի համար
կը ճգնիս:

Եւ մարդը, բերանը բանալով, էնկիդուին ըսաւ.

— Ինձի հետ ընտանիքիս տունը եկուր, որ-
պեսզի տեսնես մարդոց վիճակը, հարսներուն տա-
ռապանքը, լաց ու կոծը, որով լեցված է քաղաքը:
Գիլգամեշին, Ուրուկ քաղաքի թագավորին առջև
բաց են նորահարսներու ննջարաններուն դռները:
Ուրիշ տղամարդկանց համար հարսնացու որոշված
կույսերուն քով նախ Գիլգամեշ կը պառկի և հետո

իրենց ամուսիններուն կը հանձնեն: Աստվածային խորհրդով այդպես կարգադրված է: Այս բանը այն ատեն որոշվեցաւ, երբ մարդուն պորտը կտրեցին:

Արդ՝ այդ մարդուն այս խոսքերուն վրա էնկիդուն դեմքը դժգունեցաւ, սիրտը քենով լեցվեցաւ: Կուզե պարսպապատ Ուրուկ քաղաքը երթալ և Գիլգամեշի դեմ կռիւ ելլել: Ճամփա ինկան դեպի Ուրուկ.— առջևն էնկիդուն, իսկ ետևն ալ ցնծուհին կերթար:

Երբ էնկիդուն Ուրուկի հրապարակը հասաւ, բազմութիւնը շուրջը հավաքվեցաւ ու զարմացաւ: Գլխուն և մորուքին մաղերը իւրարու խառնված՝ ամբողջ մարմինը ծածկած էին: «Անուի լեռներեն քաղաք բերված հսկա մըն է, նման Գիլգամեշին: Հասակով Գիլգամեշեն փոքր, բայց ավելի ուժեղ կերևի: Երկրիս վրա ամենազորավորն է ու անշափ ուժ ունի: Վայրի անասուններուն կաթը ծծած է» — կը փսփսար սարսափահար ամբոխը:

Մարդիկ ծնկաշոք՝ անոր ոտքերը կը համբուրեին ու կը ցնծային. «Հերոս մը եկած է, իսկական հսկա մը Գիլգամեշին համար: Քաջ դուրցաղն մըն է, հակառակորդ մարտիկ մը»:

Իշխարա դիցուհիին անկողինը արդեն պատրաստված էր, որպեսզի Գիլգամեշ իրեն քով երթար. գիշերը իրեն պիտի մոտենար՝ պառկեր ու գրկվեր: Երբ Գիլգամեշ եկաւ, էնկիդուն անոր դեմ ծառա-

ցամ, ճամփան գոցեց և շթողուց, որ Գիլգամեշ Իշխարայի ննջարանը մտնե:

Գիլգամեշ տեսավ անպարտելի և մազոտ էնկիդուն, որ լեռներում ծնած էր, և վրան հարձակվեցամ: Անոնք իրարու հետ կովի բռնվեցան քաղաքին հրապարակին վրա: էնկիդուն ոտքը տաճարին դարպասին առջև դրավ և թույլ շտվավ, որ Գիլգամեշ ներս մտնե:

Այդպես նրանք ցուլերու պես իրարու բախեցան. երբ Գիլգամեշ և էնկիդու, ցուլերու պես պոռչկտալով, գուպարի բռնվեցան, դռան շեմերը ջարդ ու փշուր բրին, պատը տեղեն շարժվեցամ: Երբ Գիլգամեշ ծունկի եկավ, բարկությունը անցամ, կուրծքը էնկիդուին դարձուց:

Երբ Գիլգամեշ երեսը դարձուց, էնկիդուն ըսավ անոր՝ Գիլգամեշին.

— Չքնաղ ու աննման ծնած է քեզ մայրդ, նինսուն, անտառին վայրի կովը: Գլուխդ մարդկանց մեջեն դուրս ցցված է, էնլիլը քեզ այս ժողովուրդին վրա թագավոր կարգեց: Ահռելի ուժդ աշխարհիս իշխանավորները կը գերազանցե, երբ քեզ կը տեսնեմ, բերկրանք կըզգամ: Բարեկամ մը կը փնտրեի, քեզ գտա:

Գիլգամեշն ալ, էնկիդուին դառնալով, ըսավ.

— Դուն ամայի բացաստանում ծնած էնկիդուն ես, քո գալուստը ես գիշեր երազիս տեսա: Երբ քեզ

կը տեսնիմ, այնպիսի բերկրանք կըզգամ, ինչպես
կնոջ մը մոտ: Երազնկոս կատարվեցան:

Երկու քաջերը՝ Գիլգամեշ և Էնկիդուն ելան
գրկախառնվեցան, համբուրվեցան և բարեկամու-
թյուն կնքեցին:

Գիլգամեշ հետո իր մոտը տարավ Էնկիդուն,
բարեկամը, որ գտավ կովի մեջ:

— Մայրիկ, ահա երազիս մեջ տեսած զավակդ
քեզի կը բերեմ: Կնկա մը պես բերկրանքով լեցուց
զիս: Երկրիս վրա ամենազորավորն է. ահռելի ուժ
ունի, Անուի բերդին պես ամուր և հսկայակուտ է:
Ոչ ոք կըրնա դիմանալ անոր ուժին: Ենորհզ ցույց
տուր իրեն:

Գիլգամեշի մայրը, Նինսունը, վայրի Կովը,
ըսավ տղուն՝ Գիլգամեշին.

— Զավակս. ահա այդպես երազդ կատարվե-
ցավ: Ինձի համար տղա մը եկավ և քեզ համար ալ,
Գիլգամեշ, եղբայր մը. — նեղ օրերու հավատարիմ
ընկեր մը: Բայց ինչո՞ւ դեմքն այդպես մթազնած
է: Ինչո՞ւ երկար ու խառնված մազերը ամեհաբար
կը ծածանին: Իր կերպարանքով վայրի ցուլի
նման է:

Գիլգամեշ ըսավ իր մորը՝ Նինսունին.

— Գոտեմարտի հետքերը, մայր իմ, վրան տա-
կավին մնացած են: Կովի բռնվեցանք մեր ընտա-
նեկան տան առջև, մարդիկ զինքը ինձի դեմ հա-
նեցին: Էնկիդուն ոչ հայր, ոչ ալ մայր ունի: Իր ար-

ձակ մաղերուն դեռ մկրատ դիպած չէ: Լեռներում
ծնած է, խնամքի և կրթութեան երեսը տեսած չէ:

Երբ էնկիդուն, հոն կեցած, մտիկ կընէր անոր
պատմածները, աչքերը արցունքով լեցվեցան. ինքն
իր մեջ ցավ մը զգաց և սկսավ վշտագին հառաչել:
Գիլգամեշ երեսը անոր դարձուց, իրար բռնեցին ու
իրար քով նստելով, սիրողներու պես ձեռք ձեռքի
տվին: Գիլգամեշ ըսավ էնկիդունին.

— Բարեկամ, ինչո՞ւ աչքերդ արցունքով լեցվե-
ցան: Ինչո՞ւ սրտիդ մեջ ցավ զգացիր ու դառնորեն
կը հառաչես:

էնկիդուն, բերանը բանալով, ըսավ Գիլգամե-
շին.

— Սիրելի բարեկամս, վիշտս մինչև կոկորդս
ելավ. լեզուս կապվեցավ. թևերս թմրեցան, ուժերս
սպառվեցան:

Գիլգամեշ, բերանը բանալով, ըսավ էնկիդունին.

— Եկուր, երթանք կովի, փորձենք մեր թևերը,
փորձենք մեր ուժը: Հեռավոր լեռներուն վրա ան-
տառ մը կա, նվիրական մայրիներու անտառը, ուր
կապրի ահավոր Խումբաբան: Սպանենք այդ հրեշը,
բարեկամս, և ես ու դու երկրիս վրային կվերաց-
նենք բոլոր շարիքը: Զարդենք մայրին, բարեկամս:
Բախտախնդրութեամբ լեցնենք կյանքներնիս, շարի-
քեն ազատենք մարդկութունը, քաջագործութեամբ,
սխրանքով փառքի տիրանանք:

էնկիդուն, բերանը բանալով, ըսավ.

— Երբ վայրի կենդանիներուն հետ լեռները կը թափառեի, իմացա այդ մասին, բարեկամս: Այդ լայնածավալ անտառին լայնքը ու երկայնքը շափելու համար տասը հազար կրկնակ ժամ¹ պետք է երթալ: Ո՞վ է այն քաջը, որ կամենար անոր մեջ մտնել: Ոհ, բարեկամս, Խումբաբայի գոռում-գոչումը փոթորիկ է, երախը՝ հնոց մը, հարձակումը՝ մահ: Ինչո՞ւ կուզես այդպիսի բախտախնդրութուն մը ընել: Կոխվով կարելի չէ Խումբաբայի բնակավայրը դրավել:

Գիլգամեշ, բերանը բանալով, ըսավ էնկիդուին.

— Կուզեմ բարձրանալ այն լեռը, որ ցցված է հսկայական անտառներուն մեջտեղը, մայրիներու լեռը, ուր կը գտնվի Խումբաբայի և աստվածներու բնակավայրը: Ինձի համար տասպարն ալ կը բավե իբրև օգնական: Դուն այստեղ սպասե միայն. ես մին-մինակ հոն կերթամ:

էնկիդուն, բերանը բանալով, ըսավ Գիլգամեշին.

— Ի՞նչպես կարելի է հոն, մայրիներու անտառը երթալ, քանի որ անոր պահապանը մարտիկ մըն է, հսկայակուռ էակ մը, որ երբեք չի քնանար: Մայրիները պահպանելու համար էնչիլը դայն, իբրև սասափ մարդոց համար հոն դրած է: Ով որ այդ անտառը կը մտնե, ողբալի կըլլա վիճակը:

¹ Կրկնակ ժամ կամ երկժամ, ակկադերեն՝ բերու, տարածական շափ մըն է, հավասար է մոտավորապես 10 կմ:

Գիլգամեշ, բերանը բանալով, ըսավ էնկիդուն.

— Բարեկամս, ո՞վ է երկրիս շառավիղը: Աստվածները՝ արև-աստված Շամաշին հետ բազմած են իրենց գահուն վրա, բայց մարդկանց օրերը հաշված են: Ինչ որ ալ ընեն, քամու պես ընդունայն և անցավոր է անոնց փառքը: Բայց դուն, սիրելիս, մահեն կը վախնաս: Ո՞ւր մնաց դյուցազնական քաջասրտությունդ: Ուրեմն ես քեզմե առաջ պիտի երթամ: Թող, որ քո բերանե լսեմ. «Այո, գնա, մի վախնար»: Եթե մեռնիմ, անունս պիտի հիշվի: Պիտի ըսեն. «Գիլգամեշ ընկավ սոսկավիթխար Խոամբարա հսկային հետ մղած կռիվի մեջ»: Արդ, կուզեմ գործի ձեռնարկել, մայրիները ջարդել, ստեղծել անուն մը, որ անմահանա: Հիմա կուզեմ դեպի զինագործը երթալ, որպեսզի մեր աչքին առջև զենք շինե:

էնկիդուն ու Գիլգամեշ, ձեռք ձեռքի բռնած դարբինին քովը գացին: Վարպետները հոն խորհուրդի նստան. երեք տաղանդ՝ ծանրությամբ տապարներ ձուլեցին, երկու տաղանդից մեծ սուրբ ու շեղբեր շինեցին, կոթերուն վրա կես տաղանդնոց ճարմանդներ զետեղեցին, կես տաղանդնոց ոսկի պատյաններ շինեցին: Գիլգամեշը և էնկիդուն, երկուքն ալ տասը տաղանդնոց զինքերով զինվեցին:

Յոթը կողպեքներով գոցված Ուրուկ քաղաքին դռան մոտ գնացին: Բոլոր քաղաքացիք հոն հա-

¹ Տաղանդը հավասար է մոտ 30 կիլոգրամի:

վարվեցան: Ուրուկ քաղաքի փողոցները ցնծութեամբ լեցվեցան: Ուրուկի փողոցներուն մեջ խոնված ժողովուրդին ուրախությունը նկատեց Գիլգամեշ և խոսեցավ ժողովուրդին, որ իր առջև նստած էր.

— Ես կուզեմ հսկայահուռ խումբաբային քով երթալ: Կուզեմ տեսնել զայն, որուն մասին այդքան կը խոսվի. կուզեմ մայրիներու անտառը հասնիլ ու տեսնել այդ ահռելի հսկան, որուն անունը սարսափ կազդե երկրիս վրա: Կուզեմ, որ ամբողջ երկիրը լսե ու իմանա, թե որքան ուժով է ուրուկցին: Կուզեմ գործի անցնել. մայրիները ջարդել. կուզեմ տևական անուն մը թողնել:

Ուրուկի, պարսպապատ քաղաքին, ծերունիներն ալ Գիլգամեշին ըսին.

— Դուն դեռ շատ երիտասարդ ես, Գիլգամեշ, անոր համար սիրտդ քեզ այդքան հեռուները կը տանի: Դուն ընելիքիդ մասին դեռ գաղափար իսկ չունիս: Մեր լսելով, խումբաբան սոսկալի հրեշ մըն է: Ո՞վ է, որ իր զենքերով պիտի կրնա անոր մոտենալ: Այդ անտառին լայնքը ու երկայնքը տասը հազար կրկնակ ժամի կը հավասարվի: Ան ո՞վ է, որ պիտի ուզեր անոր մեջ մտնել: Խումբաբայի գոռումգոշումը փոթորիկ է, երախը՝ հնոց, հարձակումը՝ մահ: Ինչո՞ւ կուզես այդիպիսի բախտախնդրություն մը ընել: Կուզեմ կարելի չէ խումբաբայի բնակավայրը գրավել:

Երբ Գիլգամեշ իր խորհրդականներուն ըսածները լսեց, ժպտալով հայացքը իր բարեկամներին դարձուց:

— Խորհրդականներ, ես մին-մինակ չեմ երթար. բարեկամս ալ հետս պիտի գա և ընկերս, որ նեղ օրերուն իր բարեկամին կօզնե:

Ուրուկի երեւիիները Գիլգամեշին ըսին.

— Մարդուն, հողեղենին ձեռքեն շատ բան չի գար. արև-աստված Շամաշին օգնութիւնը հայցե: Քու պաշտպան աստվածդ թող քեզ փորձութենեն փրկե. թող քեզի ճամփան ցույց տա, որ խաղաղությամբ վերադառնաս տուն, պարսպապատ Ուրուկ:

Գիլգամեշ, ծունկի գալով, ձեռքը վեր բարձրացուց.

— Ինչ որ ըսին, թող կատարվի: Շամաշ, արդ կը մեկնիմ, ձեռքերս քեզի կը բարձրացնեմ. հոգիս ողջ պահե: Կամեցիր, որ հաջողությամբ տուն, պարիսպներուն վերադառնամ: Հովանիիդ տակ առ դիս:

Գիլգամեշ իր բարեկամն ալ կանչեց: Անոր հետ նայեցավ, թե երկինքը ինչ նախանշան ցույց պիտի տա էնկիդուին համար: Եվ նախանշանը շարագուշակ էր: Գիլգամեշի աչքերեն արցունք հոսեցավ:

— Ճամփա մը, ուրկե երբեք չեմ անցած, որուն վերջավորութիւնը դեռ ծանոթ չէ: Եթե ես ողջ վերադառնամ, սրտանց պիտի սիրեմ քեզ, բերկրան-

քով պիտի պարուրիմ, քեզի համար պիտի կամե-
նամ, որ գահերու վրա նստիս:

Անժամ ծառաները թերին զենքերը՝ մեծ թու-
րերը, աղեղները, կապարճները և ձեռքը դրին: Տա-
պարները առավ, Անշանի աղեղը կապարճեն կա-
խեց, իր նոր թուրն ալ մեջքը կապեց:

Պատրաստվեցան անոնք ճամփա երթալու:

Ե Ր Ր Ո Ր Գ Պ Ն Ա Կ Ի Տ

Մեծավորները Գիւղամեշին որհնեցան և ճամփորդութեան խորհուրդ տվին.

— Գիւղամեշ, սկտք շէ, որ ուժիդ ապավինես: Գուն նայի, որ ինքզինքդ պաշտպանես: Էնկիդուն թող առջևեդ երթաւ Ան, որ արահետները գիտի, ապահով կերպով կը տանի, տեղ կը հասցնի իր բարեկամը: Ան տեսած է այդ ճամփան, քայլած է այդ կածաններեն, որոնք անտառ կը տանին, անցած է լեռնաշխարհին կիրճերեն, նոսրբարայի բոլոր ծածուկ լեռնուղիներեն: Ան, որ առջևեն կերթա, կը պահպանի ընկերը. իր ճամփան թող շարունակի ան, դուն նայի, որ ինքզինքդ պաշտպանես: Շամաշ թող բաղձանքդ կատարի: Աչքդ թող տեսնի այն, ինչ որ բերանդ ավետից: Թող բանա գոցված կապանը, ճամփա թող բանա քայլերուդ առջև, լեռը ոտքերուդ թող մատչելի դարձնի: Գիշերը թող քեզի տա, ինչ որ սիրտդ կը ցանկա, Լուգալբանդան թող քեզի օգնական ըլլա և հաշոդութեանդ նպաստի: Երեխայի մը պես բախտավոր և երջանիկ ըլլաս: Գիւղամեշ,

հոն ուր հասնելու կը ճգնիս, լվա ոտքերդ խումբա-
բայի գետին մեջ: Երեկոյան՝ հանգստի ժամանակ՝
չրհոր մը բաց, տիկիդ մեջ միշտ մաքուր ջուր թող
գտնվի: Շամաշին միշտ պաղ ջուր մատուցանե.
Լուգալբանդան միշտ հիշե: Էնկիդու, պահպանե ու
պաշտպանե բարեկամդ և ուղեկիցդ ամուսնացած
կնոջ մը հավատարմությամբ: Մենք համայնորեն
քեզի կը հանձնենք արքան, դարձյալ տուն բեր և
մեզի հանձնե զայն:

Էնկիդուն, բերանը բանալով ըսավ Գիլգամեշին.

— Քանի որ այդպես որոշեցիր, գնա ուրեմն,
սիրտդ թող անվախ ըլլա, — միայն ինձի նայե: Ես
գիտեմ ճիւղաղին և ծանոթ են ինձի կածանները,
ուրկե ահարկու խումբաբան կանցնի: Ուրեմն հրա-
մայե, որ ճամփա ելլենք, բաժանվիր խորհրդատու-
ավագանիեդ:

Գիլգամեշ, բերանը բանալով, ըսավ պարսպա-
պատ Ուրուկ քաղաքի ավագանիին.

— Էնկիդուին հետ, որ կուղե ինձի ընկերանալ,
կը խոստանամ կատարել այն, ինչ որ ձեզի, քաղա-
քի մեծավորներուդ ըսի: Ձեր ինձի տված խոր-
հուրդները սիրով լսեցի:

Քաղաքին մեծավորները Գիլգամեշին ըսածները
լսելէ հետո, դյուցազնը ճամփու դրին.

— Գնա, Գիլգամեշ, գնա, թուրդ կտրուկ, ձեռ-
նարկդ թող հաջող ըլլա: Պաշտպան աստվածդ թող
կողքիդ քայլե և լրիվ հաջողություն տա:

Գիլգամեշ, բերանը բացավ և ըսավ էնկիդուին.

— Եկուր, բարեկամս, մեծ պալատը երթանք, մեծ թագուհին՝ Նինսունին քով: Նինսունը, այդ իմաստուն ամենագետը, մեր ոտքերուն զգուշավոր քայլվածք կուտա:

Գիլգամեշ և էնկիդու, ձեռք ձեռքի բռնած, մեծ պալատը, մայր թագուհին՝ Նինսունի մոտ եկան: Գիլգամեշ, վեր բարձրանալով, մորը մոտեցավ.

— Նինսուն, հեռավոր կապանները պիտի երթամ, ուր Խումբարան կը գտնվի. կուզեմ մղել կռիվ մը, որուն վարժ չեմ. կուզեմ անցնել ճամփա մը, որ ինձի ծանոթ չէ: Աղոթե և պաղատե Շամաշին, որ պեսղի թափառումներուս մեջ զիս անվնաս պահե, որ կրնամ մայրիներու անտառը հասնել, որ կրնամ սպանել սարուփազդու Խումբարան և աշխարհիս վրայեն վերացնիլ ամեն շարիք, զոր Շամաշը կատե: Եթե Խումբարան սպանեմ և անոր մայրիները ջարդեմ, այն ատեն աշխարհիս վրա խաղաղություն պիտի ըլլա:

Զավակին, Գիլգամեշի խոսքերը անձկությամբ լսեց մայր թագուհին՝ Նինսունը, իմաստուն-ամենագետը:

Այն ատեն Նինսուն իր սենյակը մտավ, որ հագուատեղեններով և թանկարժեք զարդերով լեցուն էր: Իր մարմնին հարմար հագուատ մը հագավ, պարանոցը և կուրծքը գոհարներով զարդարեց, գոտին մեջքը կապեց, թագը գլուխը դրավ և թասով ջուր

առնելով, գետինը սրակեց: Սանդուխներեն բարձրանալով, վերնատուն մտալ, տանիքը ելալ, արևաստոված Շամաշին խունկ ծխեց, զոհ մատուցեց, բազկատարած աղերսեց.

— Ինչո՞ւ ինձի Գիլգամեշի պես, զավակ մը տվիր. ինչո՞ւ անոր այնպիսի սիրտ մը տվիր, որ հանգիստ ու դադար չտար: Եվ հիմա էլ զինքը դրդեցիր, որ բախտախնդրության դիմե. երթա, թափառի այն խութ ու բարձրաբերձ լեռները, ուր խումբաբան կը գտնվի: Կուզե անոր դեմ կռվիլ, որուն վարժված չէ, քայլել ճամփայե մը, որ իրեն ծանոթ չէ: Բազկատարած կը պաղատիմ, որ աչքդ վրան ընես գացած և եկած ատենը, որպեսզի կրնա մայրիներու անտառը հասնիլ, որպեսզի կրնա սպանել ահավոր խումբաբան և վերացնել աշխարհիս վրայեն ամեն չարիք, զոր դուն կատես: Յերեկը, երբ դուն Գիլգամեշի ճամփան կը հսկես, Այան՝ քեզ սիրող հարսդ, թող քեզի հիշեցնե: Նաև գիշերվան պահապաններուն՝ աստղերուն հանձնե զայն և իրիկունն ալ Լուսնյակ Սինին՝ քու հորդ: Իր երկար արշավանքներուն մեջ պաշտպանե զինքը, որ ըլլա ան սիգապանձ լեռներու կիրճերուն մեջ, կամ տափաստաններու վրա, որպեսզի գազանները իր վրա չհարձակվեն, հսկե անոր գիշերը աստղերովդ և ցերեկը արեգակովդ: Յույց տուր իրեն անծանոթ կապանները և օգնե իրեն, որ գտնե այն ահռելի խումբաբան. մեկ օրեն, ամիսեն կամ տարիեն:

Նինսուն խնկամանը պարպեց և էնկիդուն կան-
չելով, ըսավ անոր.

— Ո՛հ քաջ էնկիդու, դու արգանդես շես ելած,
բայց ես քեզ իրրե զավակ ընդունած եմ, Գիլգամեշի
որդիական նվերին հետ: Արդ քրմուհիները թող
իրենց գործը կատարեն:

Մայր թագուհին էնկիդուին վիզեն գոհարե հմա-
յակ մը կախեց. նվիրական քրմուհիները զինքը
իրենց քով առին և աստծո դուստրերը զինքը կրթե-
ցին:

Նրբ արարողությունը վերջացավ, Նինսուն
ըսավ.

— էնդիկու, քեզի կը հանձնեմ ժառանգս, Գիլ-
գամեշը, եղբայրդ: Ջերմորեն կը փափագիմ, որ
վրան հսկես իր ճամփորդության մեջ, մինչև մայ-
րիներու անտառը առաջնորդես և ետ բերես: Թող
անցնին օրեր, ամիսներ և տարիներ:

էնկիդուն բերանը բացավ և ըսավ Նինսունին.

— Կառաջնորդեմ Գիլգամեշը, բարեկամս և եղ-
բայրս լայնատարած տափաստաններեն ու լեռնե-
րեն մինչև մայրիներու անտառը, ուր խումբաբան
կապրի: Շամաշի շնորհիվ մեծ քաջագործություն-
ներ կընենք և հաջողությամբ պարսպապատ Ուրուկ՝
քեզի կը վերադառնանք, իմաստուն-ամենագետ
թագուհիս և մայրս:

Գիլգամեշ և էնկիդու ձեռք ձեռքի տված մեկնե-
ցան իմաստուն Նինսունին քովին:

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Պ Ն Ա Կ Ի Տ

Երբ քսան երկժամ քայլեցին, քիչ մը նստան և կերան: Երեսուն երկժամ ճամփա երթալե հետո պառկեցան, քնեցան: Մեկ օրվան ընթացքին հիսուն երկժամ քայլեցին, մեկ ամսվան և տասնևհինգ օրվան ճամփան երեք օրեն կտրեցին: Իրիկունը պառկելի առաջ՝ ջրհոր մը բացին, տիկերը մաքուր ջրով լեցուցին, որպեսզի արև-աստված Շամաշին պաղ ջուր մատուցեն:

Գիշերվան կիսուն Գիլգամեշ քունեն կարթննա և էնկիդուին կը պատմե.

— Ի՞նչ կա բարեկամս, ինչո՞ւ քունս խանգարեցիր: Ինչո՞ւ քունս փախավ: Բարեկամս, տես, թե գիշերը երազումս ինչ տեսա. լուսնակ գիշերով հովազ մը կը հալածեի, որ միշտ առջևես կը փախչեր, և շէի կրնար զգետնել զայն: Հանկարծ տեսա, որ փոս մը ինկավ, ուրկե իզուր կը ջանար դուրս ելլել. կարծես անտեսանելի պարիսպներով շրջապատված ըլլար: Ես շուտափույթ վազեցի և հովազը զգետնեցի. բայց տեսա, որ զարկածս հովազ չէ, այլ հսկա մը:

էնկիդուն բերանը բացավ և ըսավ Գիլգամեշին.

— Բարեկամս, երազդ լավ և բարի է: Հովազը
հումբաբան է, որ պիտի բռնենք ու սպանենք:
Երազդ ինձի ուրախացուց, և սիրտս բացվեց:

Երկար և դժվարին ճամփաներ կտրելե ետք,
անոնք երեկոյան ճաշը ըրին և գետնախշտի պառ-
կեցան ու քնեցան: Գիշերվան կիսուն Գիլգամեշ
քունեն ընդոստ վեր թռավ և իր երազը պատմեց
էնկիդունին.

— Ո՛հ, բարեկամս, ի՞նչ պատահեցավ: Ինչո՞ւ
քունս խանգարեցիր: Ինչո՞ւ արթնացաւ: Էնկիդու,
իմ բարեկամ, դարձյալ երազ մը տեսա, շարագու-
շակ երազ մը: Առաջին երազես հետո երկրորդ մըն
ալ տեսա: Բարձրաբերձ և սեպ լեռան մը ստորոտը
կեցած էինք: Մեր առջև ցցված լեռը հանկարծ գլոր-
վելով, վրաս ինկավ, ուժգնորեն զիս գետին կռեց
ու ոտքերս կաշկանդեց: Մենք անոր քով եղեգնուտի
մժեղներուն կը նմանեինք: Հանկարծ շլացնող լույս
մը ծագեցավ. ինձի մարդ մը երևցավ. որն աշխար-
հիս ամենագեղեցիկն էր. անոր գեղեցկութունը
ուրուրեք ոչ մի տեղ չկար: Ան քաշեց, լեռան տա-
կեն զիս հանեց, ինձի ջուր խմցուց, սիրտս զովա-
ցավ և ցավերս մեղմացան:

Լեռնադաշտը ծնած քաջ էնկիդուն, երեսը բարե-
կամին դարձնելե ետք, այսպես կը մեկնե երազը.

— Բարեկամս, երազդ բարենշան է և հրաշալի:
Լեռը, որ տեսար, սիրելիս, հումբաբան է: Պիտի

բռնենք խոամբարան, պիտի սպանենք շարութեան
այդ դէին, ոճրագործին, դիակը լեռը պիտի նետենք:

Առաւոտայան աղջամուղջին, խարխափելով լեռն
ի վեր ելան: Քսան երկժամ ճամփա կտրելիս ետք,
կանգ առին, որպեսզի ճաշեն: Երբ երեսուն երկժամ
ճամփա կտրեցին, իրիկվան հանդստի գնացին միա-
սին: Շամաշի աչքին առջև ջրհոր մը բացին և ձեռ-
քերը արև-աստծուն քարծրացուցին: Գիլգամեշ,
փորված հողակույտին վրա ելլելով, ցորենի հատիկ
ցանեց և ըսավ.

— Լեռ, երազ մը տուր:

Լեռը նախանշան մը տվավ: Պաղ հով մը անցավ
ծառերուն մեջեն. հետո քամի քարծրացավ. էնկի-
դուն պառկեց քուն մտավ. Գիլգամեշը արթուն
մնաց: Ան հիմա լեռան քաղված ցորենի խուրձի
նման էր: Գիլգամեշ ծունկի եկավ, գավազանին վրա
հենելով և թաղվեցավ խոր քունի մեջ: Գիշերվան
կիսուն Գիլգամեշին քունը փախավ: Ընդոստ վեր
թռավ և սկսավ բարեկամին պատմել.

— Բարեկամս, դուն զիս շկանչեցի՞ր. ինչո՞ւ
արթնցա. դուն ինձի շմշտեցի՞ր արդյոք: Ինչո՞ւ այս-
պես սոսկացի: Արդյոք աստված մը շանցա՞վ աս-
կե: Ինչո՞ւ մարմինս կը դողա: Բարեկամս, երրորդ
երազ մըն ալ տեսա և այս երազը, որ տեսա, սոս-
կալի էր և ահեղ. երկինքը կը գոռար և երկիրը կը
թնդար: Սևաթուշր ամպեր կուտակվեցան. խավարը
պատեց: Հանկարծ կայծակ մը փայլատակեց. հրդեհ

մը բրոնվեցավ. բոցավառվեցավ: Կրակի խորձերը
կը տեսնվեին և վերեն մահ կը տեղար: Հետո փայ-
լատակումը դադրեցավ. կրակը մարեցավ և մեկը,
որ կայծակնահար ինկած էր, մոխիր դարձավ: Ե-
կուր երթանք դաշտը և հոն խորհուրդ ընենք:

էնկիդու Գիլգամեշին երազը լսելի հետո, բերա-
նը բանալով, ըսավ բարեկամին.

— Գիլգամեշ, երազդ բարին է և իմաստը անոր
ուրախալի:

Այնժամ էնկիդուն ըսավ Գիլգամեշին.

— Մտածե, թե ի՞նչ ըսիր Ուրուկի մեջ: Մոտը
գնա, որպեսզի սպանես Խումբաբան: Թող աշ-
խարհն իմանա Ուրուկի որդի Գիլգամեշի ուժը:

Գիլգամեշ այս խոսքերը լսելի հետո, վերստին
խիզախությամբ և քաջությամբ լցվեցավ:

— Աճասպարե և իրեն մոտեցիր, որպեսզի շի
փախչի, անտառին խորքը մտնելով, շահավի: Այդ
արյունուշտ ճիւղին մարմինը յոթը դյուրթական
վերարկուներով պատված է. որևէ զենք անոնցմե
չի թափանցեր: Այս վայրկյանիս միայն մեկը հա-
գած է, մյուս վեցը հանած՝ իր ոտքերուն քով դե-
տինը դրած է:

Կատաղութենեն փրփրած, վայրի ցուլի մը նման
անտառապահին վրա հարձակվելու պատրաստվե-
ցավ անտառին մուտքին առջև: Անտառապահը
սարսափեցավ և փախուստի դիմեց, փորձելով ձեռ-
քեն ազատվել: Կը պողար ու օգնություն կը կանչեր

Խումբաբան, ինչպես տղա մը օգնութեան կը կանչէ իր հայրը:

Բայց այդ պահուն. էնկիդուն տկարութիւն մը զգաց, մարմինը թուլացաւ և թևերը թմրեցան: Էնկիդուն բերանը բացաւ և ըսաւ Գիլգամեշին.

— Բարեկամս, չիջնենք մայրիներու անտառը, ուր աստվածները կը բնակին: Թևերս թմրեցան:

Գիլգամեշ, բերանը բանալով, ըսաւ էնկիդուն.

— Ինչո՞ւ բարեկամս, մի՞թէ այդպես վախկո՞տ ենք: Հաջողութեամբ անցանք բոլոր բարձրաբերձ լեռներուն վրային, բայց տակաւին մեր նպատակին չենք հասած: Բարեկամս, կռիվներու մեջ սնած ու ճակատամարտերու փորձառու ո՞վ հերոս, — եթէ պատմուճանիս դպչիս, այլևս մահեն չպիտի վախնաս: Իբրև հերոս, քովս կեցիր. կովի մեջ արիաբար կողքիս կեցիր: Ձեռքերուդ թմրութիւնը թող անցնի. տկարութիւնը թող դադրի ու հեռանա: Բարեկա՞մս, կեցիր, միասին անտառին խորը երթանք, սիրտդ թող ոգևորվի կովով, մոռացիր մահը, բարեկամս: Բանն մը մի վախենար: Եթէ կովի դաշտը զորավոր մարդ մը զգուշութեամբ առջևեն երթա, թէ ինքզինքը և թէ ընկերը կը պաշտպանն: Եթէ մարդ կովի ընթացքին իյնա, կանմահանա:

Երկուքն ալ կանաչ լեռը հասան և իրենց խոսակցութիւնը դադրեցաւ:



2. Խոսնաբաբայի գլուխը

Այնտեղ կեցած, հանդարտորեն անտառին կը նայեին: Կը զմայլեին մայրիներու բարձրությամբ: Նաև անտառին մուտքը իրենց զարմանք կը պատճառեր: Ուրկե խումբաբան անցած էր, ոտքերուն հետքը դեռ հայտնի էր՝ ուղիղ և գեղեցիկ էին ճամփաները: Կը տեսնեին մայրիներու լեռը, աստվածներուն բնակավայրը. Իրնինիի նվիրական սուրբ տաճարը: Լեռան փեշերուն վրա կը բարձրանային հաստաբուն մայրիները, որոնց շուքը բերկրանքով ու զովությամբ լեցուն էր: Մայրիներուն տակը ծածկված էր խոլորձներով, լվիճներով, բաղեղներով, անուշահոտ ծաղիկներով, թավուտներով ու մացառներով:

էնկիդուն տապարը ձեռք առավ, ուրազ ալ ունեին, և սկսավ ընկերոջը հետ մայրիները ջարդել: Բայց երբ խումբաբան անոնց հարվածներուն աղմուկը լսեց, զայրացավ:

— Այդ ո՞վ է, որ եկեր լեռան նվիրական ծառերը կը պղծե. մայրիները կը կտրե: Եվ անոր ձայնը փոթորիկի մը նման թնդաց ու տարածվեցավ:

Երկնքեն արև-աստված Շամաշ ըսավ անոնց.

— Մի վախենաք, էլ ավելի մոտեցեք:

Գիլգամեշ, բերանը բացավ և ձայնը դեպի երկինք բարձրացուց.

— Միշտ հնազանդած եմ իրեն, երկնքի տեր հերոսին, քայլած եմ այն ճամփին, զոր ինձի համար որոշած է:

Երկնազոր Շամաշը, լսելով Գիլգամեշի սպառա-տանքը, կատաղի քամիներ բորբոքեց Խումբաբայի ճամփուն վրա՝ հյուսիսային հողմ, խորշակ, մրրիկ, փոթորիկ, ավազաբեր քամի, ցրտաշունչ քամի և տաք քամի: Անոր դեմ ութը տեսակ հողմեր հանեց, որոնք Խումբաբային քթին, բերնին և աչքերուն կը փշեին: Առաջ գնալն անկարելի էր, ետ դառնալն ալ կարելի չէր Խումբաբային համար:

Արդ՝ Խումբաբան ըսավ Գիլգամեշին.

— Քաջ Գիլգամեշ, թող ինձի: Դուն իմ տերս եղիր, ես ալ ստրուկդ կըլլամ: Ես քեզ համար կը ջարդեմ ծառերը, լեռներու ձեռնասունները և մայրի քաղցրաբույր փայտերով քեզի տուներ ու շենքեր կը կառուցեմ:

Բայց քաջ էնկիդուն ըսավ Գիլգամեշին.

— Մի լսիր, մի հավատա Խումբաբային խոսքերուն: Պետք չէ, որ ողջ մնա լեռներուն շար ոգին՝ Խումբաբան:

Ու միասին Խումբաբային դեմ ելան: Ճիվաղը ծառերուն տակը տեսան. գլուխը վայրի ցուլի

նման եղջյուրներ ուներ, մետաղյա ձուլվածքով ծածկված էր մարմինը. առյուծի թաթ և անգղի մագիլ ուներ, պոչը օձի կը նմաներ:

— Ելիր, էնկիդու: Արև-աստված Շամաշը թող մեզի կյանք պարգևե:

Նիզակներով ու աղեղներով խումբաբային վրան կը հարձակին: Նետերը անոր մարմինին մեջ չէին թափանցեր, ետ կը նետվին և ան կը մնար անհողդող և անվթար: Հիմա իրեն առջև կեցած է լեռան հսկան և ճիրանավոր թաթերով բռնած էնկիդուն: Բայց Գիլգամեշ արքան մարտական տապարը անոր գլուխին կիջեցնե և խումբաբան գետին կը փռվի: Դեռ քանի մը վայրկյան վիթխարի մարմինը կը գալարվի. ոտքերը և պոչը կատաղորեն կը շարժե օդին մեջ: Գիլգամեշ տապարով մը գլուխը վիզեն կը բաժանե: Հսկա մարմինը կը տանին, ժայռեն վար կը գլորեն, որպեսզի անգղներուն կեր դառնա: Եղջյուրավոր գլուխը երկար նիզակի մը վրա կամրացնին հետերնին կը տանին, իբրև հաղթական ավար: Խումբաբայի հնամյա ծառերուն մեջեն նեղ կածանների ու խուլթ կիրճերի անցնելով՝ վերջապես կը տեսնեն մայրիներով շրջապատված լեռը, ուր կը կգտնվեր մեծազոր աստվածներուն բնակավայրը: Երբ Իրնինի դիցուհիին ձյունաթույր, շողշողուն ու նվիրական աշտարակին կը մոտենային. հանկարծ աստվածային ձայն մը կը լսվի լեռան կատարեն: Անի Իրնինին էր, որ կըսեր.

— Ետ դարձեք: Ձեր գործը վերջացաւ: Քայլերնիդ դարձուցեք դեպի Ուրուկ քաղաքը, որ ձեր գալուն կը սպասե: Եվ ոչ մի մահականացու չկրնար ոտք դնել այս լեռան նվիրական կատարը, ուր աստվածները կը բնակին: Քանզի ով երկնային աստվածներուն երեսը նայի, կը մահանա: Տուն վերադարձեք:

Գիլգամեշ և էնկիդու քայլերնին դեպի տուն դարձուցին: Անցան անմատչելի անտառներե, լեռներու գահավեժ կիրճերեն. սեպ-անդունդներե ու տափաստաններե, ուր վայրի գազանները կը վրխտային: Իրենց վրա հարձակվող զարհուրելի առյուծներուն և հովազներուն հետ հաճախ կռվի բռնվելով կը սպաննին և անոնց մորթը կառննին: Գիշեր ցերեկ անդնդախոր կիրճերե, ահեղավազ գետերը անցնելե և դժվարամատուց երկար ճամփաներ կտրելե ետք, վերջապես կը հասնին պարսպապատ Ուրուկ, որուն բնակչութիւնը ցնծագին աղաղակներով կընդունի էնկիդուն և Գիլգամեշը, որ Խումբաբայի սարսափազդու զլուխը նիղակին ծայրը անցուցած, ուսին վրա դրած կրերեր:

Գիլգամեշ լվացվեցավ, ղենքերը փայլեցուց, իր գանգուր մաղերը ծոծրակն ի վար ձգեց, հանեց կեղտոտ հագուստները, հագավ նորերը, պատմուճանն ալ վրան առավ և գոտին կապեց: Երբ Գիլգամեշ խույրն ալ գլուխը դրավ. աստվածածին քաջի մը պես գեղեցկացավ: Իշտար՝ սիրո դիցուհին Գիլգամեշի գեղեցկությամբ հմայված, բռնկեցավ կրքով և անոր ցանկացավ:

— Գիլգամեշ, եկուր, սիրեկանս եղիր: Ինձի նվիրե սաղմդ, ո՛հ, ինձի նվիրե: Դուն ինձի ամուսին եղիր, ես ալ քու կինդ ըլլամ: Քեզ համար կառք մը լծել կուտամ, լազվարթե և ոսկեղեն կառք մը, անիվները կարմիր և ոսկեղեն, զարդարված ազնվագույն քարերով: Երկու սրընթաց ջորի պիտի լծվին կառքիդ: Մայրիի բուրմունքով օծված տունս պիտի մտնես: Մեր տունը մտած ատենդ իշխաններն ու թագավորները ոտքերդ պիտի համբուրեն: Արքաներն ու տիրակալները քո առաջ պիտի ծունկ շոքեն, երկրին բերքը, իբրև տուրք, քեզի պիտի բե-

րեն: Այժերդ երրվորյակներ, իսկ մաքիներդ երկ-
վորյակներ պիտի ծնին: Բեռնակիր էշդ ջորիի պես
թող քայլե: Նժույզդ հրեղեն ձիու մը պես սրընթաց
թող ըլլա և լծած ջորիդ իր նմանը շունենա:

Գիլգամեշ բերանը բացալ խոսելու համար և
ըսալ փառապսակ Իշտարին.

— Ինչո՞ւ կուզես, որ քեզ առնեմ: Մարմինիդ
համար օծանելիք և հագուստ կուտամ, ուտելու հա-
մար՝ հաց և աստվածային կերակուր և բազմապի-
սի արքայական ըմպելիք: Քո տունը ես կզարդա-
րեմ, քո շտեմարանը ցորենով կլցնեմ, քո կուռքերը
կհագցնեմ, բայց քեզի կին չեմ առներ: Դուն վա-
ռարան մըն ես, որ ցուրտին դեմ չի տաքցնեք, դուն
դըռնակ մըն ես, որ ցուրտին ու հովոն դեմ չի
պաշտպաներ, պալատ մըն ես, ուրկե ներս մտնող
հերոսը ալլևս դուրս չի գար, ջրհոր մըն ես, որ իր
ծածկոցը կը խորտակե, ձյութ մըն ես, որ կրողին
կը փակչի, տիկ մըն ես, որ բռնողին կը թրշե, քար
մըն ես, որ պատերը չի պահեր, վահան մըն ես,
որ երկիրը թշնամի զորքին կը հանձնե, կոշիկ մըն
ես, որ հագնողին ոտքը կը սեղմե:

Ո՞ր սիրողիդ երկար ատեն սիրեցիր. ո՞ր հովիվդ
երկար ատեն քեզի հաճելի եղաւ: Ահա քեզի հաշ-
վեմ քու բոլոր սիրեկաններդ ու սերերդ.

Մանկությանդ սիրահար Դոմուզին էր, որուն
տարեց տարի լաց ու մահ վիճակվեցաւ: Սիրեցիր
վառվռուն հովիվը, կապույտ ազուսիլը, զարկիր,

կոտրեցիր անոր թևերը և հիմա անտառները կը
թափառե՝ «ա՛խ, թևե՛րս» կանչելով: Սիրեցիր
առյուծը, գաղաններուն ամենազորը, բայց իրեն
երկու անգամ յոթնական հոր փորեցիր: Սիրեցիր
կովի մեջ սարսափ ազդող և հաղաթանակող նժույ-
զը, բայց մտրակը և խարազանը անոր համար իբրև
պատիժ սահմանեցիր: Որոշեցիր, որ յոթը երկժամ
վաղի և պղտոր ջուր խմե: Նաև անոր մորը՝ Սի-
լիլին լաց ու արցունք տվիր: Սիրեցիր խաշնարա-
ծը, որ մոխիրի տակ եփված պղակունդ դիզեց
առջևդ և ամեն օր գառնուկ մը զոհեց քեզի, բայց
դուն դայն ծեծեցիր և գայլի վերածեցիր: Այսօր
հոտադին հարազատ դավակները զինքը կը հալա-
ծեն և իր սեփական գամփոնները անոր ոտքը կը
խածնեն: Իշուլլանուն՝ այգեպանին ալ վերջապես
սիրեցիր, որ քեզի միշտ արմավի ողկույզ կը բե-
րեր, որպեսզի սեղանդ ճոխ ըլլա. դուն անոր ալ
ցանկացար, քովը գնացիր ու ըսիր. «Սիրելի Իշուլ-
լանու, եկուր, ուտենք աստվածներուն հացեն,
վայելինք ուժդ, ձեռքերդ բաց և մեջքս գրկե»: Այ-
գեպան Իշուլլանուն քեզի պատասխանեց.

«Ինձմե ի՞նչ կը պահանջես, ի՞նչ կը ցանկաս: Ինչ
որ մայրս շեփեց, այն ես շկերա, էլ ինչպես դյու-
թական և թովիչ կերակուրներեն ուտեմ և փորձու-
թյան մեջ իյնամ»: Երբ դուն անոր այս խոսքերը
լսեցիր, զինքը գանածեծի ենթարկեցիր ու կերպա-
րանափոխեցիր, հրամայեցիր, որ ոստայնի մեջ

բնակի, ոչ վեր ելլե, ոչ վար իջնա: Եւ եթե զիս ալ սիրես, ինձի ալ անոնց պես պիտի ընես:

Իշտար Գիլգամեշի խոսքերեն նեղացավ, շատ զայրացավ և, երկինք բարձրանալով, իր հայր Անուի և իր մայր Անտումի քովը գնաց և ըսավ:

— Հայրիկ, Գիլգամեշը զիս անարգեց, նզովեց. բոլոր իմ կախարդանքներս ու սերերս երեսիս տվավ:

Աստվածահայր Անուն, բերանը բանալով, ըսավ դուատրին, տիրուհի Իշտարին.

— Անշուշտ գրգռեցիր Ուրուկի արքան, անոր համար հրապուրանքներդ, քու բոլոր դյութանքներդ ու սաղրանքներդ երեսիդ տվավ:

Իշտար բերանը բացավ և ըսավ իր հայր Անուին.


— Հայր իմ, երկնային ցուլը երկիր ղրկե, որպեսզի Գիլգամեշ արքային սպանե: Եթե թույլ չտաս, որ երկնային ցուլը երկիր գա, այն ատեն սանդարամետին դռները կը բանամ, մարդակները կը քանդեմ, դարպասները բաց կընեմ, որպեսզի մեռելները հարություն առնեն և կենդանի եղածները լափեն: Աշխարհիս վրա մեռյալները առավել կըլլան, քան ապրողները:

Անուն բերանը բացավ և ըսավ իշխանավոր Իշտարին.

— Դուատր իմ, փափագդ կը կատարեմ, բայց այս բանը յոթը տարի սովի պատճառ կը դառնա: Մարդոց համար բավականաչափ հացահատիկ և



3. Մեռեննիպարդա արժայի կնիւր, աջ կողմում Գիլգամեշը,
ձախում՝ էնկիդուն



նախիրների համար հարկավորաչափ խոտ հավա-
քած ևս:

Եվ Իշտարը, բերանը բանալով, ըստով իր հայր
Անուին.

— Հայրիկ, մարդոց համար բավականաչափ
հացահատիկ և անասուններուն համար ալ հարկա-
վորաչափ խոտ հավաքել եմ, որպեսզի այդ յոթը
սուփի տարիներուն ուտեն և կշտանան: Դուն միայն
երկնային վայրի ցուլը երկիր դրկե:

Երբ Անուն իր աղջկա ըսածները լսեց, երկնա-
յին ցուլին կապը Իշտարի ձեռքը դրավ: Առավ, որ-
պեսզի հետը երկիր բերե և Ուրուկ քաղաքի դաշտին
մեջ արձակե:

Երկնային ցուլը հազիվ վար իջած էր, ամենու-
րեք ահ և սարսափ տարածեց: Իր առաջին շնչով
ու բառաշումով հարյուր ուրուկցի գետին տապա-
լեց, իր երկրորդ շնչով երկու հարյուր ուրուկցի ևս
զգետնեց: Իր երրորդ շնչով էնկիդուն վրա հար-
ձակվեցավ: էնկիդուն, հարմարագույն դիրք ընդու-
նած երկնային ցուլին վրա խոյացավ և եղջյուրնե-
րեն բռնեց: Երկնային ցուլին բերանն ահեղապես
փրփրեցավ և շողիքը վազեց. իր հաստ պոշով զար-
կավ էնկիդուն:

էնկիդուն բերանը բացավ և ըստով Գիլգամեշ
արքային.

— Բարեկամս, կը պարծենայինք, ուրեմն ահա
փորձենք: Ես քեզի սորվեցնել կուզեմ, ինչպես

պետք է ընել: Աշխատանքը պետք է մեր մեջ բաժնենք, բարեկամս: Ես ցուլին պոչեն կը բռնեմ, դուն անոր գլխուն և ծոծրակին միջև կը մխրճիս դաշույնդ:

Խորհուրդ տալե ետք էնկիդուն անհապաղորեն երկու ձեռքով բռնեց երկնային ցուլին պոչեն: Հերոս Գիլգամեշը վարժ ռազմիկի մը պես իր սուրը ուժով խրեց երկնային ցուլին ծոծրակին և եղջյուրներուն միջև:

Երբ երկնային ցուլը սպանեցին, նրա ջերմ սիրտը մարմինեն հանելով, Շամաշին առջև դրին: Մեծագույն երկյուղածությամբ երկրպագեցին Շամաշին, հետո ետ քաշվելով, երկու եղբայրները նստան իրարու քով:

Իշտար Ուրուկի պարիսպներուն վրայեն անցնելով, տաճարին կատարը ելավ և սկսավ անիծել.

— Վա՛յ քեզի, Գիլգամեշ, որ դիս նախատեցիր. վա՛յ քեզի, որ երկնային ցուլը սպանեցիր:

էնկիդուն, Իշտարի նզովքը լսելով, երկնային ցուլին դիակեն խոշոր ճուղը քաշեց, հանեց և իրեն նետեց.

— Եթե քեզ ալ բռնեի, քեզի ալ այսպես կընեի: Անոր աղիքները ալ հրապուրիչ թևերուդ կանցընեի: Եվ Իշտար այն ատեն բոլոր քրմուհիները իր շուրջը հավաքեց՝ պոռնիկները՝ անառակ ու քծնող

կանանց, անոնց հետ միասին սկսավ ողբալ երկնային ցուլին ճուռին վրա:

Երբ Գիլգամեշ կանչել տվավ մասնագետները, դինագործները և բոլոր վարպետները, որոնք զարմացան ցուլին եղջյուրներուն մեծության վրա: Երեսուն մինա¹ կշռող լազվարթե էին կերտված, անոնց պատյանին հաստությունը երկու մատ էր: Երկու կոտոշներուն պարունակությունը վեց կուռու² յուղ, Գիլգամեշ իր պաշտպան աստվածին՝ Լունգալբանդային նվիրեց իբրև օծանելիք ու եղջյուրները արքունիքին իր ննջարանը կախեց:

Եփրատ գետին մեջ ձեռքերնին լվացին և հետո իրարու ձեռք բռնելով, պարսպապատ Ուրուկի փողոցներեն հպարտությամբ անցան: Ուրուկի ժողովուրդը հավաքված էր զանոնք դիտելու համար:

Գիլգամեշ ըսավ Ուրուկի ժողովրդին.

— Ո՞վ է տղամարդկանց մեջ ամենագեղեցիկը:

Ո՞վ է հերոսներուն ամենաքաջը:

— Գիլգամեշն է տղամարդկանց մեջ ամենագեղեցիկը.

էնկիդուն է հերոսներուն ամենաքաջը:

Գիլգամեշ իր շքեղ պալատին մեջ այդ օրը ցընծության տոնակատարություն մը սարքած էր, ուր այսպես կը գեղգեղեր վարդաժպիտ կիներու խում-

¹ Մինա—ծանրության շափ մըն է, հավասար է 0,5 կգ:

² Կուռու—տարողության շափ մըն է, հավասար է մոտա֊վորպես 250 լիտրի:

բը: Սրինգ և պարերգ կը հնչեին լուսաշող սրահին մեջ:

Հետո երկու հերոսները իրենց անկողինը մտան և քնեցան:

Էնկիդուն հանկարծ վեր թռավ, երազը մտաբերեց և սկսավ պատմել իր բարեկամ Գիլգամեշին:

Յ Ո Ք Ն Ե Ր Ո Ր Դ Պ Ն Ա Կ Ի Տ

— Ինչո՞ւ մեծ աստվածները խորհուրդի նստան։
 Լսե, թե ի՞նչ երազ տեսա այս գիշեր։ Անուն, էնլիլը,
 էան և Երկնային Շամաշը խորհրդածության նստած
 էին։ Անունը սալ էնլիլին. «Որովհետև անոնք Երկ-
 նային ցուրը, ինչպես նաև Խումբաբան սպանեցին,
 պետք է, որ անոնցմե մահանա այն մեկը, որ լեռ-
 ներուն մայրիները ջարդեց»։ Սակայն էնլիլը սալ.
 «էնկիդուն թող մահանա, իսկ Գիլգամեշ թող չի
 մահանա»։ Երկնային Շամաշը սակայն հակառա-
 կեցավ դյուցազն էնլիլի ըսածին. «Քո հրահանգով
 չէ՞ր միթե, որ անոնք Երկնային ցուրը և վիթխարի
 Խումբաբան սպանեցին։ Արդ, պե՞տք է արդյոք, որ
 անմեղ էնկիդուն մահանա»։ Եվ էնլիլը զայրացավ
 Երկնային Շամաշին վրա. ըսավ, որ «Դուն ամեն օր
 իրենց և իրենց նմաններուն քով կիջնայիր»։

էնկիդուն հիվանդ պառկած էր Գիլգամեշին
 առջև, որուն աչքերեն արցունքները հեղեղի պես
 կիջներ.

— Եղբայր, սիրելի՛ եղբայր, աստվածները ինչո՞ւ եղբորս տեղը զիս անպարտ արձակեցին ու զայս մեղապարտ ճանաչեցին:

Եվ ապա.

— Ստիպված պիտի ըլլամ ուրեմն մահացած հոգիին քով, մեռած հոգիին դուռը նստիլ: Այլևս երբեք պիտի չկրնամ տեսնել աչքերովս սիրելի եղբայրս:

Էնկիդուն շի զգար Գիլգամեշին ըսածները. մերթլայն-լայն կը բանա մարած աչքերը և մերթ կը գոցե, ջերմութենեն նեղվելով: Աչքերուն առջևն է այն մայրիի մեծ դուռը, որ գոցած էր Խումբաբայի անտառը: Էնկիդուն վրա դարձյալ մարմուռք մը եկավ, շար դե մը բռնած էր գլուխեն. անդամներուն մեջ էր նորեն այն թմրությունը, զոր զգաց մայրիներու անտառին դուռը բացվելուն ատեն:

Հիվանդ էնկիդուն պահ մը աչքերը բացավ և սկսավ խոսիլ դուռին հետ, կարծես թե մարդ մը ըլլար ան. բայց անտառին դուռը մտածողություն չունի և իրեն ըսվածները շի կրնար ըմբռնել:

— Քսան երկժամ հեռվեն փնտրեցի քեզի համար ծառ մը, — ըսավ էնկիդու, — մինչև որ գտա կրկնակը շունեցող բարձր մայրիդ: Յոթանասուներկու կանգուն բարձրություն ուներ. քսանչորս կանգուն էր լայնքը: Ո՛հ, դուռ, նիպպուրում շինեցի քեզ: Եթե գիտնայի, որ քու այդ գեղեցկությունդ աղետալի և փայտիդ գեղեցկությունը այդքան մա-

հարեր է, կացինս կառնեի քեզ կը քանդեի և խսիր մը կկապեի դռանս:

Գիլգամեշ լսելով իր բարեկամին ղառանցանքը, բերանը բացավ և սկսավ տրտնջալ.— Եղբա՛յր, սիրելի եղբա՛յր, իզուր կանիծես: Մայրիներու դուռը շէր, որ քու առնական ուժդ առավ: Դուն էիր, որ ինձի հետ աստվածներուն նվիրական լեռը բարձրացար, ինձի հետ երկնային ցուլը սպանեցիր: Բարեկամս, արիարար կրե ցավդ, քաջ եղիր: Հիվանդությունդ կանցնի և հերոսային ուժդ կրկին կը գտնես:

Էնկիդուն այլևս չէր լսում Գիլգամեշին խոսքերը: Չայն մը կը հնչե էնկիդուին մեջ, և ան կը հիշե այն հին ժամանակները, երբ տափաստաններուն և լեռներուն վայրի անասուններուն հետ կը թափառեր, վիթերուն հետ հյութեղ խոտեր կուտեր և զուլալ ջուրեր կը խմեր: Ու սկսավ անեծք կարդալ որսորդին.

— Լսե ձայնս, երկնային Շամաշ, սլատժե այն որսորդըն, որ զիս կնոջ ծուղակը ձգեց: Կործանիր իր բոլոր ձեռք բերած արդյունքները, տկարացուր անոր ուժը, մերժե այն զոհերը, որոնք ոտքդ կը բերե, թույլ մի տար, որ վայրի անասունները թակարդը ձգե: Իր սրտին իղձը թող չկատարվի:

Հետո, էնկիդուին սիրտը ալ ավելի բորբոքվեցավ և ան ավելի կրքոտ կերպով սկսավ անիծել ցնձուհին՝ սիրո աղախինը.

— Յոսիուհի, կուզեմ քեզի աչնպիսի ճակատագիր մը մաղթիլ, որ հավիտյանս վերջ շունենա երկրիս վրա: Մեծամեծ անեծքներով կուզեմ անիծել քեզ: Նզովքը վրադ թող տեղա: Սովը և զրկանքը թող պակաս չըլլա տանդ մեջ: Քաղաքին աղբանոցներուն մեջ նետված կերակուրներու ավելցուկները ուտես և աղտոտ ամաններու շուքին տակը թող ըլլա մշտական կայանդ: Գինովը ու ծարավը թող երեսներդ շոյեն: Խուժանը թող երեսիդ պոռա. աշխարհիս դատաստանը թող միշտ քեզի դեմ ըլլա:

Արև-աստված Շամաշը էնկիդուին բերնեն ելած տրտունջի խոսքերը լսելի հետո, անհապաղ երկընքեն ձայն տվավ.

— Էնկիդու, ինչո՞ւ կանիծես ցնծուհին, որ քեզի աստվածարժան կերակուր տվավ, արքայական գինի խմցուց, գեղեցիկ պատմուճաններ հագցուց և փառահեղ Գիլգամեշը քեզի իբրև ընկեր տվավ: Գիլգամեշը հիմա իսկական եղբայրդ է: Շքեղ անկողինի մը վրա պառկեցուցած է քեզ, պատվական տեղ մը որոշած է քեզի համար, իր ձախ կողմը, խաղաղության մահճին վրա կը պառկեցնես քեզ և երկրիս իշխանները ոտքերդ կը համբուրեն: Քեզ համար լաց ու կոծ կընեն Ուրուկի ժողովուրդը: Սուգը ու տրտմությունը պատել է երջանիկ մարդկանց: Ինքը՝ Գիլգամեշն ալ, եթե քեզմե հետո ապրելու ըլլա, պիտի թողու, որ աղտը մարմինը ծածկե, առյուծի մորթ պիտի հագնի և անապատը պիտի իյնա:

Երբ էնկիդուն դյուցազնազոր Շամաշին խոսքերը լսեց, բորբոքած սիրտը հանդարտեցաւ: Դարձյալ բերանը բացաւ և, զղջումի գալով, թոթովեց.

— Յնծուհի, անեծքի խոսքերս ետ կառնեմ: Թագավորներ և իշխաններ թող սիրեն քեզ. երիտասարդները քեզ համար իրարու ոտք թող կոտորեն, ծերունիները թող իրենց գլխուն մազերը փետեն քեզ համար: Ան որ քեզ հալածեց, իր զենքը թող ոտքերուդ տակ դնե: Սարդիոն, մոլոշաքար, լազվարթ և ոսկի սլիտի ստանաս սիրուդ փոխարեն. աստված բոլոր բարություններով թող լեցնե տունդ: Քրմապետները թող քեզ աստվածներու տաճարը տանին: Կինը, յոթ զավակներու մայր ալ ըլլա, թող քեզ համար իր ամուսինեն լքվի:

Վշտահար էնկիդուն, մինակ պառկած կը քնանա: Գիշերը կարթննա և սիրտը բանալով բարեկամին կը պատմե:

— Բարեկամս, այս գիշեր երազ մը տեսա. երկինքը գոռաց, երկիրը արձագանքեց: Ես մին մենակ կեցած էի: Հանկարծ տխուր դեմքով մեկը հայտնվեցաւ, որ իր տեսքով հսկա թռչունի մը կը նմաներ. եղեգապատ ճանկ ուներ արծվի մագիլներու նման: Զիս իր խոշոր ճիրաններուն մեջ անեւ լով վեր բարձրացաւ. հետո զիս անհուն անդունդի մը խորը նետեց: Լեռան մը ծանրությամբ վրաս նստաւ: Այս ծանր բեռան տակ կը հեծծեի: Այս էակը զիս հանկարծ կերպարանափոխեց, այնպես

որ թեկերս թռչունի թեկերու պես փետուր ունեին: Հետո ինձի տարավ Իրկալլայի բնակավայրը, այն տունը, ուր մտնողը աչլես դուրս չելլեր, ուր մարդոց սնունդը փոշի և հող է, ուր մարդիկ թռչունի պես փետուրե հագուստներ հագած մութը նստած են և լույսին երեսը շեն տեսներ: Եվ այն հողե տունին մեջ, ուր ես մտա, կային խորտակված գահեր, դե-տինը ինկած թագեր, իշխանավորներ, արքայական խուլյր կրողներ, որոնք անհիշատակ ժամանակերե իվեր այս երկրին կիշխեին, Անու և էնլիլ դիցահայ-րերուն տեղապահները լինելով: Խորտակ, բաղարջ ու տիկերով պաղ ջուր անոնց առջև կը դնեին:

Այնտեղ, հողե տունին մեջ, ուր ես մտա, կապ-րին քրմապետները և անոնց սպասարկողները, հոն են կախարդական խոսքերով շար ոգիները ար-տաքսող և վերացնող քուրմերը, մոգերը, հոն են աստվածները օծողները: Այնտեղ կապրին էտա-նան, Սոամուկանը, էրեշկիգալը, դետնի թագուհին, Բելետսերին, երկրիս գրագրուհին, ծունկի եկած անոր առջև, պնակիտը բռնած կը կարդա: Ան հետո երեսը իմ կողմս դարձուց և զիս տեսավ, ձեռքերը ինձի երկարեց և զիս ալ քովը տարավ:

Գիլգամեշ լսեց էնկիդուին երազը ու շկրցավ արցունքը զսպել:

Երբ մայր թագուհին, ամենախիմաստունը, իր զավակին արտասվիլը տեսավ, ձեռքերը վերցուց և սրբեց անոր աչքերեն հոսող արտասուքը:

Գիւղամեջ բերանը բացաւ և ըսավ նինսունին.

— Մայրիկ, ես բարեկամիս համար կուլամ, եղբորս համար կուլամ, էնկիղուին համար. ոչ ոք կրնա ցալս ամոքել և զիս մխիթարել: Ես անոր հետ լավ օրեր անցուցած եմ Ուրուկի մեջ, անոր հետ նաև շատ մը դժվարութիւններ քաշած եմ, անոր հետ հեռավոր ճամփաներ կտրած եմ, և այժմ բարեկամիս տեսած շարագույժ երազը կը կատարվի:

Արդ էնկիղուն հիվանդ պառկած է մեկ օր, երկու օր: Մահը արդեն նստած է էնկիղուին ննջարանը: Երբորդ և շորբորդ օրը դեռ նստած է քովը, հինգերորդ, վեցերորդ և յոթներորդ օրը տակավին քովն է, ութերորդ, իններորդ և տասներորդ օրը դեռ քովը նստած է: էնկիղուին հիվանդութիւնը գնալով ավելի կը ծանրանա: Տասնամեկ և տասներկուերորդ օրը դեռ մահվան անկողինը պառկած է:

էնկիղուն պահ մը աչքերը բացաւ, Գիւղամեջ քովը կանչեց և ըսավ անոր.

— Չար անեծք մը զիս բռնեց, բարեկամս: Ես շեմ մահանա այնպես, ինչպես այն մարդը, որ կտապալվի կովի ընթացքին. ես ճակատամարտերե խուսափեցա, անոր համար անփառունակ պիտի մահանամ: Բարեկամս, եբանի շնոր, որ կովի մեջ կտապալվի, բայց իմ մահը, ա՛խ, ինձի համար ամոթ մըն է:

Ո Ի Թ Ե Ր Ո Ր Գ Պ Ն Ա Կ Ի Տ

Առավոտյան մթնշաղը անցնելու վրա էր, երբ Գիլգամեշ ելավ, էնկիդուին քով գնաց և, բերանը բանալով, ըսավ իր հիվանդ բարեկամին.

— Սիրելի եղբայր, շար դե մը նստած է ննջարանիդ մեջ, մարմինդ կը կրծե, գլուխդ ուտել կուզե, ես, անգին բարեկամս, շեմ կրնար քեզի օգնել:

Ցավեն ուժասպառ՝ էնկիդուն լուռ ու մունջ էր. խելակորույս պառկած հոգին կավանդեր: Գիլգամեշ լալով ըսավ.

— էնկիդու, կրտսեր եղբայրս, շատ կը ցավիմ, կուլամ, կողբակոծիմ քեզի համար: էնկիդո՞ւ, ավա՛ղ, ո՞ւր մնաց այն գերմարդկային ուժդ, ծաղկուն երիտասարդութունդ ու առնական ձայնդ: Ո՞ւր է, ո՞ւր է իմ նախկին էնկիդուն: Առյուծի և վայրի ցուլի պես ուժգնագույն էիր, վիթի նման արագավազ: Հարազատ եղբոր մը պես քեզ կը սիրեի: Քեզ բոլոր իշխաններեն վեր դասեցի և Ուրուկի բոլոր գեղեցիկ կիները քեզնե հիացած էին: Միասին մայրիներու անտառը գնացինք, գիշեր-

ցերեկ իրարու հետ էինք: Դուն էիր, որ ինձի հետ
նոստրաբային գլուխը պարսպապատ Ուրուկ քաղա-
քը բերիր, և լեռնաբնակ ժողովուրդը այդ ճիվաղին
ձեռքեն ազատեցիր: Երբ մենք հեռավոր լեռներեն
հաղթապանձ Ուրուկ քաղաքը կը վերադառնայինք,
ժողովուրդը ցնձագին մեզի կը մոտենար և մեզի
կօրհներ: Երկնային ցուլը բռնեցինք, սպանեցինք
ու ձեռքերնիս Եփրատի ջուրին մեջ լվացինք, և Ու-
րուկի ժողովուրդը կրկնակի մեզի փառաբանեց,
էնկիզո՛ւ, բարեկամս, արդյոք երկնային ցուլի՞ն
մահաբեր գոռոցը, պոռչրտուքը վնասեց քեզ: Եվ
կամ գոռոցե երկնային աստվածները մեզի դեմ
դայրացան ու պատժեցին մեզ անո՛ր համար, որ
փառաշուք Իշտարի վեհութունը անարգեցինք և
երկնքն բերած իր ցուլը սպանեցինք:

Գիլգամեշ ժամերով լռիկ-մնջիկ նստած էր էն-
կիզուին սնարին քով, բայց հայացքը հեռուները
կը թափառեր: Հետո ընկերոջը մահիճին քով կան-
չել տվավ քաղաքին իմաստալի մեծամեծները և
քաջընտիրները:

— Կսեցե՛ք, դիս մտի՛կ ըրեք, քաղաքի երևե-
լինե՛ր.— բարեկամիս՝ էնկիզուին համար կու լամ,
եղերամայրերու դառն ողբով կուլամ: Ա՛խ, դուն
որ մեջքիս տապարը, ձեռքիս աշեղը, գոտիիս սու-
րը, մարմնիս վահանը, տոնական զգեստս, իմ
միակ բերկրանքս էիր: Չար դեհ էր, որ եկավ խլեց
ինձմեն էնկիզուն, ազնիվ բարեկամս, կրտսեր եղ-

բայրս, ան, որ լեռներուն մենակյաց վայրի էշը, տափաստաններուն հովազը կը հալածեր: Մենք միասին մեր նպատակին հասանք, լեռները բարձրացանք, մայրիներու անտառին ահավոր կոմբարան զգեստնեցինք և երկնային ցուլը բռնեցինք, սպանեցինք: Ավա՛ղ, այդ ի՞նչ քուն է, որ ծանրացել է վրադ: Ա՛խ, այնքան ապշած ու մթագնած ես, որ շե՛ս լսեր զիս:

Սակայն իր բարեկամը, էնկիզուն, աչքերը շի բանար: Եվ Գիլգամեշ ձեռքը անոր սրտին կը տանի, բայց ան շի բաբախեր: Նորահարսի մը նման կը քողե զայն և սրտին բուռն ցավեն ու վշտեն կը սկսի մռնչել իր կորյունները կորսնցուցած էգ առյուծի մը նման: Գիլգամեշ կը դառնա էնկիզունին երեսըն կը նայե և ապա գլխուն մազերը կը փետե, գեղեցիկ պատմուճանները կը հանե, գետինը կը նետե և սզավոր աղտոտ զգեստ կը հագնե:

Հաջորդ առավոտ, մթնալուսուն, Գիլգամեշ դարձյալ սկսեց իր լացն ու կոծը բարեկամին վրա.

— էնկիզո՛ւ, տափաստաններու հովա՛ղ, մի՞թե տրտունջս, գոռում-գոչումս քեզ այդ խո՛ր քունեն շարթնցներ: Մի՞թե հայացքդ այլևս դեպի արևը պիտի շղարձնես: Չայնս շե՛ս լսեր, շե՛ս զգար եղբայրական սեր, որ կը տածեմ քեզ հանդեսս: Քեզ հոյակապ անկողինի մը վրա ես դնել տվի, պատվո մահիճի մը մեջ քեզ հանգչեցուցի, խաղաղության նստարանին վրա քեզ նստեցնել տվի, որպեսզի

երկրին իշխանավորները զան՝ ոտքերդ համբուրեն: Քեզ համար Ուրուկի երջանիկ ու կենսուրախ ժողովուրդը լաց ու կոծի մղեցի: Ես ինքս ալ, սրտակից ընկեր իմ, եթե քեզմե ավելի ապրելու ըլլամ, մարմինս աղտով պատած պիտի պահեմ, առյուծի մորթ պիտի հագնիմ և սարերը պիտի ելնիմ:

էնկիդուն, պատանքով պատած, պառկեր է և շի պատասխաներ. կյանքը այլևս իր պաղ անդամներուն շի վերադառնար: Այսպես անշարժ պառկած մնաց էնկիդուն ցերեկ մը և գիշեր մը և երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ ցերեկը և գիշերը: Գիլգամեշ ամեն առավոտ իր անմոռանալի բարեկամին դիակին վրա կուլար, կողբար: Սգավոր աղտոտ զգեստ մը հագած, գլուխը փռշեթաթախ, նա զուր կյանքի կը կանչեր իր տարաբախտ բարեկամը:

Երբ մահվան յոթներորդ օրը լրացավ, էնկիդունին մարմինը սկսավ նեխել և որդնոտիլ: Գիլգամեշ ավաղելով սրտակոտոր կը հառաչեր և բարձրաձայն կը պոռար.

— Էնկիդո՛ւ, իմ կրտսեր եղբայր, դուն իսկապես գնացիր Իրկալլայի տունը՝ այն մութ աշխարհ, որուն բնակիչներուն կերածը հող է: Այլևս մանկունակ ձայնդ չելլեր, աչքերդ չեն բացվիր, ոտքերդ չեն շարժիր, ձեռքերդ աղեղ չեն բռներ և տապար չեն շարժիր: Արդյո՞ք մեռած մըն ես, էնկիդու, բարեկամս: Դուն, որ այնչափ քաջ և ուժեղ էիր—մահը

քեզի հաղթեց, ի՞նչ պիտի ըլլա արդյոք իմ վիճակս: Արդյոք ես ալ քեզի պես պիտի մահանամ և որդերը պիտի կրծեն մարմինս, որ հող և փոշի պիտի դառնա:

Ութերորդ օրը Գիլգամեշ իր բարեկամ էնկիդուին փառավոր ու մեծաշուք թաղում կատարել տվավ:

Թագման հաջորդ օրը, արշալույսին հետ, Գիլգամեշ ազնիվ փայտե շինված խոշոր սեղան մը շտկել տվավ, սարգիոնե ամանով մը մեղր և լազվարթե շինված խոշոր պնակով մը կարագ սեղանին վրա դնել տվավ իբրև հոգևհաց էնկիդուին համար: Հետո առյուծի մորթ մը ուտեցուն վրա նետեց, զենք ու զրահ առավ և վշտակոտոր սրտով լեռները ինկավ:

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Գ Պ Ն Ա Կ Ի Տ

Գիլգամեշ գառնորեն կողքա իր դժբախտ բարեկամը՝ Էնկիդուն և տափաստանները կը դեզերե: «Եթե մեռնիմ, արդյո՞ք ես ալ պիտի չըլլամ այն, ինչ որ է Էնկիդուն: Թախիծը ու դաժան վիշտը բույն դրին սրտիս մեջ, մահվան երկյուղը կը զգամ հիմա և անոր համար տափաստանները կը թափառիմ: Ուտնապիշտիմի՝ Ուրար-Տուտուի զավակին քով կուղղեմ քայլերս, աճապարանքով անոր կը դիմեմ:

Գիշերը բարձրաբերձ լեռներուն կիրճերը հասա: Առյուծներ տեսա և վախեցա: Գլուխս դեպի երկինք բարձրացուցի, աղոթեցի Սինին, աստվածներուն ուղղեցի հայացքս ու պաղատանքս: «Պահպանեք զիս այս վտանգեն, ողորմած և ամենահզոր աստվածներ»:

Գիլգամեշ գիշերը քնեցավ ու գեշ երազն մը սոսկալով վեր թռավ: Առյուծներու կենսուրախ ոհմակ մը լուանակ գիշերով իրարու հետ կը գզվտեր: Գիլգամեշ կացինը քաշեց, սուրը պատյանեն հանեց և,

նետի մը արագությամբ շիկագուշն գաղաններուն վրա հարձակելով, ցրեց զանոնք:

Երկար ատեն քայլելիկ ետք լեռան մը մոտեցավ, որուն անունը Մաշո՛ւ: Երբ Մաշու սարին ստորոտներուն հասավ, երկու կարիճ-մարդու հանդիպեցավ, որոնք ամեն օր արևին ելքին և մուտքին կը հսկեին: Այդ երկու լեռներուն կատարին վրա կը հանդչի երկնակամարը, անոնց վարի ներքնամասը մինչև դժոխքին խորքը կը հասնի: Լեռան դուռը պահակ կեցած էին ահավոր կերպարանքով կարիճ-մարդիկ, որոնք լեռան ոտքեն մինչև գլուխը սարսափ և մահ կը սփռեին, ու կը հսկեին արևածագեն մինչև արևմուտ:

Երբ Գիլգամեշ զանոնք տեսավ, հայացքը մթազնեցավ անոնց ազդած ահեղութենեն ու ճիվաղային սարսափեն: Բայց շուտով ինքզինքին եկավ և գլուխ ծռեց անոնց առջև:

Այն ատեն կարիճ-մարդը ձայնեց իր կնոջ.

— Այն մարդը, որ դեպի մեզ կուգա, աստվածային մարմին ունի:

Կարիճ-մարդու կինը պատասխանեց.

— Երկու երրորդով աստված է, մեկ երրորդով մարդ է:

Կարիճ-մարդը իր մոտ կանչեց աստվածազարմ Գիլգամեշը և ըսավ անոր.

— Ինչո՞ւ այսքան հեռավոր և դժնդակ ճամփաներ կտրելով քովս եկար: Ինչո՞ւ վարարած գետերե՛ն՝ անցնելով մինչև այստեղ եկար: Կուզեմ գիտնալ, թե ի՞նչ է նպատակդ և մինչև ո՞ւր կուզես երթալ:

Գիլգամեշ, բերանը բանալով, ըսավ կարիճ-մարդուն.

— Սա ուրուկցի Գիլգամեշն եմ, տերը այն պարսպապատ քաղաքին, որ լեռներու կիրճերեն ու տողաններեն հեռու, տափաստաններեն և ջուրերեն անդին կը գտնվի: Էնկիդուին՝ բարեկամիս կորուստը կողքամ: Հիմա ես ալ մահեն կը վախենամ և լեռները կը թափառիմ: Էնկիդուին դառնաղետ ճակատագիրը զիս կը շարշարե: Հող դարձավ ան, որ այնքան կը սիրեի: Էնկիդուն հիմա նման է գետնի հողին: Նախահորս՝ Ուտնապիշմի քով երթալու համար երկիրներե, տափաստաններե անցնելով և լեռներ բարձրանալով, եկա քեզ հասա: Ան՝ Ուտնապիշտիմ աստվածներուն քով գնաց՝ փնտրեց և գտավ կյանքը: Անորմե կուզեմ իմանալ, տեղեկություն քաղել կյանքի և մահվան մասին:

Կարիճ-մարդը բերանը բացավ ու ըսավ Գիլգամեշին.

— Մինչև այսօր որևէ մեկը չէ կրցած կատարել այդ բանը, Գիլգամեշ: Չկա որևէ մահկանացու մը,

¹ Հոս խոսքը եփրատի և Տիգրիսի մասին է, որոնց անունը չէ հիշված:

որ այս լեռան մեջի ճամփեն անցած ըլլա: Տասներկու կրկնակ ժամ ճամփա պետք է կտրել, անկե անցնելու համար: Մութը այնտեղ շատ թանձր է, լույսին նշույլը չկա: Ճամփու մեկ ծայրը դեպի արևելք կը ծոխ և մյուս ծայրն ալ արևմուտք: Արեգակը այդ խոխոմեն դուրս կելլե, երկիրը լուսավորելու համար: Երբ արեւը գիշերը եկնային օվկիանոսեն կանցնի, մայր կը մտնե, հետո դարձյալ երկիր կը վերադառնա: Որևէ մահականացու այդ մութ ճամփեն տակավին չէ անցած: Այս լեռան ետեր կը գտնվի ծովը, որ ցամաքը շրջապատած է: Գուն շես կարող արևին ուղիեն երթալ:

Գիլգամեշ բերանը բացավ ու լալով ըսավ լեռնանցքին հսկող հսկային.

— Մահվան երկյուղը սիրտս կը ճմլե. միայն թշվառությունը ու դառնությունը պիտի ըլլա բաժինս. ուրեմն փրկե զիս այս բոլոր տանջանքներեն. թո՛ւյլ տուր որ ներս մտնեմ:

Կարիճ-մարդը բերանը բացավ ու խոսեցավ Գիլգամեշին.

— Գնա, Գիլգամեշ, քեզ համար Մաշու լեռան մուտքը կը բանամ, գնա և ճամփան գտիր: Մաշու լեռները աշխարհիս բոլոր լեռներեն ավելի բարձր են: Այս լեռան մեջ դարհուրելի և մութ վիհեր կան: Ուրեմն, երթաս բարով, դյուցազնասիրտ Գիլգամեշ, քարի. օոհ չըլլաս և առանց արկածի տուն վե-

րադառնաս: Լեռներուն դուռը, ուր մենք պահապան
կեցած ենք, թող բացվի առջևդ:

Գիլգամեշ կարիճ-մարդուն ըսածները գոհու-
նակությամբ լսելի հետո, լեռան դռներն մտալ և
արևին ուղիով շարունակեց իր ճամփան:

Մեկ երկժամեն մութ և անդնդախոր կիրճ մը հա-
սալ: Հետզհետե խավարը թանձրացալ, լույսին
նշույլը չկար, մութը մութով էր պատած, ոչ առջևը
կը տեսներ և ոչ ալ ետևը:

Երկու երկժամեն ավելի խորացալ: Լույսին
նշույլը չկար, մութը մութով էր պատած, ոչ առջևը
կը տեսներ և ոչ ալ ետևը:

Երեք երկժամեն ավելի քայլեց ու խորացալ:
Լույսին նշույլը չկար, մութը մութով էր պատած,
ոչ առջևը կը տեսներ և ոչ ալ ետևը:

Չորս երկժամեն ավելի խորացալ: Լույսին
նշույլը չկար, մութը մութով էր պատած, ոչ առջևը
կը տեսներ և ոչ ալ ետևը:

Հինգ երկժամեն ավելի խորացալ: Լույսին
նշույլը չկար, մութը մութով էր պատած, ոչ առջևը
կը տեսներ և ոչ ալ ետևը:

Վեց երկժամեն ավելի խորացալ: Լույսին նշույ-
լը չկար, մութը մութով էր պատած, ոչ առջևը կը
տեսներ և ոչ ալ ետևը:

Յոթը երկժամեն ավելի խորացալ: Լույսին
նշույլը չկար, մութը մութով էր պատած, ոչ առջևը
կը տեսներ և ոչ ալ ետևը:

Ութը երկժամ ճամփա կտրելն հտքը աղաղակեց: Խավարը թանձր էր, լույսին նշույլը շկար, ոչ առջևը կը տեսներ և ոչ ալ հտեր:

Երբ ինը երկժամեն ավելի խորացավ, զգաց հյուսիսային քամին և ուրախացավ, բայց տակավին մութ էր, լույսին նշույլը շկար, ոչ առջևը կը տեսներ և ոչ ալ հտեր:

Երբ տասը երկժամեն ավելի քայլեց, խավարը տեղի տվաւ, Էլքը մոտ էր:

Երբ տասնևեկ երկժամ ճամփա կտրեց, արևածագն առաջ լեռան մեջեն դուրս ելավ:

Այսպես ահա 12 երկժամ երթալն հտք, լույսը ծագեցավ:

Գիլգամեշ հեռվեն նշմարեց աստվածներուն պարտեզը և անոր քով փութաց: Սարդիոնն ծառը հոն իր պտուղը ուներ: Որթնատունկերը պատած էին զայն և խաղողի ողկույզները կախված էին անկե: Լազվարթն ալ տերև և զեղեցիկ տեսքով պտուղներ ուներ: Դարավոր մայրիներուն և կասկենիններուն վրայն կախված ազնիվ քարեր կը շողշողային: Կանաչ զմրուխտը ծովասեզի նման ծառերուն ստորտը տարածված էր: Հոս քեսի և ուղտափուշի տեղ գույնզգույն ազնիվ քարեր կը փայլեին: Պտուղին կուտը շափյուղա էր:

Գիլգամեշ պահ մը կը դանդաղեցնե իր քայլերը և աչքերը կը դարձնե աստվածներուն պարտեզին կողմը:

Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Գ Պ Ն Ա Կ Ի Տ

Գիցուհի Սիդուրին ծովեզրի գահին վրա բազմած, աստվածներուն պարտեզին կը հսկէ: Քրմուհիները անոր հրաշալի պատմուճաններ հագցուցած են, մեջքը գոտի մը կապած և ճակատը զարդարած են:

Գիլգամեշ, մորթ մը հագած, գլուխը աղտոտ, հանկարծ կը հայտնվի: Անոր մարմինը կազմված է աստվածային միսե, բայց ան իր մեջ անսահման, խոր ցավ մը ունի և իր արևախանձ դեմքով հեռավոր ճամփաներե եկողի մը կը նմանի:

Ծովադիցուհին, իր հայացքը դեպի հեռուն ուղղելով, կը խոսի, կը մտածե ինքնիրեն, խորհուրդ կուզե իր սրտեն ու կաղաղկե. «Ա՛ն, որ այս կողմը կու գա, ոճրագործ մըն է: Բայց ո՞ւր կը փութա այդքան արագ քայլերով»:

Երբ դիցուհին անոր մոտենալը տեսավ, փակեց դուռ ու երգիկ, կողպեց դուռը ու փականը քաշեց:

Բայց Գիլգամեշն անհապաղ բիրը առավ ու դուռը բախեց:

Գիլգամեշ, Սիդուրիին դառնալով, ըսավ.

— Գիցուհիդ, ի՞նչ տեսար, որ դուռդ ու երդիկդ առջևս գոցեցիր՝ ու կողպեցիր: Եթե դուռը գոցես և փականքը քաշես, դուռդ կը ջախջախեմ և փականքը ջարդ ու փշուր կընենմ:

Սիդուրին դուռը բացավ և դռան առջև քաջարի Գիլգամեշին ըսավ.

— Օտարակա՛ն, ո՞վ ես դուն և ո՞ւր կերթաս այդպես արագաքայլ: Ըսե, թե ինչպե՞ս կրցար անցնիլ Մաշու լեռան արևի դռնեն և ինչո՞ւ տապաւրովդ դուռս ջախջախել կուղես:

Գիլգամեշ, բերանը բանալով, պատմեց գիցուհիին.

— Ես պարսպապատ Ուրուկ քաղաքին Գիլգամեշն եմ, ջուրերուն, տափաստաններուն և սարերուն վրայեն և Մաշու լեռան մեջեն անցնելով նախահորս՝ Ուտնապիշտիմին քովը կերթամ:

Մովադիցուհին այսպես ըսավ իրեն.

— Գուն, որ պարսպապատ Ուրուկ քաղաքին Գիլգամեշն ես, պատմե տեսնեմ, թե ի՞նչ քաջագործություններ ըրած ես:

Գիլգամեշ կը պատմե Սիդուրիին.

— Ես բռնեցի ու սպանեցի այն ցուլը, որ երկնքեն վար իջած էր. սպանեցի անտառին հզոր պահապանը: Մայրիներու նվիրական անտառին մեջ բռնեցի և խորտակեցի ահավոր Խոամբաբան և լեռնային կիրճերու մեջ ապրող առյուծները:

Սիդուրին ըսավ անոր՝ Գիլգամեշին.

— Քանի որ դուն այն Գիլգամեշն ես, որ անտառապահը սպանեց, մայրիներու նվիրական անտառին մեջ ապրող խոամբարան խորտակեց, լեռներուն կիրճերուն մեջ ապրող առյուծները սպանեց և երկնային ցուլը մեռցուց, ուրեմն ինչո՞ւ դեմքդ սյգպես ծշուրած և դուխդ կախ է, սիրտդ ախար, երեւներդ մաշած: Ինչո՞ւ հոգիդ վիշտով և թախիծով լեցված է: Հետու վայրերե եկող ճամփորդի կը նմանիս, երեսներդ ցուրտին և արեխն շողին այրած է: Ինչո՞ւ, դահգ թողած, տափաստանները ու լեռները կը թափառիս:

Եվ Գիլգամեշ պատմեց դիցուհիին.

— Բարեկամս, էնկիդուն, որ ես անսահմանորեն կը սիրեի, էնկիդուն, որ ինձի հետ բազում զժվարություններե անցավ, ան մարդկային ճակատագրին արժանացավ: Գիշեր ցերեկ վրան լացի և սղբացի: Յոթը օր և յոթը գիշեր շթողուցի, որ թաղեն դիները, հուսալով, արդյո՞ք լաց ու կոծս լսելով ստրի շելեր սրտակից բարեկամս: Մինչդեռ որդը ինկավ երեսը: Բարեկամս անհետանալն հետո, այլևս չկրցա գտնել հանդիստ: Անոր համար վայրի տվազակի մը նման տափաստանները կը թափառեի: Արդ, հիմա, Սիդուրի՛, երեսդ տեսա, երանի՛ շտեսնեի մահը, որմն այնքան կը սարսափիմ: .

Մովադիցուհի Սիդուրին հարցուց Գիլգամեշին.

— Քաջարի Գիլգամեշ. ո՞ւր կը վազես, ո՞ւր կը փութաս: Կյանքը դոր կը փնտոես, շկրնա՞ս գտնել:

Երբ երկնային աստվածները մարդկութունը ստեղծեցին, մահը անոր բաժին հանեցին, իսկ կյանքը իրենց վերապահեցին: Ինձ լսիր, Գիլգամեշ, կեր ու խմի՛ր, գիշեր ցերեկ զվարճացիր, ամեն օր ուրախության հանդես սարքիր, զգեստներդ թող մաքուր ըլլան, զլուխդ լվացված ըլլա, մաքուր շուրով լողանք ըրե: Փոքրիկիդ երեսը նայե, որուն ձեռքեն բռնած ես, և կինդ թող ծոցդ ուրախանա և դուն ալ կնոջդ ծոցը: Ահա՛, այս է մարդկային կյանքին իմաստը:

Գիլգամեշ, թեև մտածեց Սիդուրիի տված խրատներուն վրա, բայց չկրցավ համոզել իր վրդովված սիրտը: Եվ այդպես բերանը բանալով ըսավ ծովադիցուհիին.

— Սիդուրի՛, ցույց տուր այն ճամփան, որ դեպի Ուտնապիշտիմը կը տանի: Ի՞նչն է այդ ճամփայի հայտարար նշանը: Ըսե, ցույց տուր այդ ճամփուն նշանակը: Եթե կարելի է, կուզեմ ծովը ճեղքել ու անցնել, եթե անկարելի է, կուզեմ տափաստաններեն վազելով երթալ:

Սիդուրին պատմեց խոռվահույզ Գիլգամեշին.

— Այս ծովը ծածնաղ տեղ մը շունի, ուրկե մարդ անցած ըլլա: Անհիշատակ ժամանակներն իվեր, շատ շատեր փորձած են անցնիլ այս ծովեն, բայց որեւէ մեկը չէ տակավին հաջողած: Միայն արևաստված Շամաշը, ամենակարող դյուցազնը, կրնա այս ծովեն անցնիլ: Շամաշեն զատ ո՞վ կրնա

այս ծովուն մյուս կողմը անցնիլ: Անցքը անմատ-
չելի է, ուղեորվիլ-անցնիլ մինչև մյուս ափը դժվա-
րին և տաժանելի է, մահվան ջրերը այնտեղ շատ
խոր են: Գիլգամեշ, ինչպե՞ս կուզես անցնիլ ծո-
վեն: Հետո ինչ պիտի ընես, երբ մահվան ջուրերուն
հասնիս: Սակայն տե՛ս, Գիլգամեշ, ահավասիկ
այնտեղ է Ուրշանարին՝ Ուտնապիշտիմի նավավա-
րը: այնտեղ, ուր տաշված քառակուսի քարերը կը
գտնվին: Ինքը քիչ առաջ անտառ գնաց աղցան և
հացապտուղ հավաքելու համար: Ուրեմն, գտիր
զինքը, թող երեսդ տեսնես: Եթե կարելի է, իրեն հետ
ծովուն մյուս կողմը անցիր: Եթե կարելի չէ, ետ
դարձիր:

Գիլգամեշ այս խոսքերը լսելով, տապարը վեր-
ցուց, սուրը մեջքին կապեց, պատյանեն հանեց և
անտառը մտավ: Հետո նետի պես սուրալով քարա-
կերտ կամուրջին քով գնաց: Նավը ծովափը կեցած
էր, բայց մեջը մարդ չկար: Նավավար Ուրշանա-
րին կը կանչե, բայց իզուր. որևէ մեկը երևան
չկլեր: Եվ ցասումեն քարերը ջարդ ու փշուր ընելե
հետո ետ կը դառնար: Ճամփան՝ անտառին մոտ
տեսավ Ուրշանարիին, որ և ըսավ Գիլգամեշին.

— Ըսե տեսնեմ, անունդ ի՞նչ է: Ես Ուրշանա-
րին եմ, հեռավոր Ուտնապիշտիմի ծառան ու նա-
վավարը:

Եվ Գիլգամեշ պատասխանեց նավավար Ուր-
շանարիին.

— Անունս Գիլգամեշ է, պարսպապատ Ուրուկեն կու գամ: Անուի երկրեն կու գամ, որ հեռուն, այն լեռներուն ետեր կը գտնվի: Կու գամ հեռավոր ճամփով՝ Շամաշի արահետով: Հիմա, երբ երեսդ տեսա, ցույց տուր ինձ Ուրշանաբի, հեռավոր Ուտնապիշտիմի տեղը:

Ուրշանաբին հարցուց Գիլգամեշին.

— Ինչո՞ւ այտերդ ծյուրած են: Ի՞նչ կը նշանակե մթազնած ճակատիդ խորշումները: Ինչո՞ւ տխուր է սիրտդ ու դեմքդ մաշած, ինչո՞ւ հոգիդ թախիծով և վիշտով լեցված է: Դեմքդ հեռու վայրերե եկող ճամփորդի կը նմանի. երեսներդ ցուրտեն և արևին շողեն այրված են: Ինչո՞ւ գահդ թողած՝ տափաստանները կը թափառիս:

Գիլգամեշ պատասխանեց Ուրշանաբիին.

— Ո՛հ, ի՞նչպես այտերս ծյուրած չըլլան, ի՞նչպես մթազնած ճակատս խորշումած չըլլա, սիրտս տխուր, դեմքս մաշած չըլլա, ի՞նչպես հեռու վայրերե եկող ճամփորդի մը շնմանիմ: Ի՞նչպես երեսներս ցուրտեն ու արևին շողեն այրված չըլլա, ի՞նչպես գահս թողած՝ տափաստանները շթափառիմ: Կրտսեր եղբայրս ու բարեկամս՝ էնկիդուն, տափաստաններուն հովազը, որ ինձի հետ մայրիներու լեռը բարձրացավ, սարսափազդու խռամբան զգեստեց, լայնատարած տափաստաններուն հովազը որսաց, ան հող դարձավ: Մէր փափազը կատարվեցավ, լեռները բարձրացանք, մայրիներու

անտառին Խոմբարան խորտակեցինք, լեռներուն
կիրճերուն առյուծները բռնեցինք, սպանեցինք:
Սպանեցինք նաև Երկնային ցուլը: Բարեկամս՝ էն-
կիդուն, զոր անսահմանորեն կը սիրեի, որ ինձի
հետ ամեն նեղութիւն քաշեց, ինձմե զատվեցավ:
Կրտսեր եղբայրս, որ անսահմանորեն կը սիրեի,
ինձի հետ ամեն դժվարութիւն քաշեց, մարդկային
ճակատագրին արժանացավ ու ինձմե բաժնվեցավ:
Վեց ցերեկ և յոթը գիշեր վրան լացի ու ողբացի,
թույլ շտվի, որ զինքը թաղեն, մինչև որ երեսը որդ
ինկավ: Բարեկամիս այս տխուր տեսքեն սարսա-
փեցա, մահն սոսկալով տափաստանները փախա:
Բարեկամիս դառն ճակատագիրը ծանրացած է
վրաս, ահա անոր համար ելա, տափաստաններուն
ճամփան բռնեցի: Էնկիդուն անողորմ ճակատա-
գիրը ծանրացած է վրաս, անոր համար ելա տա-
փաստաններուն ճամփան բռնեցի: Ոհ, ի՞նչպես
կրնամ լուռ ու մունջ մնալ, ի՞նչպես կրնամ տանիլ:
Բարեկամս, որ այնքան կը սիրեի, հող դարձավ:
Արդյոք ես ալ անոր պես պիտի շպառկի՞մ, որ-
պեսզի հավիտյանս հավիտենից շկրնամ պառկած
տեղեն ելլել:

Եվ Գիլգամեշ նորեն ըսավ անոր՝ նավաւար
Ուրշանաբին.

— Արդ, Ուրշանաբի, ո՞ւր է ճամփան, որ դեպի
Ուտնապիշտիմը կը տանի: Ի՞նչ նշան ունի: Ըսե,
ի՞նչ կըլլա, ըսե ինձի այդ ճամփուն հայտանշանը:

Եթե կարելի է, կուզեմ ծովն անցնիլ, եթե կարելի չէ, կուզեմ իրեն երթալ, տափաստաններն անցնելով:

Ուրշանաբին ըսաւ Գիլգամեշին.

— Զեռքերդ, Գիլգամեշ, արգելք եղան անցնելուն: Դուն ջարդեցիր կոփածո քարերը, որոնք ինձի համար իբրև կամուրջ էին մահվան խաղաղ ջուրերն անցնելու համար: Առանց անոնց կարելի չէ, սակայն դուն, Գիլգամեշ, տապարդ առ և դարձյալ անտառ գնա, ծառի հարյուր քսան շիտակ բուն կտրիր վաթսուն կանգուն երկարությամբ: Կեղևաթափ ըրե տաշե ու ինձի բեր:

Գիլգամեշ այս խոսքերը լսելով, կացինը առաւ, սուրը մեջքեն հանեց և անտառը մտաւ: Հարյուր քսան սլացիկ ծառի բուն կտրեց, վաթսուն կանգուն երկարությամբ. կեղևահան ըրաւ տաշեց և Ուրշանաբին բերաւ:

Ուրշանաբի և Գիլգամեշ նաւը ելան և կոհակները ճեղքելով հեռացան:

Մեկ ամսվան և տասնհինգ օրվան ճանապարհը միայն երեք օր կտրեցին երկուքը միասին: Ահա այսպես Ուրշանաբին մահվան ջուրերուն հասաւ:

Եվ այն ատեն Ուրշանաբին ըսաւ Գիլգամեշին.

— Հառա՛ջ, հառա՛ջ, Գիլգամեշ: Զող մը առ ձեռքդ և առաջ մղե նաւը: Բայց նայե, որ ձեռքդ մահվան ջուրին չդպչի: Երկրորդ, երրորդ և չորրորդ ձողն ալ վերցուր, Գիլգամեշ: Հինգերորդն, վեցե-

բորդն և յոթներորդն ալ վերցուր, Գիլգամեշ: Տաս-
ներմեկերորդ և տասներկուերորդ ձողն ալ վերցուր,
Գիլգամեշ:

Եվ քաջազոր Գիլգամեշը հարյուրքսան ձողը
ամբողջութիամբ սպառեց: Բայց չվարանեցալ, գո-
տին արձակեց, հագուստները պատռեց, հանեց և
ձեռքերովը վեր բարձրացուց իբրև առադաստ: Մինչ
Ուտնապիշտիմը դեպի հեռուները կուղղե հայացքը
և իր սրտին հետ խոսելով կը մտածե. «Ինչպե՞ս
կըլլա, որ նավուն կոփածո քարերը ջախջախված են
ու նավով մեկը այս կողմը կուգա, որ իրավունք
չունի: Եկողը իմ մարդկանցից չէ: Կը տեսնեմ, որ
եկողը մարդ ալ չէ: Կը նայիմ, թե արդյոք մարդ մը
չէ՞: Այդ արարածը բոլորովին ինձի կը նմանի:
Արդյոք ի՞նչ է սրտին փափագը»:

Գիլգամեշ և Ուրշանարի վերջապես ծովափը կը
հասնին: Գիլգամեշ նավակեն դուրս ելլելով կմտե-
նա Ուտնապիշտիմին, որ և կհարցնե իրեն.

— Անունդ ի՞նչ է, ըսե ինձի: Ո՞վ ես դուն, որ
հանդդնեցար մինչև քովս գալ: Ես Ուտնապիշտիմն
եմ, որ կյանքը գտալ:

Գիլգամեշ պատասխանեց Ուտնապիշտիմին.

— Անունս Գիլգամեշ է, պարսպապատ Ուրու-
կեն կու գամ, Անուի երկրեն: Հեռավոր ճամփաներ
կտրելով հոս եկած եմ, Շամաշի արահետով:

Ուտնապիշտիմը հարց տվալ Գիլգամեշին.

— Ինչո՞ւ այտերդ ծյուրած են: Ինչո՞ւ զլուխդ կախ է, ինչո՞ւ սիրտդ տխուր է. դեմքդ մաշած: Ինչո՞ւ հոգիդ ծանրաթախիծ վշտով լեցված է: Հեռու վայրերն եկող ճամփորդի կը նմանիս, երեսներդ ցուրտեն ու արեին շողեն այրած են: Ինչո՞ւ զահող թափուր թողած, տափաստանները կը թափառիս:

Գիլգամեշ պատասխանեց Ուտնապիշտիմին.

— Ո՛հ, Ուտնապիշտիմ, ի՞նչպես այտերս ծյուրած չըլլան, ինչպե՞ս զլուխս կախ չըլլա, ինչպե՞ս սիրտս տխուր չըլլա ու դեմքս մաշած: Ինչպե՞ս հոգիս ծանրաթախիծ վիշտով լեցված չըլլա, ինչպե՞ս հեռու վայրերն եկող ճամփորդի մը չնմանիմ: Ինչպե՞ս երեսներս ցուրտեն ու արեի շողեն այրած չըլլա, ինչպե՞ս թափուր չթողեի զահս ե չթափառեի տափաստանները: Կրտսեր եղբայրս ե բարեկամս՝ է՛կկիդուն, տափաստաններուն հովազը, որ ինձի հետ մայրիներու լեռը բարձրացավ, դարհուրելի հումբաբան զգետնեց, լայնատարած տափաստաններուն հովազը որսաց՝ հող դարձավ: Մեր փափազը կատարվեցավ: Լեռները բարձրացանք, մայրիներու անատը բնակող հումբաբան խորտակեցինք, լեռներու կիրճերուն մեջ առյուծներ բռնեցինք սպանեցինք: Կործանեցինք նաև երկնային ցուլը: Բարեկամս, է՛կկիդուն դոր՝ անսահմանորեն կը սիրեի, ոչ ինձի հետ ամեն դժվարություն քաշեց, է՛կկիդուն, կրտսեր եղբայրս, որ ինձի հետ ամեն նեղություն քաշեց, ինձմե բաժնավեցավ,

մարդկային ճակատագրին արժանացավ: Վեց ցե-
րեկ և չոթ գիշեր վրան լացի, թույլ շտվի, որպեսզի
զինքը թաղեն, մինչև որ երեսը որդի նկատվի: Բարե-
կամիս տխուր տեսքեն սարսափեցա, մահեն սոս-
կալով տափաստանները փախա: Բարեկամիս դառն
ճակատողիբը ծանրացած է վրաս, անոր համար
ելա տափաստաններուն ճամփան բռնեցի: Ո՛հ,
ինչպե՞ս կրնամ լուռ ու մունջ մնալ: Ինչպե՞ս
կրնամ հանդուրժել: Բարեկամս, որ այնքան կը
սիրեի, հող դարձավ: Արդյոք ես ալ օր մը անոր
պես պիտի չսպռակիմ, որպեսզի հավիտյանս հավի-
տենից չկրնամ պռակած տեղես ելլել:

Եվ նորեն Գիլգամեշ պատմեց Ուտնապիշտիմին.

— Որպեսզի Ուտնապիշտիմին՝ հեռավորին,
երանելիին բով դամ և զինքը տեսնեմ, երկրե երկիր
թափառեցա, բարձրաբերձ և անմատչելի լեռներե
անցա, բազմաթիվ հեղեղատներե և ծովերե ան-
ցա, աչքերս քաղցրանուշ բունի վայելքը շտեսան,
անհուն ցավ ու տանջանք կրեցի, անդամներս ու
հոգիս վշտարեկ թախիժով լեցվեցան, ծովադիցուհի
Սիդուրիին բով չհասած, հազուատներս արդեն վա-
ղուց մաշած էին: Արջ, բորենի, առյուծ, հովաղ,
վազր, եղնիկ, վիթ, վայրի քարայծ, տափաս-
տաններուն և լեռներուն վայրի անասունները որ-
սացի, որոնց միսը կերա և մորթը հաճա: Դիցուհին
ինձ տեսնելով իր դուռը գոցեց: Կուպրով ձողերը
ծածկեցի, մահվան ջուրերին ձեռքս չդիպցրի, Ուտ-

նապիշտիմ, Ուտնապիշտիմ արդ՝ պատմիր, թե ինչպես կյանքին տիրացար:

Ուտնապիշտիմը ըսավ Գիլգամեշին.

— Թափառումներդ ու ջանքերդ իզուր են: Կյանքը, զոր կը փնտրես, շես կընար հայթայթել. դուն մահկանացու էակ մըն ես, այդ մարդկության ճակատագիրն է, որուն դուն ալ ենթակա ես:

Գիլգամեշ ըսավ Ուտնապիշտիմին.

— Ուրեմն ես ալ էնկիդուին նման պետք է մահանամ, քնիմ առանց արթնանալու, հո՞ղ դառնամ: Ուրեմն իզուր էին տառապանքներս ու ջանքերս, մահը հաղթելու համար, իզուր է նաև մարմնիս աստվածային-անմահական մասը:

Ուտնապիշտիմ ըսավ Գիլգամեշին.

— Թո՛ղ, Գիլգամեշ, տրտունջդ և ցասումդ: Աստվածներուն ու մարդկանց ճակատագիրը նույնը չէ: Հայրդ ու մայրդ քեզ մահկանացու ծնեցին: Ծիշտ է, որ դուն երկու երրորդով աստված, իսկ մեկ երրորդով մարդ ես, բայց մարդկային մեկ երրորդ մահվան ենթակա է, և այդ է որ քեզ մարդկանց ճակատագրին կը կապե:

Գիլգամեշ հարց տվավ Ուտնապիշտիմին.

— Ինչպե՞ս, ըսե՛, կարելի չէ՞ միթե մահեն խուսափել, կարելի չէ՞ անոր հաղթել և փոխել մահկանացուին ճակատագիրը:

Եվ Ուտնապիշտիմ պատաւխանեց Գիլգամեշին.

— Մահ դաժան է և անգութ. նա ամեն կյանքի վերջ կու տա մշտապես: Շարունակ տուն չենք շիներ: Հավիտենապես դաշինք չենք կնքեր: Նղբայրները մշտնջենական ժառանգություն չեն բաժներ: Մարդ միշտ բազմանալու հաճույքը չի վայելեր: Ատելությունը աշխարհիս վրա հավիտենապես չի մնար: Անընդհատ և անվերջ գետը չի հորդիր և երկրին միշտ ջրհեղեղ չի բերեր: Աչքը միշտ արևին երեսը չի նայիր: Նախաժամանակներե ի վեր տևական ու հավերժ մնայուն չկա: Քնացողը և մեռյալը որքա՞ն նման են իրարու: Մի՞թե երկուքն ալ մահվան պատկերին չեն նմանիր: Ամենակարող Անհունակիները, մեծ աստվածները և Մ.ամ.Ճետուժը, — ճակատագիրը ստեղծող դիցուհին, մարդու ճակատագիրը կսահմանին, հոգիներուն կյանք և մահ կը բաշխեն, բայց մահանալու օրը չեն թողներ իմանալ:

Եվ Գիլգամեշն ըսավ Ուտնապիշտիմին՝ հեռավորին.

— Երբ քեզի կը նայիմ, Ուտնապիշտիմ, կը տեսնեմ, որ քու շափերդ տարբեր շեն, ինձմե ոչ երկար ես և ոչ ալ լայն: Դուն ալ ինձի պես ես, այո՛: Դուն տարբեր շես, այլ ինձի պես ես: Ահալի չէ ինձի համար քեզի հետ պայքարի մտնել: Դուն ալ ինձի պես կոնակիդ վրա կսպառկես: Արդ, ըսե ինձի, թե ինչպե՞ս դուն աստվածներուն շարքը անցար և ինչպե՞ս փնտրեցիր ու գտար կյանքը:

Ուտնապիշտիմ ըսավ Գիլգամեշին.

— Թաքուն բան մը կուզեմ հայտնել քեզի, Գիլգամեշ, աստվածներուն գաղտնիքը կուզեմ հայտնել քեզի: Անշուշտ կը ճանչնաս Շուրիպպակ քաղաքը, որ Եփրատի ափը կը գտնվի: Ան շատ հին քաղաք մըն էր, ուր աստվածները կը բնակին: Եվ արդ, աստվածները կորոշեն՝ ահա վոր ջրհեղեղ մը ընել: Խորհրդի նստած էին մեծադոր աստվածահայր Անու, գյուցազն էնլիլը, իրենց խորհրդական

նինուրտան, պաշտոնավար էննուգին և ջրերու խորութեանց աստված Նինիգիկու-էան: Այս վերջինը աստվածներուն որոշումն րւ հրամանը հաղորդեց եղեգնաշեն տնակին.

«Եղեգնատուն, եղեգնատուն, պատ-պատվար եղեգնատուն, լսիր դու պատ և իմացի՛ր: Շուրիպ-պակցի, Ուբար-Տուտուի որդի, տունդ քանդիր, տապան մը շինե, հարստութունդ թող և կյանքդ փրկիր: Գույքերեդ հրաժարե, հոգիդ ազատե, ամեն տեսակ կենդանի նավիդ մեջ վերցուր: Շինելիք նավուդ երկայնքը և լայնքը համաշափ պիտի ըլլա և վրան տանիք մը շինե»:

Գթասիրտ էային խոսքերուն իմաստը հասկնալով, ըսի տիրոջս.

«Տես, տեր, ինչ որ ինձի կը հրամայես, ակնածանքով կընդունիմ և կուզեմ կատարել հրամանդ, բայց ի՞նչ պիտի ըսեմ քաղաքին բնակիչներուն և մեծերուն»:

էան բերանը բացավ և ըսավ ինձի, իր ծառային.

«Ո՛վ, զավակդ աշխարհի, — պետք է իրենց այսպես ըսես. «Իմացս, որ այլևս էնլիլի աշքեն ինկած եմ, անոր համար շեմ կրնար ձեր քաղաքը բնակել: Էնլիլի երկիրը այլևս տեսնել չեմ ուզեր: Առայժմ տապանը կուզեմ իջնալ, ապագային տիրոջս՝ էայի մոտ բնակելու համար: Էան ձեր վրա վարար անձրևի պես առատութուն պիտի տեղա՝ առատ հավեղեն, ձկնեղեն և բերք պիտի պարգևե

ու երկիրը հարստութեան մեջ պիտի լողա, մինչև որ երեկո մըն ալ մութը պատեւ և տեղատարափ անձրև ու կարկուտ տեղա ձեր վրա»:

Արևածագին ամեն բան պատրաստեցի և ծովներք գնացի և սկսա տապանը պատրաստել: Փայտ, խայծղան և ուրիշ ինչ որ պետք էր, ճարեցի, նավուն հատակագիծը կազմեցի և դծեցի: Բոլոր ծառաներս, ուժեղ կամ տկար, գործի անցան: Հինգ օրեն տապանին արտաքին մասը ավարտվեցավ: Տապանին հատակը մեկ իկու¹ մեծութուն ուներ և պատերն ալ հարյուր քսան կանգուն բարձրութուն ունեին: Նմանապես հարյուր քսան կանգուն էր անոր տանիքեն եզերքը: Տապանը յոթ հարկեն էր: Հատակը ինը մասի բաժանեցի: Մեջտեղը գուբեր զետեղեցի և ջուրով լեցուցի: Տապանին ուղղութուն տալու համար երկար ձողեր ճարեցի. ինչպես նաև ուրիշ պիտույքներ, վեց շար² կուպր վառարանին համար, երեք շար խայծղան ամբարեցի: Բեռնակիրները երեք շար ձեթ ներս բերին. մեկ շար ձեթ դուռներ յուղելու համար պետք եղավ, երկու շար ձեթ ալ նավապետը պաշար ըրավ: Քաղաքին բնակիչները կերակրելու համար շատ արջառներ մորթեցի, ամեն օր ոչխար ալ կը սպաննէի: Գետի ջուրի

¹ Իկու—հարթաչափ մըն է, հավասար է մտտավորապես 1,3 հեկտարի:

² Շար կամ սար—տարողութեան չափ:

պէս առատ սուսամի յուղ, քաղցու և գինի խմցուցի
ու նոր տարվան տոնին պէս խնջուլք սարքեցի:

Յոթներորդ օրը տապանը պատրաստ էր: Բայց
զայն ջուրը իջեցնելը և բեռնելը շատ դժվար էր:
Տապանը հեծաններու վրա հանելէ հետո նիգերով
հրեցինք և վերջապէս ջուրը իջեցուցինք:

Նավուն երկու երրորդը ջուրին մեջ թաղվեցավ:
: Ինչ որ ունեի, նավին մեջ բարձրացրի ու տեղա-
վորեցի, որքան արծաթ և ոսկի ունեի, նավուն բեռ-
նեցի, նաև տեսակ տեսակ անասուններ նավ հանե-
ցի: Ընտանիքս ու տոհմս, բոլորն ալ նավի մեջ
լեցուցի: Նաև վայրի անասուններեն մեկ-մեկ հատ
հոն տարա: Բոլոր վարպետները նավուն մեջ
վերցրի:

Շամաշ ինձի հետևյալ պայմանաժամը որոշեց.
«Երբ խավարին տերը երեկոյան մթնշաղը տարածե
ու երկրիս վրա կարկուտ և անձրև տեղա, դուն ներս
բաշվե և տապանիդ դուռը գոցե»:

Որոշված ժամանակը եկավ. իրիկուն մը խավա-
րին տիրողները երկրիս վրա սոսկալի անձրև և
կարկուտ թափեցին: Դուրս նայեցա, տեսա, որ
զարհուրելի էր օդը: Տապանը մտա և դուռը գոցե-
ցի: Պուլուր-Ամուրի նավավարիս հանձնեցի նավ-
պալատս և անոր մեջ եղածները:

Առաջին աշգալուսը ծագելուն մութ և փոթորկա-
բեր ամպեր դիզվեցան երկնքին երեսը: Այդ միջո-
ցին սև ամպերուն մեջեն փայլակի և ամպրոպի

աստվածը՝ Ադադը որտաց. Շուլլատ և Խանիշ
անոր առջևն, իբրև սուրհանդակներ կը սուրային
լեռներու ու ձորերու վրայն: Էրագալ վերջապես
փրցուց աշխարհիս ղեկը, Նինուրտան գնաց և հա-
կառակ ուղղությամբ հոսանքներ առաջ բերավ:
Անհունակիները ջահերը բարձրացնելով կը լուսա-
վորին երկիրը իրենց սոսկալի լույսով: Ադադի զայ-
րույթը մինչև երկինք կը հասնի: Երկինք-գետինք
իրար կը խառնվին. լույսին նշույլը շի մնար, ամ-
բողջ երկիրը, կլոր կճիկի նման ջարդ ու փշուր
ըլլալով, կործանվեցավ:

Ամբողջ օր մը փոթորկաբեր հարավային քամի
փչեց, ջուրերուն տակ թաղեց լեռները, խեղդամահ
ընելով մարդկությունը: Երկրիս վրա մարդիկ այլևս
իրար չէին տեսներ, աստվածներն ալ մարդկանց
չէին տեսներ: Աստվածներն ալ այս ահեղ ջրհեղե-
ղեն սարսափեցան, Անուի երկինքէ բարձրացան,
շուներու պես կծկտեցան և դուրսը թափոր կաղմե-
ցին: Մենդաբերողի մը նման կը ճշի Իշտարը, գե-
ղաձայն դիցամայրը կողբա. «Ինչ որ կար, հող
դարձավ, վասնդի աստվածներուն ժողովին մեջ
վատ խոսեցա: Աստվածներուն ժողովին մեջ շար
խոսքեր արտասանելով՝ կոխվ ստեղծեցի. ժողո-
վրդիս բնաջնջման պատճառ եղա: Իմ արդանդես
ծնած մարդկությունը ձկնիկներու պես ծովին մեջ
թափված են»:

Անհունակիներն ալ լալազին կողբան դիցամոր հետ. աստվածները կկզած՝ կուլան ու կողբան դողդոջուն շրթունքներով:

Վեց օր և յոթը դիշեր քամին դեռ սաստիկ կը փշեր. վիշապ հողմն ու հեղեղը երկրիս վրա կը նետվին: Քոհուրոհը յոթը օր տեւիւ հետո, հարավային քամին վերջանլես հաղթեց վիշապ հողմին, դո՛րքի նման կռիւ մղելի ետք: Ծովը վերջապես հանդարտվեցավ ու խաղաղվեց: Վիշապ հողմը տեղի տվավ և ջրհեղեղը վերջացավ:

Նվայն ատեն երգիկը բացի. լույսը երեսիս զարկավ, օդին երևուլթը տեսա ամենուրեք լոռի-թլուն. ամբողջ մարդկային սերունդը հող դարձած էր: Տափարակ տանիքի մը նման փուլած էր ճահիճը: Գետինը ծունկի գալով լացի, արցունքներս երեսներես վար վազեցին:

Ծովուն մեջեն ափերուն կը նայի, տասներկու երկժամեն կզգի մը երևան ելավ: Այնտեղ, Նիսիր լեռան մոտ կանգ առավ տապանը: Նիսիր լեռան վրա հանգչեցավ տապանը ու չկրցավ այլևս տեղեն շարժիլ: Օր մը, երկու օր Նիսիր լեռը պահեց տապանը և շթողուց, որպեսզի տեղեն շարժի: Երեք և չորս օր Նիսիր լեռը պահեց տապանը և շթողուց, որ տեղեն շարժի: Հինգ և վեց օր Նիսիր լեռը պահեց տապանը և շթողուց որ տեղեն շարժի: Յոթներորդ օրը աղավնի մը տապանեն դուրս արձակեցի: Ցամաք չգտնելով վերադարձավ: Հետո ծիծեռնակ մը

տապանեն դուրս արձակեցի: Ան ալ ցամաք չգտնելով վերադարձավ: Վերջապես ազուով մը տապանեն դուրս արձակեցի, թռավ, իջավ հոն ուր ջուրը ցամքած էր, կերավ, պճոթկեց, կոշեց և շվերադարձավ: Հետո տապանեն դուրս արձակեցի ամենքը — մարդիկ և անասունները — և շորս հովերուն հանձնեցի: Զոհ մը ըրի և լեռան գլուխը հատիկ ցանեցի, իբրև մատաղ, երկու տեղ յոթնական աման դրի և անոնց մեջ մուրտ, խնկեղեն և մայրի ծխեցի:

Աստվածները վերեն հոտը առին: Շատ շանցած աստվածները ճանճերու պես մատաղին շուրջը հավաքվեցան: Երբ մեծ դիցամայրը եկավ, բարձրացուց իր մեծարժեք գոհարները, որոնք աստվածահայր Անուն շինած էր իր փափագին համաձայն. «Ոհ, աստվածներ, ինչպես որ ես վիզես կախված լազվարթը շեմ կրնար մոռնալ, այնպես ալ կուզեմ միտքս պահել այս օրերը, որպեսզի հավիտենապես շմոռնամ: Արդ, աստվածները թող այս հաճելի մատաղին մոտենան, բայց էնլիլը թող այս աստվածավայել մատաղին չի մոտենա, քանզի ան էր, որ առանց մտածելու և կշռելու ջրհեղեղ հանեց և իմ ժողովուրդս տիղմին մեջ խեղդամահ ըրավ»:

Դյուցազն էնլիլ երբ եկավ, տապանը տեսավ, բարկութենեն կրակ կտրեցավ և Իգիգի-աստվածներուն դեմ զայրանալով ըսավ. «Հոգի մը մահեն ազատված է: Որևէ մեկը պետք չէր, որ ազատեր, տիղմին մեջ մնալու էր»:

Նինուրտան բերանը բացած խոսելու համար և ըսավ դյուցազն էնլիլին. «էայն զատ ո՞վ կրնա այսպիսի ծրագիրներ մշակել: էան է, որ ամեն բանի ատակ է»:

էան բերանը բանալով, ըսավ դյուցազն էնլիլին.

«Դյուցազն, դուն որ բոլոր աստվածներեն իմաստուն ես, ինչպե՞ս կրցար անխոհեմ կերպով ջրհեղեղ անել: Թող միայն այն քավեր մեղքը, ով որ մեղավոր էր, թող պատժվեր միայն այն, ով որ ոճրագործ էր: Պետք էր որ համբերեիր, ոչ թե սպանեիր: Փոխանակ ջրհեղեղ հանելու, կրնայիր առյուծ մը արձակել, որ մարդոց թիվը պակասեցներ, ջրհեղեղիդ փոխարեն, ավելի լավ կըլլար, եթե գայլ մը գար և մարդոց թիվը պակասեցներ, ջրհեղեղիդ փոխարեն կրնայիր սով մը բերել աշխարհիս վրա: Ջրհեղեղիդ փոխարեն ավելի լավ կըլլար, եթե համաճարա՛իը դա՛ր և ոչնչացնէր մարդկությունը: Բայց ես շուղեցի մեծ աստվածներուն գաղտնիքը հայտնել: Եղեգե պատին մեջն մեծ իմաստունին՝ Ուտնապիշտիմին միայն երազ մը ղրկեցի: Ահա այն այսպես տեղեկացավ աստվածներուն գաղտնիքին: Այժմ դու նրան խորհուրդ տուր:

էնլիլ ալ նավս բարձրացավ, ձեռքս բռնեց, որպեսզի ես և կինս տապանես իջնանք: Հետո հրամայեց, որ կինս ծունկի գա քովս: Ապա ինքը երկուքիս մեջտեղը կեցավ, ձեռքը մեր ճակատին դնելով մեզ օրհնեց. «Ուտնապիշտիմ նախապես

մարդու զավակ էր, ասկե հետո մեզի, աստվածնե-
րուս, հավասար են Ուտնապիշտիմը և իր կիներ: Արդ
այնտեղ հեռուն, գետաբերանին մոտ թող բնակի
Ուտնապիշտիմը»: Այսպես զիս տարին ու հեռուն,
գետաբերանին մոտ բնակեցուցին:

Ո՞վ պիտի կրնա հիմա աստվածները շուրջդ
հավաքել, որպեսզի դուն, Գիլգամեշ, կարող ըլլաս
գտնել կյանքը, զոր կը փնտրես: Եկուր անգամ մը
փորձե տեսնեմ, կը դիմանաս առանց քունե վեց
ցերեկ և յոթ գիշեր:

Գիլգամեշ գետինը նստելուն պես, քամու նման
համակեց նրան քունը: Ուտնապիշտիմ ըսավ կնոջը.

— Ահա, տես քաջ մարդը, որ կյանքին կը բաղ-
ձա: Քունը քամու նման վրան հարձակեցավ:

Կինը ըսավ Ուտնապիշտիմին.

— Շոշափե մարդը, որպեսզի ան արթննա, և
ողջ առողջ երթա իր երկիրը, նույն ճամփով հասնի
ուրկե եկավ: Երթա մտնե այն դռնեն, ուրկե դուրս
ելավ:

Ուտնապիշտիմ ըսավ իր կնոջը.

— Այո, դուն բարի ես, կը ցավակցիս մարդուն:
Ուրեմն ելիր, իրեն համար հաց եփե ու սնարին
տակը դիր և պատին վրա խազե այն օրերը, որոնք
քնանալով կանցնե:

Կինը Գիլգամեշին համար հաց եփեց և անոր
սնարին տակը դրավ և այն օրերը, որոնք քնանա-
լով անցուց, պատին վրա խազեց: Առաջին անգամ

Թիսված հացը բուրբուղին շորցավ, երկրորդը՝ բոթ-բոթ եղավ, երրորդը՝ բորբոսանեց, չորրորդը՝ արդեն ճերմակացած էր: Հինգերորդը՝ դուլն կառնե, վեցերորդը՝ արդեն եփած է, յոթներորդը՝ դեռ թոնիրը չդրած և ահա, իմաստուն Ուտնապիշտիմը արդեն մշտեց Գիլգամեշը և ան արթնացավ:

Գիլգամեշ բերանը բացավ և ըսավ Ուտնապիշտիմին՝ հեռավորին.

— Հազիվ քունը աչքս ինկավ, դիս մշտեցիր և քունս խոռվեցիր: Ուտնապիշտիմ ըսավ Գիլգամեշին.

— Ելիր համրե, Գիլգամեշ, ելիր համրե հացերդ, որպեսզի գիտնաս, թե քանի օր քնեցիր: Առաջին անգամ կողված հացը բուրբուղին շորցավ, երկրորդը՝ բոթ-բոթ եղած է, երրորդը՝ բորբոսանած է, չորրորդը՝ արդեն ճերմակացած: Հինգերորդը՝ դուլն կառնե, վեցերորդը՝ արդեն եփած է, յոթներորդը՝ դեռ թոնիրը չդրած, արդեն արթնցար:

Գիլգամեշ ըսավ հեռավորին՝ Ուտնապիշտիմին.

— Վա՛յ ինձի, ի՞նչ կրնամ ընել, ո՞ւր կրնամ երթալ, քանի որ քունը, ավազակի մը նման, օձիքես բռնեց: Ննջար: անս նստած է մահը, ուր ալ որ ոտքս դնեմ, այնտեղ է մահը:

Եվ Ուտնապիշտիմ ըսավ իր նավավարին՝ Ուրշանաբիին.

— Չըլլա որ ուրիշ անգամ այս քարափը ոտք կոխես, Ուրշանաբի, չըլլա, որ ուրիշ անգամ որևէ

մեկը ջուրեն այս կողմ անցկացնես, շրլա, որ ուրիշ անգամ որևէ մահականացու մը ջուրին այս կողմը անցկացնես և կայքս բերես: Ահա նայիր վրան, տես գլուխը այն մարդուն, դոր այստեղ բերիր: Ամբողջ մարմինը աղտով ծածկված է, հագած մորթերը անոր անդամներուն գեղեցկությունը այլափոխած են: Ուրշանաբի, հետդ առ և ջուրին քովը տար զինքը, որպեսզի լվացվի և ձյունին պես ճերմկի: Թող կեղտոտ մորթերը վրային հանն, նետե, որպեսզի ծովը տանի: Իր գեղեցիկ և ձյունաթուլը մարմինը թող նորեն երևան գա: Գլուխը թող նոր փաթթոց մը կապե, նոր հագուստ հագնի, ամոթը գոցելու համար: Մինչև որ Գիլգամեշ եկած ճանապարհներով իր պարսպապատ քաղաքը՝ Ուրուկ շհասնի, թող շմաշի ու նոր մնա:

Ուրշանաբին առավ ու ծովափը տարավ Գիլգամեշը, որ հոն լողանք ըրավ և մաքրվեցավ և ձյունի պես ճերմկեցավ: Մորթը ջուրին մեջ նետեց որպեսզի առնի, տանի: Մարմնի գեղեցկությունը երևան եկավ: Գլխուն փաթթոցն ալ նորոգեցավ, նոր հագուստ մը հագավ ու ամոթը գոցեց: Եվ մինչև որ եկած ճանապարհով իր պարսպապատ քաղաքը շհասավ, հագուստին գույնը շնտեց, շմաշեցավ:

Գիլգամեշ և Ուրշանաբի նավը նստան ու մեկնելու վրա էին, երբ Ուտնապիշտիմին կինը ըսավ իր ամուսնուն՝ հեռավորին.

— Գիլգամեշ շարշարվեցաւ, մաքառեցաւ ճիգ թափեց, որ այստեղ գա: Անշուշտ բան մը պիտի տաս, որ հետը տանի:

Գիլգամեշ երբ այս խոսքերը լսեց, ձողը վերցուց և նաւը դարձյալ դեպի ծովափ հրեց:

Ուտնապիշտիմ ըսավ Գիլգամեշին.

— Դուն, ո՞վ Գիլգամեշ, շարշարվեցար, մաքառեցիր, ճիգ թափեցիր այստեղ եկար, ի՞նչ կրնամ տալ քեզի որ հետդ տանիս: Գիլգամեշ, կուզեմ քեզի գաղտնիք մը տալ: Այո, անծանոթ, կենարար բույսի մը տեղը պիտի ըսեմ քեզի, բույսի մը տեղ, որուն արմատները և ճյուղերը փշատիի կը նմանին և վարդենիի նման կը խայթեն ձեռքդ: Եթե կրնաս այս հրաշագործ բույսին տիրանալ, որ Եփրատի ջուրերուն մեջ կաճի, մշտնջենապես երիտասարդ կը մնաս:

Գիլգամեշ այս խոսքերը լսելով, ոտքերուն ծանր քարեր կապեց, ջուրին խորը սուզվեցաւ, քաշեց, արմատով հանեց հրաշագործ բույսը, որ ձեռքը խայթեց: Երբ քարերը ոտքերեն արձակեց, ալիքները զինքը նորեն գետափ նետեցին:

Գիլգամեշ ըսավ նավավ:սրին՝ Ուրշանարիին.

— Ուրշանարի, այս կախարդական բույս մըն է, որ մարդուս կյանք և շունչ կուտա: Կուզեմ զայն Ուրուկ տանել ու ծերերին տալ, որ ուտեն: Այդ բույսին անունը «ծերը երիտասարդացնող» է: Ես

ալ կուզեմ այդ կասկեանիին պտուղեն ուտել հավետ
երիտասարդ մնալու համար:

Ողջ առողջ ծովը ճեղքեցին, գնացին և քսան
երկժամ երթալն հտք քիչ մը հաց կերան: Երեսուն
երկժամ ճամփորդելի հտքը հանգչեցան ու քնե-
ցան:

Գիլգամեշ զով ջուրով լեցուն ավազան մը տե-
սավ, մեջը նետվեցավ լողանքի համար: Օձ մը այդ
դյուրեկան բույսին հոտը աւնելով, գաղտագողի
սողաց, ջուրեն դուրս ելավ և այդ կենարար բույսը
գողցավ, կերավ ու վերագարծին շապիկը փոխելով
երիտասարդացավ:

Գիլգամեշ կը նստի արշուն-արցունք կը թափե.
կուլա և արտասուքը երեսն ի վար կիջնե: Ուրշանա-
բիին դառնալով կըսե.

— Ո՞ւմ համար շարշարվեցա, որո՞ւն օգտին
հոգնեցան թևերս: Որո՞ւ համար սրտես արշուն կը
հոսի: Ա՛խ, ինձ համար բարիք չըրի, այլ գետնի
սողունին բարիք ըրի:

Քսան երկժամ ճամփա կտրելի հտք, իրենց պա-
շարեն քիչ մը կերան, երեսուն երկժամ քայլելի հտք
հանգչեցան ու քնեցան:

Երբ վերջապես պարսպապատ Ուրուկ հասան,
Գիլգամեշ ըսավ նավավար Ուրշանաբիին.

— Ուրուկի պարսպների վրա ելի՛ր, Ուրշանա-
բի, ելի՛ր և տես, թե որքան ամուր են շինված, քննե
անոնց հիմքը, տե՛ս, թե արդյոք թրծված աղյուսնե-



4. «Գիլգամեշ» դուրսագներգության պնակախոններից մեկը

րե՞ շինված են, արդյոք անոնց հիմքը յոթ իմաս-
տունները շե՞ն դրեր: Մեկ սար քաղաքն է, մեկ սար
պարտեզները, մեկ սար ալ արվարձանները, ուրեմն
երեք սար երկարութուն ունեցող պարիսպներով
շրջապատված է Ուրուկը, բացի Իշտարի տաճարին
շուրջ գտնվող հողեն, որ խոպան ձգված է: Այս
քաղաքին սահմանին մեջ կալված մը, պարտեզ մը
և փանանոց մը թող բուկդ ըլլան, Ուրուկի մեջ տուն
մը շինիր և օրերդ խաղաղությամբ ապրե:

Տ Ա Ս Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Դ Պ Ն Ա Կ Ի Տ

Գիլգամեշ կը թագավորն բարձր պարիսպներով շրջապատված Ուրուկի մեջ: Բայց սիրտը անհուն վիշտով ու թախիժով լեցված է և հանգիստն իր խոռված: Մեծամեծ դժվարություններ քաշելով հեռավոր երկրներ թափառեցավ, անմատչելի կիրճերն ու լեռներն անցնելով մինչև աշխարհիս մյուս ծայրը հասավ, ծովերն և մահվան ջուրերն անցնելով, հեռավոր Ուտնապիշտիմին քով գնաց, որ իրեն ջրհեղեղի պատմությունը պատմեց և կենարար բույսին տեղը ցույց տվավ: Հավիտենական կյանքը գտնելու իր բուն ցանկությունը շիրականացավ: Մահվան երկյուղը սրտին մեջ և հանգիստը խոռվված, կաղաղակե. «Ուրեմն ես ալ այնպես պիտի մահանամ, ինչպես է՛կիդուն, այնպես, ինչպես ամեն մարդ: Մեզմե որևէ մեկը պիտի չկրնա՞ մահեն խուսափել: Ինչի՞ պիտի վերածվի մարմինս: Ի՞նչ կա վարը, Իրկալիի բնակած տեղը, մութ աշխարհը, ուրկե անգամ մը ներս մտնողը այլևս դուրս չելլեր»:

Գիլգամեշ կը խորհի, կը մտմտա, բայց ճար չի կրնար գտնել: Հանկարծ կորոշե սանդարամետեն կանչել տալ էնկիդուին ուրվականը: Կուզե խոսիլ իր մեռած բարեկամին հետ, կուզե ուղղակի անոր բերնեն իմանալ ճշգրիտ լուր մը մեռյալներու աշխարհին մասին:

Գիլգամեշ արքան բոլոր մոզերը, կախարդները և ոգեհարցուկները իր քով կանչելով կը հրամայե, որպեսզի կախարդական խոսքերով էնկիդուին ուրվականը դուրս կանչեն սանդարամետեն.

— Ըսեք ինձի, մոզեր ու քրմապետներ, զո՞վ կանչեմ, ի՞նչ ընեմ, որպեսզի տանջահար հոգուս իղձը կատարվի: Կուզեմ խոսիլ հանգուցյալ բարեկամիս հետ, կուզեմ ուղղակի անոր բերնեն լսել ճշգրիտ լուր մը անդրաշխարհի մասին:

Քուրմերը և մոզերը ահ ու դողի մատնվեցան: Գիլգամեշին առջև երկրպագեցին և զարհուրանքի բացականչություններ արձակեցին: Քրմապետներուն երիցագույնը բերանը բանալով, ըսավ Գիլգամեշ արքային.

— Այն, ինչ որ ընել կուզես, սարսափելի է, թեպետ և դուն կը հրամայես: Արդ, լսե, թե ինչ ըսել կուզեմ: Պարիսպներուն հյուսիսը կաճի նվիրական ծառ մը, որուն տերևները միշտ թարմ ու կանաչ են և կեղևը երբեք չի շորնար: Այդ կախարդական ծառին արմատներուն վրա իր բույնը շինած էր սողացող օձը, որ միշտ գործի վրա է: Իմդուզուդ

Թռչունը իր ձագերը թխսած է այդ ծառին կատարին վրա և այդ հաստաբուն ծառին խոռոչին մեջ կը նստի փոթորիկներու վհուկը: Դուն Գիլգամեշ, պետք է որ այդ ծառը արմատախիլ ընես, պսակը կտրես և անոր փայտից մոզական զենք մը շինել տաս, ծառին բուսած տեղը հոր մը փորես, կախարդական կապանքը անոր մեջ զետեղես ու գիշերը լռելյայն դժոխքին նվիրես: Հետո զանազան կախարդանքներով պետք է ոգեկոչես դժոխքին ստվերները, մասնավորապես էնկիդուն ուրվականը և կամ այդ մոզական կապանքովդ ու զրահովդ դուն, Գիլգամեշ, անձամբ մութ աշխարհ խշնես:

Գիլգամեշ քրմապետին խորհուրդներուն անսալով գոտին կապեց, որ հիսուն մինա կը կշռեր, բայց այդ հիսուն մինա ծսնրությունը իրեն համար միայն երեսուն շեքել¹ թվեցավ: Մեկ տաղանդ և հիսուն մինա կշռող ուղմական կացինը վերցնելով, մտածեց. «Սթե ծառին արմատներուն մեջ ապրող և շարունակ արթուն օձուն գլուխը ջախջախեմ կամ ճզմեմ, ծառին գագաթը թառած Իմդուգուդ թռչունը պիտի վախնա և, իր ձագերը առնելով, լեռները պիտի ապաստանի: Փոթորիկներու պատճառ եղող վհուկը, որ այս ծառին խոռոչի մեջ կապրի, պիտի թողու իր որջը, և ես անոնց ամայի բույները պիտի ավերեմ»:

¹ 60 շեքելը 1 մինա է և 60 մինա 1 տաղանդ է, 1 մինա հավասար է մոտավորապես 0,5 կգ:

Գիլգամեշ ծառը բունեց արմատախիլ ըրավ և սաղարթասպակը կտրեց: Երբ ծառը իր ուսին դրած քաղաքի մարդոց բով եկավ, անոնք դարմացան. «Գիլգամեշ, այդ ծառը անշուշտ իրնինի սուրբ դիցուհիին պիտի նվիրե, իբրև գահ կամ մահճակալ»:

Դուրեցազն Գիլգամեշ ատողձագործին տարավ ծառը դենք ու զրահ շինել տալու համար: Հետո հրամայեց, որպեսզի բովանդակ Ուրուկի մեջ ամենուրեք լռություն ու խաղաղություն տիրե մինչև հաջորդ գիշեր: Լռությունը ու խաղաղությունը պահպանելու համար փողոցներուն մեջ հսկիչ դրավ, այնտեղ՝ ուր հիվանդ կար, բժիշկ ղրկել տվավ, այնտեղ ուր մայրեր կային, անոնց զավակներուն համար հաց ղրկել տվավ, ուր քույրեր կային, անոնց հղբայրներուն խմելու ջուր լեցնել տվավ: Ամենուն օգնեց, որպեսզի լռությունը և խաղաղությունը պահպանվի և շխոտվի:

Իրիկունը խոր փոս մը բացավ հողին մեջ, իր գենքն ու զրահը այդ փոսին բերանը դրավ, անոր շուրջ կախարդական շրջանակ մը գծելե հետք, տուն գնաց: Ցայգալուսին մոտեցավ փոսին, որուն շուրջ շրջանակ մը գծած էր և ուղեց ոգեկոշել դժոխքին ստվերները: Այդ պահուն՝ լռության միջեն աղջնակի մը սուր ձայնը ելավ: Առավոտյան դեմ քունին մեջ գեշ երազ մը իրեն սոսկում պատճառած էր: Եվ այդ փոքրիկ աղջկա աղաղակեն Գիլգամեշի կա-

խարդական զենքն ու զրահը տապալեցան դժոխքը
ինկան:

Գիլգամեշ ձեռքը փոսին մեջ խրեց, բայց ձեռքը
չհասավ, և չկրցավ իր կախարդական զենքը դուրս
հանել: Ոտքը երկարեց, դարձյալ չհասավ և չկրցավ
կապանքը դուրս հանել: Գիլգամեշ սանդարամետի
աստվածներուն տաճարին առջև նստավ և ար-
ցունքները հեղեղի պես դժգույն այտերն ի վար վա-
զեցին:

— Ա՛խ, իմ զենքն ու զրահը, ա՛խ իմ կախար-
դական կապանքս, իմ անդիմադրելի ուժ ունեցող
զենքս: Ո՞վ պիտի կրնա զայն գետնին խորեն լույս
աշխարհ բերել: Ո՞վ պիտի կրնա զրահս դժոխքեն
հանել:

Էնկիդուն, կրտսեր եղբայրն ու ընկերը, խորխո-
րատեն ձայն տվավ:

— Գիլգամեշ, տեր իմ, ինչու արցունք կը թա-
փես: Զենքդ դարձյալ գետնին տակեն վեր պիտի
բերեմ: Գիլգամեշ, լսե, սակայն, թե ի՞նչ կուզեմ
ըսել քեզի: Եթե գետնին խորը, մութ աշխարհ կու-
զես իջնել, պետք չէ, որ տաճար մտնես, պետք չէ,
որ մաքուր զգեստ հագնիս, այլապես մեռյալները
կը ճշան, քեզ թշնամի կարծելով: Պետք չէ, որ
անոթին մեջն լավ օծանելիք առնես և մարմինդ
օծես, այլապես անոնք շուրջդ կը հավաքվին, երբ
անոր հոտը առնեն: Պետք չէ, որ աղեղդ գետնին
դպցնես, այլապես կը շրջապատեն քեզ անոնք,

որոնք աղեղնահար եղած են, պետք չէ ձեռքդ իշխանական գավազան առնես, այլապես հոգիները քեզ տեսնելով դող կելլեն: Պետք չէ, որ ոտնաման հագնիս, գետնին տակը պետք չէ, որ աղմուկ հանես, սիրածդ կինդ պետք չէ, որ համբուրես, եթե վշտացած ես զավակեդ, պետք չէ, որ զայն ծեծես, այլապես դժոխային թշվառությունը քեզ կը պատել: Նինազուի հավետ լուռ, հավետ խաղաղ մայրը, որ այստեղ կը հանգչի, մերկ է և իր գավաթանման ստինքները ամոթից զերծ են¹:

Սակայն Գիլգամեշ աստծու սուրբ տաճարը մտավ, մարուր զգեստ հագավ—մեռյալները ճշացին, զինքը թշնամի կարծելով, անոթին մեջեն լավ օծանելիք առավ ու մարմինը օծեց, մեռյալներուն հոգիները հոտ առնելով շուրջ հավաքվեցան: Աղեղը գետնին դպցուց, անոնք, որ աղեղնահար եղած էին, զինքը շրջապատեցին. գավազանը ձեռքը առավ, հոգիները դող ելան: Ունաման հագավ, քայլած ատեն գետնին տակը աղմուկ հանեց, սիրած կինը համբուրեց և այն կինը, որուն դեմ բարկացած էր, ծեծեց: Իր սիրած զավակը համբուրեց, ու այն տղան, որուն դեմ բարկացած էր, ծեծեց և ահա դժոխային թշվառությունը զինքը պատեց: Նինազուի մայրը հավետ լուռ, հավետ խաղաղ հոս մերկ

¹ Հոս ըսել կուզե թե հանգուցյալը հողին տակ միշտ մերկ է, բայց այսպանելի կամ ամոթալի չէ:

կը հանգչի և իր գալաթանման ստինքները ամոթե
զերծ են: Էնկիդուն գետնին տակեն ուզեց վեր ելլել:
Ոչ Նամտարը, և ոչ ալ Ասակուն բռնեցին զինքը—
գերհզոր հողը բռնեց զինքը: Ներգալի անողոք պա-
հապանը շքոնեց զինքը—գերհզոր հողը բռնեց զին-
քը: Ան շինկավ պատերազմին դաշտին վրա—գեր-
հզոր հողը բռնեց զինքը:

Արդ, լալագին հեծեց Գիլգամեշ, նինսունի որդին,
էնկիդուի համար: Էկուրը՝ է՛լիլի տաճարը գնաց.

— Լսե ձայնս, երկնավոր հայր էնլիլ. զենքը
դժոխքը ինկավ, մոգական զենքս փոսին մեջ ին-
կավ. մոգական կապանքս հողին մեջ ինկավ: Էն-
կիդուն, ընկերս զայն վեր հանելու գնաց, հողը
բռնեց զինքը: Ոչ Նամտարը և ոչ ալ Ասակուն
բռնեցին զինքը—գերհզոր հողը բռնեց զինքը: Ան
պատերազմին դաշտին վրա շինկավ—գերհզոր հո-
ղը բռնեց զինքը:

Դիցահայր էնլիլ բառով մը իսկ շպատասխանեց
Գիլգամեշին:

Գիլգամեշ հետո լուսինի աստծուն, Սինին դի-
մեց.

— Հայր երկնավոր, Սին, կապանքս հողին մեջ
ինկավ, զրահս հողին մեջ ինկավ, էնկիդուն զայն
վեր բերելու գնաց՝ հողը բռնեց զինքը: Ոչ Նամ-
տարը, և ոչ ալ Ասակուն բռնեցին զինքը—գերհզոր
հողը բռնեց զինքը, ներգալի անողոք պահապանը
շքոնեց զինքը—գերհզոր հողը բռնեց զինքը: Ան

շինկավ պատերազմի դաշտին վրա—գերհզոր հողը բռնեց զինքը:

Հայր Սինն ալ անոր շպատասխանեց և Գիլգամեշ վերջապես գթառատ էա դիցահոր դիմեց.

— Հայր էա, զենքս հողին մեջ ինկավ: Էնկիդուն զայն վեր բերելու գնաց՝ հողը բռնեց զինքը: Ոչ նամտարը և ոչ ալ Ասակուն բռնեցին զինքը—գերհզոր հողը բռնեց զինքը: Ներգալի անողոք պահապանը շրոնեց զինքը—գերհզոր հողը բռնեց զինքը: Ան շինկավ պատերազմի դաշտին վրա—գերհզոր հողը բռնեց զինքը:

Զուրբերու խորությանց աստվածը՝ էան Գիլգամեշի խոսքերը լսելով ըսավ Ներգալին՝ առնական դյուցազնին.

— Անմիջապես գետինը փոս մը բաց, որպեսզի էնկիդուն ուրվականը հողին ընդերքեն դուրս գա և իր սրտակից եղբորը պատմե մութ աշխարհին կարգ ու կանոնը:

Առնի դյուցազնը Ներգալ, գեհենի տերը, մտիկ ըրավ, գետինը վայրկենապես փոս մը բացավ և էնկիդուն ուրվականը հովի նման հողին ընդերքեն դուրս եկավ: Եվ նորեն ու նորեն գրկվեցան երկու սրտակից ընկերները: Հետո իրարմե խորհուրդ առին, խորհուրդ տվին և հարցուփորձ ըրին.

— Պատմե ինձի, բարեկամս, ըսե ինձի, բարեկամս, պատմե անդրաշխարհին կարգ ու կանոնը, որ տեսար:

— Ես այդ քեզ շեմ ըսեր, բարեկամս շեմ ըսեր: Եթե անդրաշխարհին կարգ ու կանոնը, որ տեսա, քեզի ըսեմ, պիտի նստիս ու արտասովես:

— Ուրեմն պիտի նստեմ ու արտասովեմ:

— Մարմինս, որուն դուն ուրախ սրտով կը փարվեիր, ճճիները կուտեն հին հագուստներու պես: Մարմինս, որուն դուն ուրախ սրտով կը փարվեիր, փետցավ փոխվեցավ և փոշիով լեցվեցավ:

Եվ այն ատեն ըսավ Գիլգամեշ՝ փոշիին մեջ կծկվելով, այն ատեն ըսավ Գիլգամեշ արքան, փոշիին մեջ կծկվելով.

— Իզուր անցան բոլոր ճիգերս ու շարշարանքներս, իզուր փնտրեցի հավերժական կյանքը աշխարհիս վրա: Մահվան ու աշխարհիս կարգն ու կանոնը անգութ են: Ամենքիս վիճակված է հպատակիլ ճակատագրին, հող դառնալ և խառնվել փոշիին, կորսվիլ Իրկալի տան խավարին մեջ:

Գիլգամեշ տակավին հարցուց իր բարեկամին.

— Պատմե ինձի բարեկամս, հոգիներու մասին, որոնք վարը՝ դժոխքը կապրին:

— Ամենքն ալ նույն վիճակին ենթարկված են, լույսին երեսը շեն տեսներ, մութին մեջ կորսված են, թռչուններու պես փետուրներե հագուստ հագած են և իրենց սնունդը փոշի և ցեխ է:

— Պատմե ինձի, բարեկամս, վարը ո՞վ տեսար, ինչպիսի՞ մահով են մահացել, ի՞նչ կընեն վարը:

— Անթիվ հոգիներ տեսա վարը, անդրաշխարհը, որոնց ճակատագիրը իրենց մահով կորըշվի:

— Տեսա՞ր այն, որ կրակեն մեռավ:

— Այո, տեսա, անկողնին վրա փռված՝ միայն ջուր կխմե:

— Տեսա՞ր այն, որ ճակատամարտի մեջ սպանված է:

— Այո տեսա, հայրը ու մայրը գլուխը բռնած են և կինը վրան խոնարհած է:

— Տեսա՞ր այն, որուն դիակը դաշտը նետվեցավ:

— Այո տեսա, անոր հոգին դժոխքի մեջ հանգիստ չունի:

— Տեսա՞ր այն մարդը, որուն հոգին խնամող չունի:

— Այո տեսա, կճեկին միջի մնացորդները և փողոցը նետված փերթիկները ստիպված է ուտել:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Դյուցազնավեպիւն մեջ հանդիպող դիցաբանական
և աշխարհագրական անուններու

Ադադ— ամպրոպի աստվածը, որ Անուի որդին էր:

Այա— դիցուհի, արև-աստված Շամաշի կինը:

Անշան— հին էլամական քաղաք մըն էր, որ ներ-
կայիս Իրանի արևմտյան կողմը կը
գտնվի: Ծանոթ էր նաև Անզան անունով:

Անու— երկնքի աստվածը, աստվածներու հայրը,
Ուրուկ քաղաքի հովանավորողը:

Անհունակի— դժոխքին կամ հողին ոգիները կամ
աստվածները կը համարվին:

Անտոմ— Անու դիցահոր կինը, Իշտարի մայրը:

Ասակու— դժոխքի ոգին:

Արուրու— դիցուհի, արարիչ բոլոր էակներու:

Բելետ-սերի— դիցուհի, երկրիս (սանդարամետի)
գրագրուհին, որ մեռնողներուն մեղքերուն
համեմատ պատիժ կուտար:

- Դոմոնդի (Թամոնդ) — տարիե տարի ծաղկող ու
 թառամող բուսականութեան աստվածը:
 Դոմոնդի եղած է Իշտար դիցուհու ամուսիններից մին:
- էա — շուրի և ծովու աստվածը, որ իր էութեամբ
 նեպտունի (ծովու աստված) կը համապատասխանե:
- էաննա — Անուի և Իշտարի տաճարը, որ կը գտնվեր
 Ուրուկի մեջ:
- էնկիդու — «Գիլգամեշ» դյուցազնավեպին գլխավոր
 հերոսներեն մին:
- էկուր — էնլիլ աստծու տաճարը Նիսպուր քաղաքում:
- էնլիլ — երկրի գլխավոր աստվածը:
- էննուզի — անդրաշխարհի աստված, կոչվում էր
 նաև Ներգալ, Իրկալլա:
- էտանա — հերոսի մը անուն. էտանա կիշ քաղաքին
 թագավորներեն մին եղած է:
- էրա — դիցաբանական անուն. թերևս հիվանդութեան
 թշուր անաջ բերող տեսիլած մը:
- էրագալ — սանդարամետի աստվածներեն մին:
- էրեդու — Միջագետքի ամենահին քաղաքին անունը:
 էա աստծու պաշտամունքի վայրը:
 Ժամանակին ծովեզերքը կը գտնվեր, երբ
 Եփրատը և Տիգրիսը տակավին իրարու
 միացած չէին:

էրեշկիգալ— գետնի (դժոխքի) թաղուհին՝ ներգալի
կինը:

Իգիգի— երկնային աստվածություններ:

Իմդուգուդ— առասպելական թռչունի մը անունն է:

Արևելյան առասպելներու և հրաշապա-
տում հեքիաթների մեջ հիշատակված
Հազարան բլբուլի և Զմրուտի (Զմրուխտի)
համապատասխանող թռչուն մըն է թերևս:

Իշխարա— Իշտար դիցանունին մեկ տարբե-
րակն է:

Իշտար— սիրո և արգասավորության դիցուհին էր,
Անուի դուստրը:

Իշուլանու— Իշտարի հոր՝ Անուի այգեպանին ա-
նունն է:

Իրկալա— (նեգալ) սանդարամետի աստվածը:

Իրնինի— Իշտարի (կամ Իշխարա) դիցանունին
մեկ տարբերակն է:

Լուգալբանդա— Գիլգամեշի տոհմական նախնիի և
աստծու անունը:

Խանիշ— ամպրոպի և փայլակի աստված. Ադադի
սուրհանդակներեն:

Խումբարա— (Խուլավա) հին զրույցներու և հերո-
սավեպերու մեջ հիշատակված ահավոր
ճիվաղի անունը: Խումբարա՛: ահազդու
պահապան էր Մայրի՛նէրու լեռան, որ
բնակավայրն էր աստվածներուն:

Կիշ— Երկրի և քաղաքի անունը: Բաբելոնի հին քաղաքներեն մին, որ Յ-րդ հազարամյակին մեր թվ. առաջ մեծ նշանակութիւն ունեցած է:

Մամմետում— դիցուհի, որ անդրաշխարհի մեջ մարդու ճակատագիրը կորոշեր:

Մաշու— «Գիլգամեշ» դյուցազնավեպին մեջ հիշատակված լեռան անունը, որ Մասիսը կը հիշեցնէ:

Նամտար— դժոխքի շար ոգի, դև:

Ներգալ— մահվան և սանդարամետի աստվածը, էրեշկիգալի ամուսինը:

Նինազու— Սանդարամետի աստվածներեն մին:

Նինիգիկու-էա— ծովու և ջրերու աստված էայի անունին բաղադրյալ մեկ ձևն է:

Նինսուն— Գիլգամեշի մոր անունն է:

Նինուրտա— պատերազմի և որսորդութեան աստվածը, էնլիլի որդին:

Նիպպուր— քաղաք Միջագետքում: «Գիլգամեշ» էպոսեն երկու պատասուիկներ սումերերեն լեզվով Նիպպուրի մեջ գտնված է:

Նիսարա— արմտիքի դիցուհիին անունն է:

Նիսիր— լեռ, որ կը գտնվի արդի Մոսուլի մոտերը, քրդական շրջանին մեջ: Ուտնապիշտիմի տապանը այս լեռան վրա հանգչած էր:


Շամաշ— արև-աստված, որ սեմական ցեղերու կողմն պաշտված է իբրև արդարութեան

- աստված և աստված-դատավոր: Եղած է նաև Գիլգամեշի պաշտպան աստվածը:
- Շուլլատ**— ամպրոպի և փայլակի աստված, Ադադի սուրհանդակներն մին:
- Շուրիպպակ**— հին քաղաք Եփրատի ափին, Ուտնապիշտիմի ծննդավայրը:
- Ուբար-Տուտու**— Շուրիպպակ քաղաքի թագավորը, Ուտնապիշտիմի հայրը:
- Ուտնապիշտիմ**— բարելոնացիներու նահապետը, որ ջրհեղեղը վերապրեցավ, պատմեց նախաջրհեղեղյան պատմությունը Գիլգամեշին: Կհամապատասխանե Աստվածաշնչի Նոյ նահապետին:
- Ուրշանաբի**— Ուտնապիշտիմի և Գիլգամեշի նավավարին անունը:
- Ուրուկ**— Գիլգամեշի մայրաքաղաքը, աստվածաշնչի էրեխը, ներկայիս Վարկա կոչված ավերակաբլուրին մեջ կը գտնվի: 3-րդ հազարամյակին եղած է Եփրատի ափը, բայց այս գետը հետո փոխելով իր ընթացքը, մոտավորապես 25—30 կմ հեռացած է Ուրուկեն, որ կը գտնվի այսօր անապատին մեջ:
- Պուզուր-Ամուրի**— Ուտնապիշտիմի նավավարին անունն է:
- Սիդուրի**— աստվածների մատուլակ, դիցուհի:

Սիլիլի— «մատակ ձի», «զամբիկ», «ճայիկ» կը
նշանակե թերևս և կամ մատակ ձիու ա-
նուն է:

Սին— լուսնի աստված:

Սումուկան— արոտավայրերու և վայրի անասուն-
ներու պաշտպան սաստիածը:



ԲՈՒՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի կողմից	5
Քանի մը խոսք «Գիլգամեշ» դյուցազներգության մասին	6
Առաջին պնակիտ	18
Նրկրորդ պնակիտ	27
Նրրորդ պնակիտ	38
Չորրորդ պնակիտ	43
Հինգերորդ պնակիտ	48
Վեցերորդ պնակիտ	52
Յսթներորդ պնակիտ	60
Ութերորդ պնակիտ	67
Իններորդ պնակիտ	72
Տասներորդ պնակիտ	78
Տասնամեկերորդ պնակիտ	91
Տասներկուերորդ պնակիտ	105
Բառարան	115



Պատ. խմբագիրներ՝ Հ. Ա. Համբարձումյան,
Գ. Խ. Սարգսյան
Հրատ. խմբագիր՝ Ս. Ա. Անաստասյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Նկարչական ձևավորումը՝ Կ. Հ. Յուրուջյանի
Սրբագրիչ՝ Ս. Ա. Գևորգյան

ՎՖ 06023, պատվեր 3, հրատ. № 2135, ԽՀԽ 793, տիրած 5000

Հանձնված է արտադրության 30/1 1963 թ.:

Ստորագրված է տպագրության 9/IV 1963 թ.:

Տպագրական 7,63 մամ. + 4 ներդիր, հրատ. 3,2 մամ.,

թուղթ $70 \times 92 \frac{1}{32}$:

Գինը 22 կոպ.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության Էջմիածնի տպարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040462

